



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԴԱՎԻԹԻ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Աշխատուժի միգրացիան միջազգային տնտեսական
հարաբերությունների համակարգում (ՀՀ օրինակով)

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար

տնտեսագիտության դոկտոր, դոցենտ՝

Դիանա Ռոբերտի Գալոյան

ԵՐԵՎԱՆ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄ	
1.1 Աշխատուժի միջազգային միգրացիայի վերլուծության տեսական մոտեցումները	9
1.1.1 Աշխատուժի միգրացիայի վերաբերյալ տնտեսագիտական տեսությունները.....	18
1.2 Աշխատուժի միջազգային միգրացիոն հոսքերի արդի ուղղությունները	26
1.3 Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա	37
ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	
2.1 Աշխատուժի միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները և միգրացիոն հոսքերի կարգավորման մեխանիզմները.....	46
2.2 Աշխատուժի միգրացիայի պետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորումը	59
ԳԼՈՒԽ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ.	
3.1 ՀՀ միգրացիոն իրավիճակի բնութագիրը	85
3.2 Աշխատուժի միգրացիայի դրական և բացասական կողմերը ՀՀ-ում..	92
3.3 Միջպետական միգրացիայի կարգավորումը և դրա կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ-ում.....	107
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	119
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	127
ՀԱՎԵԼՎԱԾ	135

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: XXI դարի սկզբին գլոբալացման գործընթացների ազդեցության ներքո տեղի ունեցան համաշխարհային տնտեսության զարգացման բնույթի և իրավիճակի արմատական փոփոխություններ¹: Համաշխարհային տնտեսության վերազգայնացումը, հարուստ և աղքատ երկրների միջև եկամտի բևեռացման խորացումը բնակչության միգրացիոն գործընթացներին հաղորդել են գլոբալ բնույթ: Առավել ուժգնանում է երկրների միջև փոխկախվածությունը, որն էլ հանգեցնում է բնակչության միջպետական տեղաշարժերի մասշտաբների էլ ավելի մեծացմանը: Էականորեն փոխվել են նաև աշխատուժի միգրացիոն գործընթացները ծնող պատճառներն ու հետևանքները, ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները: Այսօր աշխատուժի միջազգային միգրացիան առաջին հերթին պայմանավորված է աշխարհի տարբեր մասերում անհավասար հնարավորություններով, ինչը միգրացիայի դերը համաշխարհային տնտեսության զարգացման գործում էլ ավելի է մեծացնում: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ XXI դարը կարելի է համարել «գլոբալ միգրացիայի դարաշրջան»²: Աշխարհի շատ ժողովուրդների նման հայերը նույնպես ունեն միգրացիայի հին ավանդույթներ: Անհիշելի ժամանակներից սկսած՝ հայերին բռնությամբ տեղահան են արել իրենց պատմական հայրենիքից: Բնակչության զանգվածային տեղաշարժեր եղել են հատկապես XIX և XX դարերում³: Մեր օրերում արտագաղթի խնդիրը շարունակում է մնալ խիստ արդիական: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանն ապրել է միգրացիոն մի քանի ալիքներ՝ պայմանավորված տարաբնույթ գործոններով և դիմագրավել ինտենսիվ միգրացիոն գործընթացների ազդեցությամբ բազմաբնույթ մարտահրավերների: Միգրացիոն գործընթացները ՀՀ-ում վերջին տարիներին այնպիսի չափերի են հասել և այնպիսի ձևեր են ընդունել, որ սկսել են ազդել երկրի տնտեսական զարգացման, բարոյահոգեբանական մթնոլորտի, սոցիալական կայունության, երկրի անվտանգության և ժողովրդագրական իրավիճակի վրա: Բնակչության արտագաղթի

¹ Տե՛ս International Labour Organization International Organization for Migration Office of the United Nations High Commissioner for Human Rights (UNHCR) "International Migration Racism Discrimination and "Xenophobia", 2001 <http://www.ilo.org/public/english/protection/migrant/download/wcar.pdf>

² Տե՛ս С.В.Рязанцев, М.Ф.Ткаченко. "Мировой рынок труда и международная миграция", Москва, 2010.

³ Տե՛ս Վ.Ե.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2004, էջ 308:

կանխումը այն ծրագրային հիմնախնդիրն է, որի կենսագործումը մեր երկրի համար ունի օրհասական նշանակություն:

Անվիճելի է, որ վերջին տարիների ահագնացող չափերի արտագաղթը արդյունք է նախ հանրապետությունում տիրող սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի, ապա հասարակության երկու բևեռացող խավերի միջև տիրող սոցիալական լարվածության և վաղվա օրվա նկատմամբ հուսալքության: Եթե երկրաշարժի և դարաբաղյան հակամարտության, վառելիքաէներգետիկ ճգնաժամի, տնտեսական շրջափակումների, անցումային ժամանակաշրջանի բարդություններով պայմանավորված, աննախադեպ չափերի հասնող գործազրկությունը, սոցիալական լարվածությունը և բևեռացվածությունը օբյեկտիվորեն ստիպում էին մարդկանց արտագաղթել, ապա վերջին տասը տարիներին մեծ չափերի հասնող միգրացիայի համար էական օբյեկտիվ պատճառներ գտնելը դժվար է:

Արտագաղթի բացասական հետևանքները, ինչ խոսք, ակնհայտ են. դատարկվող բնակավայրեր, «ուղեղների» արտահոսք, ժողովրդագրական խեղումներ՝ քայքայվող ընտանիքներ, կին-տղամարդ հարաբերակցության անհավասարակշռվածություն և վաղվա նկատմամբ ունեցած անվստահության հետևանքով ամուսնության ցուցանիշների, ծնելիության և բնական աճի զգալի նվազում: Խաթարվում են բնակչության սեռատարիքային համամասնությունները: Արհեստականորեն մեծացել են երեխաների և հատկապես ծերերի տեսակարար կշիռները. նվազել է ակտիվ աշխատանքային ու վերարտադրողական տարիքի բնակչության տեսակարար կշիռը: Զանգվածային արտագաղթը ուղեկցվում է ֆինանսական և մտավոր կապիտալի զգալի ծավալների արտահանմամբ, փոշիացվում է երկրի հիմնական ներդրումային գրավչության գործոն հանդիսացող մարդկային կապիտալը և ողջ գիտատեխնիկական ներուժը⁴:

Նշված հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծման ուղիների բացահայտումը պայմանավորում են ատենախոսության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Աշխատուժի միգրացիայի առանձին հիմնախնդիրների վերլուծության

⁴ Տե՛ս Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով/ Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան; Մասն. խմբ.՝ Ատոմ Վարդանյան. - Եր.: ԵՃՇՊՀ, 2012. Մաս 2.- էջ 210:

կապակցությամբ հետազոտություններ կատարվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական տնտեսագետների կողմից: Այդ առումով արժե հիշատակել Զ. Քեյնսին, Է. Հեքշերին, Բ. Օհլինին, Ռ. Հարրոդին, Է. Դոմարին, Ռ. Քեյվզին, Դ. Սալվադորին, Զ. Դաննինգին, Ա. Լյուիսին, Ա. Պորտեսին, Մ. Թափինոսին, Լ. Թուրոուին, Զ. Սայմոնին, ռուս տնտեսագետներ Ա. Կիրենկին, Ե. Ավդոկուշինին, Ե. Ակոպովային, Ա. Եվդոկիմովին, Ս Դյատլովին, Բ. Պրիկինին, Կ. Սեմյոնովին, Ի. Սպիրիդոնովին, Ռ. Խասբուլատովին, Ի.Ֆամինսկուն, հայ գիտնականներ Վ. Խոջաբեկյանին, Զ. Թադևոսյանին, Հ. Բագրատյանին, Թ. Թորոսյանին, Ա. Դարբինյանին,, Դ. Հախվերդյանին, և այլոց:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնախնդիրների բացահայտումը և այդ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների ու մեխանիզմների առաջադրումը: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հետազոտել աշխատուժի միջազգային միգրացիայի էությունը, դրսևորման ձևերը, արդի առանձնահատկությունները և հիմնական տեսությունները,
- գնահատել աշխատուժի միջազգային միգրացիոն գործընթացների դինամիկան և վերջինիս ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա,
- քանակական և որակական տվյալների հիման վրա գնահատել աշխատուժի միգրացիոն հոսքերի ազդեցությունը դոնոր և ռեցիպիենտ երկրների վրա,
- հետազոտել աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորման օրենսդրական հիմքերն ու դրանց կիրառման հիմնական առանձնահատկությունները ՀՀ-ում,
- ՀՀ աշխատուժի միգրացիոն գործընթացների դինամիկայի հետազոտման արդյունքում և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրման միջոցով գնահատել արտաքին աշխատանքային միգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա,
- ՀՀ-ում աշխատուժի միջազգային միգրացիային վերաբերող օրենսդրական

դաշտի հետազոտության արդյունքում բացահայտել օրենսդրական անհապաղ լուծում պահանջող խնդիրները, հիմնավորել այդ խնդիրների լուծման հիմնական ուղիներն ու մեխանիզմները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետությունում աշխատուժի միգրացիայի հետ կապված հիմնախնդիրներն են՝ աշխատանքային էմիգրացիայի խնդիրների խորացված ուսումնասիրությամբ: Հետազոտության օբյեկտը Հայաստանում բնակչության միգրացիոն գործընթացն է՝ վերջինիս պետական կարգավորման և պետական քաղաքականության առանձին ուղղություն դարձնելու տեսանկյունից:

Աշխատանքի տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են ծառայել համընդհանուր գիտական մեթոդները՝ դիալեկտիկական, պատմական, տրամաբանական, համակարգային մոտեցման, համեմատական վերլուծության, գրաֆիկական և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս աշխատուժի շուկայում տեղ գտած գործընթացները դիտարկել դինամիկայի մեջ, բացահայտել այստեղ տեղ գտած հակասությունները և բնորոշ առանձնահատկությունները:

Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները և գիտական հոդվածները, ՀՀ օրենքները և կառավարության որոշումները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են վիճակագրական տվյալներ: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության և այլ կառույցների պաշտոնական նյութերը:

Տեսական վերլուծությունների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել տեսությունների տնտեսագիտական ու մեթոդաբանական առավելություններին և թերություններին, գլոբալացման ժամանակակից պայմաններում կարևորվել է աշխատուժի միգրացիայի գործընթացներում երկրների շահերից բխող առանձնահատ-

կությունների ուսումնասիրությունը:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Ատենախոսությունում կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Աշխատուժի միգրացիայի համաշխարհային դինամիկայի, ինչպես նաև աշխարհագրական, ժողովրդագրական և մասնագիտական կառուցվածքի ուսումնասիրության հիման վրա գնահատվել է աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսությունների վրա:
- Աշխատուժի միգրացիայի միջազգային, տարածաշրջանային և պետական կարգավորմանն ուղղված հիմնարար փաստաթղթերի վերլուծության հիման վրա առաջադրվել են ռազմավարական առաջնահերթությունները (էմիգրացիոն հոսքերի համակարգային վերլուծություն, ուղեղների արտահոսքի հետևանքների գնահատում և օրենսդրական կարգավորում և էմիգրացիայի սահմանափակման համար ենթակառուցվածքների ձևավորում), որոնք կարևոր են, ինչպես էմիգրանտներին աշխատանքով ապահովման, այնպես էլ երկրում այդ երևույթի սահմանափակման նպատակով պայմանների ստեղծման համար:
- Ժամանակային շարքերի և տնտեսամաթեմատիկական մոդելավորման միջոցով գնահատվել է «զուտ ընթացիկ տրանսֆերտներ - ՀՆԱ - մեկ շնչի հաշվով ՀՆԱ» կախվածությունը, ինչպես նաև, այսպես կոչված, «տրանսֆերտային ասեղի» ազդեցությունը ՀՀ տնտեսական անվտանգության և բնակչության բարեկեցության վրա:
- Առաջադրվել և հիմնավորվել են այն օրենսդրա-իրավական գերակայությունները, այդ թվում՝ միջազգային կոնվենցիաներին ու բազմակողմ համաձայնագրերին միանալը, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի ընդունումը, որոնք հնարավորություն կընձեռեն արտաքին աշխատանքային միգրացիայի առավելությունները դիտարկել տնտեսության մրցունակության

բարելավման առաջնահերթությունների համատեքստում:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսությունում ՀՀ միգրացիոն գործընթացների ազդեցության քանակական և որակական գնահատումները կարող են օգտակար լինել հետագայում ավելի արդյունավետ միգրացիոն քաղաքականության մշակելու համար: Բացի այդ, ՀՀ աշխատուժի միջազգային միգրացիայի բացասական հետևանքները, որոնք վերհանվել են ատենախոսությունում, կարող են հիմք հանդիսանալ ավելի մանրազնին վերլուծության համար և նպաստել այդ հետևանքների մեղմման ուղղությամբ ավելի արդյունավետ քաղաքականության մշակմանը:

Միևնույն ժամանակ, ատենախոսությունում ներկայացված տնտեսամաթեմատիկական վերլուծությունը, որը թույլ տվեց բացահայտել ՀՀ աշխատուժի միջազգային միգրացիայի և ՀՆԱ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ընթացիկ տրանսֆերտներ կախվածությունը ու հաստատեց միգրացիոն կարգավորման անհրաժեշտությունը ՀՀ-ում, կարող է օգտակար լինել բուհական համակարգում, մասնավորապես «Աշխատուժի միջազգային միգրացիա» և «ՀՀ արտաքին տնտեսական կապեր» առարկաների շրջանականներում: Հետազոտության մեջ իրականացված ուսումնասիրությունները և ներկայացված առաջարկությունները տեսական և գործնական նշանակություն ունեն և կիրառության դեպքում կարող են իրական հիմք հանդիսանալ ՀՀ արտաքին աշխատանքային միգրացիոն միջավայրի բարելավման և հոսքերի կարգավորման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են ատենախոսության ուսումնասիրության շրջանակներում հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում: Աշխատանքի հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստում, ազգային մի քանի գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Աշխատանքի ծավալն առանց հավելվածի կազմում է 134 էջ:

ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄ

1.1 Աշխատուժի միջազգային միգրացիայի վերլուծության տեսական մոտեցումները

Դարերի ընթացքում մարդիկ տեղափոխվել են մի երկրից մյուսը ավելի լավ կյանք գտնելու կամ երբեմն պարզապես գոյատևելու համար: Նրանք ստիպված են եղել փախչել աղքատությունից, բնական աղետներից, պատերազմներից կամ հետապնդումներից: Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանադրության «Ֆիլադելֆիայի հռչակագիր» հավելվածում ամրագրվում է, որ բոլոր մարդիկ, անկախ ռասայից, հավատքից և սեռից, իրավունք ունեն ձեռք բերելու իրենց նյութական բարեկեցությունը և հոգևոր զարգացումը ազատության ու արժանապատվության, տնտեսական անվտանգության և հավասար հնարավորության պայմաններում⁵:

«Միգրացիան կամ երկրի սահմանի հատումը բնակչության տեղաշարժի գործընթաց է: Միգրացիան ընդգրկում է մարդկանց ցանկացած տեղաշարժ՝ անկախ դրա տևողությունից, կազմից ու պատճառներից. այն ընդգրկում է փախստականների, տեղահանված անձանց և տնտեսական միգրանտների տեղաշարժերը»⁶:

Աշխատուժի միջազգային միգրացիան աշխատանք փնտրելու նպատակով մեկ տարուց ավել ժամկետով մեկ երկրից մեկ այլ երկիր աշխատունակ բնակչության վերաբնակեցումն է, որը հիմնականում պայմանավորված է տնտեսական բնույթի խնդիրներով⁷:

Բնակչության միգրացիան բարդ, բազմաբնույթ և դինամիկ գործընթաց է⁸: Աշխատունակ մարդիկ իրենց աշխատանքի կիրառման առավել շահավետ ոլորտներ

⁵ Տե՛ս Լ.Դեմարե,ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրո (ACRTAV), Աշխատանքի միջազգային գրասենյակ, «Արժանապատիվ աշխատանք որոնելիս, աշխատանքային միգրանտների իրավունքները», Երևան, 2010թ., էջ 61:

⁶ Տե՛ս ՄԱԿ-ի «Միջազգային միգրացիոն իրավունք: Միգրացիայի բնագավառում գիտաբանների բառարանից», IOM “International Migration Law.Glossary on Migration 2004” page 41 http://www.iom.int/jahia/webdav/site/myjahiasite/shared/shared/mainsite/published_docs/serial_publications/Glossary_eng.pdf

⁷ Տե՛ս Ա.И Евдокимов «Международные экономические отношения » ,Москва 2014г , стр. 477

⁸ Տե՛ս С.В Рязанцев, М.Ф.Ткаченко"Мировой рынок труда и международная миграция"Москва, 2010, стр. 195.

են փնտրում ոչ միայն ազգային տնտեսության շրջանակներում, այլև ամբողջ համաշխարհային տնտեսության մասշտաբով: Այսպիսով՝ երկրների միջև տնտեսական կապերի ուժեղացումն ու սոցիալ-քաղաքական այլ պատճառները պատմականորեն ձևավորել են մի երկրից դեպի մյուսն աշխատունակ մարդկանց մշտական արտահոսք և ներհոսք, որը ստացել է «աշխատուժի միջազգային միգրացիա» անվանումը:

Աշխատուժի միջազգային միգրացիան տնտեսական հարաբերությունների առավել բարդ տարրերից է: Շատերի համար աշխատանքի նպատակով տեղաշարժվելը կարող է լինել օգտակար և դրական փորձ, բայց անընդունելի մեծ քանակությամբ միգրանտների համար աշխատանքային պայմաններն անարժանապատիվ են և շահագործող: Դա կարող է արտահայտվել հարկադիր աշխատանքով, ցածր աշխատավարձով, վատ աշխատանքային միջավայրով, սոցիալական պաշտպանվածության փաստացի բացակայությամբ, իրավունքների ոտնահարմամբ, խտրականությամբ, ինչպես նաև սոցիալական մեկուսացմամբ, երբ միգրանտներից խլում են մեկ այլ երկրում աշխատելու պոտենցիալ օգուտները⁹:

Միգրացիոն հոսքերը ձևավորվել են դեռևս քաղաքակրթության արշալույսին, սակայն ավելի մեծ զարգացում են ապրել նախկին գաղութատերերի և նրանց գաղութների միջև, որովհետև ավելի վաղ հաստատված մշակութային, լեզվական, վարչական, ներդրումային, տրանսպորտային ու հաղորդակցության կապերը գաղութային ժամանակաշրջանի ընթացքում հնարավորություն են ունեցել զարգանալ՝ առանց հանդիպելու արտաքին մրցակցությանը, ինչն իր հերթին հանգեցրել է ուրույն վերազգային շուկաների ու մշակութային համակարգերի ձևավորմանը: Աշխատուժի միջազգային միգրացիան զանգվածային բնույթ է կրել՝ սկսած XV դարի 40-ական թվականներից, երբ սևամորթ ստրուկների աշխատանքը շահագործելու նպատակով Աֆրիկայից նրանց տեղափոխել են եվրոպական երկրներ: XIX դարի կեսերից աշխատուժի միգրացիան ձեռք բերեց միջազգային բնույթ: XIX դարի 40-ական թթ. կարտոֆիլի «քաղցի» հետևանքով տեղի ունեցավ էմիգրացիոն մեծ ալիք՝ Իռլանդիայից դեպի ԱՄՆ¹⁰: 1980-ականներին Իտալիայից և Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներից

⁹ Տե՛ս "Towards a fair deal for migrant workers in the global economy" International Labour Conference 92nd Session, Geneva 2004.

¹⁰ Տե՛ս Е. Ф. Авдокушин, «Международные экономические отношения», учебник, Москва 1999, стр 151

բնակչության զգալի արտահոսք տեղի ունեցավ դեպի ԱՄՆ, որը կապված էր եվրոպական հացահատիկի գնի անկման հետ¹¹:

XX դարի 20-ական թթ. միգրացիոն գործընթացները ակտիվացան, ինչը պայմանավորված էր հետպատերազմյան դժվարություններով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայից դեպի ԱՄՆ միգրացիոն հոսքերի 3 ալիք տեղի ունեցավ՝ առաջին՝ «ուղեղների արտահոսք» դեպի Հյուսիսային Ամերիկա, երկրորդ՝ փախստականների հոսք Հունգարիայից (1956թ.), Վիետնամից (1974–75թթ.) և Կուբայից (1980թ.), երրորդ՝ աշխատուժի ներհոսք Մեքսիկայից, Կարիբյան ավազանի երկրներից և Ասիայից: 1960-ական թթ.-ից միգրացիոն գործընթացները ակտիվացան ԵՄ երկրներում: Մինչև այսօր էլ էմիգրացիոն հոսքերը այնտեղ չեն դադարում նախկին սոցիալիստական երկրներից, այդ թվում՝ Հայաստանից ¹² : Հարկ է նշել, որ պատճառները գլխավորապես քաղաքական և տնտեսական բնույթ են կրում:

Համաշխարհային տնտեսության համակարգում ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների, կապիտալի, տեղեկատվության համաշխարհային շուկաների կողքին ձևավորվել է նաև աշխատուժի համաշխարհային շուկան:

Գլոբալացումը հանդիսանում է աշխատուժի համաշխարհային շուկայի ձևավորման կարևորագույն գործոն: Ի տարբերություն ապրանքային կամ ֆինանսական շուկաների՝ աշխատուժի շուկայում գլոբալացման հետևանքները ավելի պակաս են ուսումնասիրված: Նման պայմաններում սահմանափակվում է առանձին երկրի կողմից զբաղվածության ինքնուրույն, անկախ քաղաքականության իրականացումը, իսկ դա արդեն լուրջ խնդիր է¹³:

Աշխատուժի համաշխարհային շուկայի ձևավորումը աշխատուժի միջազգային միգրացիայի հետևանք է, իսկ ձևավորման հիմնական պատճառը սկզբնական շրջանում եղել է բարձր որակավորում ունեցող աշխատուժի հավաքագրումը: Այն ընդգրկում է ազգային սահմանները հատող աշխատանքային ռեսուրսների հոսքերը տարբեր ուղղություններով, ինչը կարևոր դեր ունի աշխարհի մասշտաբով աշխատուժը

¹¹ St'u Migration and Remittances Factbook 2017, Second Edition, World Bank <http://siteresources.worldbank.org/INTLAC/Resources/Factbook2011-Ebook.pdf> pg 34

¹² St'u Լ.Ասլանյան, «Բնակչության միգրացիա» Երևան 2011թ.

¹³ St'u Елена Ванкевич, «Глобализация и национальный рынок труда», 2009

համաշխարհային արտադրության մեջ տեղաբաշխելու գործում¹⁴ : Աշխատուժի համաշխարհային շուկան միավորում է աշխատուժի ազգային և տարածաշրջանային շուկաները: Այն գոյություն ունի աշխատունակ մարդկանց միգրացիայի ձևով¹⁵:

Աշխատուժի համաշխարհային շուկան չպետք է դիտարկել որպես ազգային շուկաների պարզ ամբողջություն, այլ որպես վերազգային ինստիտուտ, որտեղ գնվում և վաճառվում է արտասահմանյան աշխատուժ¹⁶: Աշխատուժի գլոբալ շուկա ասելով՝ հասկանում ենք ոչ այնքան աշխատուժի ներմուծման և արտահանման գործընթաց, որքան աշխատուժի շուկայի որակական զարգացում արտադրության միջազգայնացման և ազգամիջյան շփումների խորացման պայմաններում, տնտեսական մեխանիզմների, նորմերի, գործիքների համակարգ, որն ապահովում է աշխատուժի առաջարկի և պահանջարկի փոխազդեցությունը միջազգային մակարդակում:

Աշխատուժի միջազգային շուկայում աշխատուժի նկատմամբ դրվում են բարձր պահանջներ, որոնք վերաբերում են աշխատողների ընդհանուր կրթությանը, մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը, որը պայմանավորված է համաշխարհային տնտեսության ներկայիս առանձնահատկություններով: Այստեղ կարևոր է հաշվի առնել ևս մեկ կարևոր հանգամանք: Վերջին տարիներին շատ երկրներ, անկախ տնտեսական զարգացման մակարդակից, բախվում են որակավորված աշխատուժի պակասին, որը ծածկվում է այլ երկրներից համապատասխան մասնագետների ներգրավման հաշվին: Ներկայումս ձևավորվել և գործում են աշխատուժի միջազգային 5 խոշոր շուկաներ՝ արևմտաեվրոպական, մերձավորարևելյան, ասիական, լատինամերիկյան և աֆրիկյան: Առաջին դեպքում տեղի է ունեցել աշխատուժի շուկայի իրավական կազմավորում ԵՄ շրջանակում, այսինքն՝ ԵՄ երկրների միջև աշխատուժի տեղաշարժի սահմանափակումները վերացել են:

Աշխատուժի միջազգային շուկայի ձևավորումը իրականացվում է 2 եղանակով՝ միգրացիայի և աշխատուժի ազգային շուկաների աստիճանական միաձուլման միջոցով (աշխատուժի համընդհանուր շուկայի ձևավորում): Որոշ դեպքերում

¹⁴ Տե՛ս “Мировая экономика” под редакцией док эк. Наук, профессора А.С.Булатова, Москва 2005, стр. 135

¹⁵ Տե՛ս Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան «Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում» Երևան 2002թ էջ 156-157:

¹⁶ Տե՛ս С.В. Рязанцев, М.Ф. Ткаченко, «Мировой рынок труда и международная миграция », Москва, 2010, стр.22

կապիտալի և աշխատուժի միավորումը կարող է տեղի ունենալ առանց ֆիզիկական տեղաշարժի՝ տարածության վրա աշխատանքի կազմակերպման միջոցով:

Գլոբալացումը և աշխատուժի գլոբալ շուկայի ձևավորումը հնարավորություն է տալիս առանձնացնելու այդ շուկայի զարգացմանը բնորոշ հետևյալ միտումները.

1. աշխատուժի մտավոր զարգացում, որի արդյունքում ձևավորվում է զբաղվածության նորարարական տեսակը

2. աշխատուժի գլոբալ շուկայի հետարդյունաբերական հատվածավորում, որը բնութագրվում է քանակական, որակական և ինստիտուցիոնալ փոփոխություններով: Քանակական փոփոխությունները արտացոլվում են գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտում զբաղվածության կրճատմամբ և ծառայությունների ոլորտներում զբաղվածների թվի աճով: Որակական տեղաշարժերը պայմանավորված են ժամանակակից տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ, կազմակերպական ճկուն կառուցվածքների ստեղծմամբ, կառավարման նորարարական մեթոդների ներդրմամբ և բնութագրում են աշխատուժի շուկայի կառուցվածքի փոփոխությունները: Ընկերությունները բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկ ունեն ֆինանսների, բժշկության, ապահովագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և այլ ոլորտներում: Բացի այդ, ծառայությունների ոլորտին բնորոշ են ցածր որակավորում ունեցող աշխատուժի գերակշռությունը, ինչպես նաև անօրինական զբաղվածության տարածումը: Աշխատուժի շուկայի ինստիտուցիոնալ փոփոխություններն ուղեկցվում են երկրների միջև սահմանների ձևական և ոչ ձևական թուլացմամբ, վերազգային ինստիտուտների (ՎԱԿ-եր և միջազգային կազմակերպություններ) դերի ամրապնդմամբ: Միևնույն ժամանակ տեղի է ունենում պետության ինստիտուցիոնալ դերի թուլացում (այդ թվում՝ նաև աշխատուժի կարգավորման ոլորտում):

Աշխատուժի համաշխարհային շուկայի ձևավորումը կարևոր նշանակություն ունի և՛ ընկերությունների, և՛ երկրների համար, սակայն այդ շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը կարծես թե սահմանափակ է, կամ, ավելի ճիշտ, անհասանելի է առանձին տնտեսվարողների համար: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ MGI ընկերությունը 2012թ. վերլուծություն է կատարել և հանգել հետևյալին.

- ՕՖշորինգի միջոցով ձևավորվող աշխատուժի համաշխարհային շուկան

հարաբերականորեն մեծ չէ (քանի որ, փորձագետների գնահատմամբ տարածության վրա, առանց ֆիզիկական ներկայության, կարելի է իրականացնել ամբողջ աշխարհի մասշտաբով սպասարկման ոլորտի աշխատանքների 11%-ը), հետևաբար դա զգալի տատանումներ չի առաջացնի զարգացած երկրներում աշխատավարձի և զբաղվածության մակարդակների վրա:

- Զարգացած երկրների ընկերությունների պահանջարկը օֆշորային աշխատուժի նկատմամբ կհանգեցնի զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների տնտեսությունների որոշ ճյուղերում աշխատավարձի մակարդակի բարձրացմանը, սակայն դա չի հասնի զարգացած երկրների ցուցանիշին:
- Օֆշորային աշխատուժի նկատմամբ համաշխարհային առաջարկը և պահանջարկը հավասարակշռված չեն. որոշ ճյուղերում առաջարկն է գերազանցում պահանջարկին, որոշ ճյուղերում՝ հակառակը:
- Ինչքան արդյունավետ է գործում աշխատուժի համաշխարհային շուկան, այնքան այն ձեռնտու է նրա մասնակիցներին, քանի որ ռեսուրսները արդյունավետ են բաշխվում¹⁷:

Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով ներկայումս, կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամային զարգացումների հետ, աշխատուժի համաշխարհային շուկան գտնվում է անկման փուլում: Ճգնաժամի ընթացքում կտրուկ աճել է գործազուրկների թիվը:

2015թ.-ին ԱՄԿ-ն հրապարակել է «Զբաղվածության գլոբալ միտումները» հաշվետվությունը: Կանխատեսումների համաձայն՝ համաշխարհային տնտեսությանն անհրաժեշտ է ստեղծել շուրջ 600 մլն աշխատատեղ առաջիկա տասնամյակի ընթացքում ճգնաժամից հետո գործազրկության անհետաձգելի հիմնախնդիրները լուծելու համար: ԱՄԿ տվյալներով վերջին ճգնաժամի 3 տարիների ընթացքում աշխատուժի շուկան լքել է 200 մլն մարդ: Այդ իսկ պատճառով տարեկան պետք է ստեղծվի նվազագույնը 40 մլն աշխատատեղ: Երիտասարդներն ավելի շատ են տուժում աշխատատեղերի անբավարարությունից, ընդ որում՝ 15-24 տարեկան շուրջ 75

¹⁷ Տե՛ս www.mckinsey.com

մին մարդ գործագուրկ էր 2011թ.-ին: Շուրջ 900 մլն աշխատողներ, հիմնականում զարգացող երկրներում, համարվում են աղքատ՝ ծախսելով օրական 2 ԱՄՆ դոլարից քիչ: Այս թվերը խոսում են պայմանների անհավասարության խորացման մասին: Հետճգնաժամային վերականգնումը մեծապես կախված է երկրների վարած զբաղվածության քաղաքականությունից: Համաշխարհային տնտեսության մեջ գործազրկության խնդիրը լուրջ է, քանի որ աշխատատեղերը պետք է ստեղծվեն առավելապես այնտեղ, որտեղ առկա է բնակչության արագ աճ, այսինքն՝ Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում, որտեղ նման քանակությամբ աշխատատեղեր ստեղծելը գրեթե անհնար է: Սակայն, միևնույն ժամանակ 21-րդ դարում զարգացած երկրների գործազրկության մակարդակը սկսել է գերազանցել աշխատուժ արտահանող երկրների գործազրկության մակարդակին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արևմուտքի երկրները նախընտրում են ներմուծել աշխատուժ՝ կապիտալ արտահանելու փոխարեն¹⁸:

Աշխատուժի շուկայում գլոբալացման գործընթացները ազդում են 3 կարևոր պարամետրերի վրա՝ աշխատուժի առաջարկ, աշխատուժի պահանջարկ և աշխատուժի գին¹⁹:

Աշխատուժի միգրացիան մի կողմից հանդես է գալիս որպես աշխատանքի շուկայի քանակական և որակական պարամետրերի ձևավորման գործոն, քանի որ որոշակի սոցիալ-ժողովրդագրական և մասնագիտական բնութագրեր կրող բնակչության ներհոսքը կամ արտահոսքը տարածաշրջան անխուսափելիորեն արտացոլվում է ողջ բնակչության թվի և կազմի, ինչպես նաև աշխատուժի առաջարկը բնութագրող ցուցանիշների վրա: Մյուս կողմից, պատշաճ ձևով կազմակերպված միգրացիան կարող է ծառայել թե՛ որպես տարածաշրջանային, թե՛ ազգային աշխատանքի շուկայի կարգավորման բավականին արդյունավետ գործիք՝ նպաստելով աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև հավասարակշռության հաստատմանը:

Աշխատուժի միգրացիայի զանգվածային բնույթը թույլ է տալիս միջազգային տնտեսական հարաբերություններում այն գնահատել որպես ժողովրդագրական և

¹⁸ Տե՛ս Багратян Г. Мегаэкономика и глобальные экономические проблемы // Учебно-методическое пособие, РАУ, Ереван 2013, стр. 240:

¹⁹ Տե՛ս А.И Евдокимова “Международные экономические отношения “ Москва 2004г , стр. 478

տնտեսական կայուն երևույթ, որը տարբեր գործոնների ազդեցությամբ փոխում է ինչպես աշխարհագրական ուղղությունները, այնպես էլ տեղաշարժի նպատակները: Ընդհանուր առմամբ բնակչության միգրացիայի վրա ազդում է փոխկապակցված գործոնների համալիր, որոնք պատմական այս կամ այն ժամանակաշրջանում էական դեր են խաղացել միգրանտների տեղաշարժի նպատակների ձևավորման գործում: Այդ գործոնները բաժանվում են 2 մեծ խմբի՝ տնտեսական և ոչ տնտեսական²⁰:

Միգրացիոն հոսքերի մասշտաբների աճի հիմնական պատճառը եղել է և կմնա տնտեսական գործոնը: Տնտեսական բնույթի գործոնները հիմնականում կապված են առանձին երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակների հետ: Աշխատուժը տեղաշարժվում է կյանքի ցածր մակարդակ ունեցող երկրից դեպի ավելի բարձր մակարդակ ունեցող երկիր: Աշխատուժի միջազգային տեղաշարժերի գլխավոր պատճառը այս կամ այն մասնագիտական գործունեության համար աշխատավարձի մակարդակների ազգային տարբերություններն են: Ցածր աշխատավարձ վճարող երկրներից աշխատուժը հոսում է ավելի բարձր աշխատավարձ վճարող երկրներ: Օրինակ՝ Մեքսիկայից աշխատուժի հոսքը դեպի ԱՄՆ հասել է աննախադեպ չափերի և մինչ օրս չի դադարում, որովհետև նույն քանակի ու որակի աշխատանքի համար ԱՄՆ-ում անհամեմատ բարձր են վարձատրում, քան Մեքսիկայում: Աշխատուժի միգրացիայի հիմնական պատճառը ոմանք համարում են զարգացող երկրներում բնակչության աճի բարձր տեմպերը, որի արդյունքում նրանց մեծ մասը արտագաղթում է զարգացած երկրներ, սակայն դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ դոնոր երկրների շարքին է դասվում նաև բնակչության աճի ցածր տեմպեր ունեցող երկրների մի մասը, որի ցայտուն օրինակը ՀՀ-ն է, որտեղից անցած դարի 1990-ական թթ. սկզբներից մինչ օրս չի դադարում բնակչության զանգվածային արտագաղթը: Այսպիսով՝ միգրացիա ծնող պատճառներից է հարուստ և աղքատ երկրների միջև աշխատավարձերի տարբերությունը:

Աշխատուժի միջազգային միգրացիայի զարգացմանն իրենց հերթին նպաստում են գիտատեխնիկական առաջընթացը, տրանսպորտի և կապի միջոցների զարգացումը, միջազգային տեղեկատվական համակարգի ընդլայնումը և այլն:

²⁰ St' u J. Gerber, International Economics (7th Edition) (Pearson Economics) Prentice Hall; 7 edition, 2017, p. 152.

Աշխատուժի միջազգային միգրացիայի վրա ազդող ոչ տնտեսական գործոնների շարքին են դասվում քաղաքական, ազգային, կրոնական, էթնիկական, բնապահպանական, կրթական, մշակութային և հոգեբանական բնույթի գործոնները, ինչպես նաև բնական աղետները, պատերազմները, ազգամիջյան ընդհարումները, մարդու իրավունքների ոտնահարումները, դատաիրավական համակարգի անկատարությունը, քաղաքական անկայունությունը, ռասսայական ու ազգային խտրականություններից և քաղաքական հետապնդումներից փախուստը և այլն, որոնց հետևանքով տեղի են ունենում հարկադիր վերաբնակեցումներ:

Աշխատուժի միջազգային միգրացիայի ինտենսիվությունը կախված է մի շարք գործոններից²¹.

- համաշխարհային տնտեսության զարգացման բնույթը և երկրների աճող փոխկապվածությունը,
- ԳՏԱ-ն որի զարգացումը ուղեկցվում է տնտեսության կառուցվածքային վերափոխումներով, նոր մասնագիտությունների առաջացմամբ, առկա մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի փոփոխությամբ,
- ՎԱԿ-երի զարգացումը, որը նպաստում է աշխատուժի և կապիտալի միավորմանը, քանի որ ՎԱԿ-երը կամ կազմակերպում են աշխատուժի տեղաշարժը դեպի այն երկրներ, որտեղ առկա է կապիտալ, կամ, հակառակը, կապիտալն են տեղափոխում այն երկրներ, որտեղ առկա է ավելցուկային աշխատուժ,
- տնտեսական պարբերաշրջանի փուլը, վերելքի փուլում աշխատուժի նկատմամբ պահանջարկը աճում է. անկման փուլում՝ իջնում;
- տնտեսական ինտեգրման գործընթացները, որոնք խթանում են միավորվող երկրների միջև միգրացիոն գործընթացները,
- մարդկանց մոտ այն գիտակցության առաջացումը, որ մյուս երկրները ավելի լայն հնարավորություններ կարող են ընձեռել,
- տրանսպորտային միջոցների զարգացումը, տարածումը, էժանացումը, տեղեկատվության համաշխարհային համակարգի ձևավորումը և այլն:

²¹ Տե՛ս http://sociologicheskaya.academic.ru/412/%D0%98%D0%9D%D0%A2%D0%95%D0%9D%D0%A1%D0%98%D0%92%D0%9D%D0%9E%D0%A1%D0%A2%D0%AC_%D0%9C%D0%98%D0%93%D0%A0%D0%90%D0%A6%D0%98%D0%98

Ժամանակակից պայմաններում միգրացիոն գործընթացներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ընդհանուր միգրանտների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձր որակավորում ունեցող մասնագետները, այսինքն՝ զգալի չափերի է հասել «ուղեղների արտահոսքը» նախկին սոցիալիստական և Արևելյան Եվրոպայի երկրներից,
- պետությունների և միջազգային կառույցների դերի աճը միգրացիոն գործընթացների կարգավորման գործում,
- ՎԱԿ-երի դերի բարձրացումը միգրացիոն գործընթացներում, որոնք դրանց ավելի կազմակերպված բնույթ են հաղորդում:

Տնտեսագետներն առանձնացնում են նաև միգրացիայի հետևյալ ձևերը՝ աշխատանքային, ընտանեկան, հանգստյան, զբոսաշրջության: Վերջին երեք տասնամյակների ընթացքում աստիճանաբար տեղի ունեցավ միգրացիայի ձևի փոփոխություն. վերաբնակեցման նպատակով մշտական միգրացիան իր տեղը զիջեց աշխատանքի նպատակով ժամանակավոր միգրացիային²²:

Միգրացիայի դասակարգումը թույլ է տալիս համալրել և զգալի չափով ընդարձակել միգրացիայի վերաբերյալ պատկերացումը, ինչն անհրաժեշտ է ինչպես աշխատուժի հոսքերը ժամանակի և տարածության մեջ սահմանազատելու, այնպես էլ ճիշտ միգրացիոն քաղաքականություն իրականացնելու համար:

1.1.1 Աշխատուժի միգրացիայի վերաբերյալ տեսությունները

Աշխարհում տեղի ունեցող միգրացիոն գործընթացների հետ կապված հիմնախնդիրների լուսաբանումը չափազանց կարևոր է ներկա ժամանակաշրջանում: Այդ պատճառով աշխատուժի միջազգային միգրացիայի հետ կապված խնդիրները միշտ եղել են տնտեսագետների ուշադրության կենտրոնում, որոնք փորձել են բացահայտել միգրացիայի արմատական պատճառները, դրական և բացասական հետևանքները, ինչպես նաև արտագաղթը թուլացնելու հիմնական միջոցները: Ստորև

²² Տե՛ս А.Я. Якобсон, И. М. Максимов "Лекции по мировой экономике", Иркутск 2006, стр. 36

նշենք որոշ տեսությունների հիմնական բնութագրերը:

Գոյություն ունեն աշխատութի միջազգային միգրացիան բնութագրող տարբեր տեսություններ: Դրանց մեծ մասը փորձում է բացատրել միջազգային միգրացիան «Push and Pull» սկզբունքի հիման վրա, այսինքն այն գաղափարի տեսանկյունից, որ աղքատությունը ետ է մղում, իսկ ավելի հեշտ աշխատանքը ձգում է: Բազմաթիվ մարդիկ, իհարկե, ցանկանում են խուսափել աղքատությունից, բայց ոչ բոլոր աղքատներն են արտագաղթում: Աշխատութի միջազգային միգրացիան բնութագրող տեսություններն էլ օգնում են պատասխանելու այն հարցին, թե որոնք են արտագաղթի իրական պատճառները:

Միգրացիոն տեսությունները բաժանվում են 2 խմբի՝ միջազգային միգրացիայի և կայուն միգրացիայի: Կայուն միգրացիայի տեսությունները 4-ն են՝ սոցիալական ցանցերի տեսություն (Hugo 1971, Massey 1990)²³, ինստիտուցիոնալ տեսություն, կոմույալիստիկ պայմանավորվածության տեսություն (Myrdal 1957), միգրացիոն համակարգերի տեսություն (Kritz and Zlotnick 1992):

Աշխատութի միջազգային միգրացիան հաճախ դիտարկվում է սոցիալական ցանցերի ծագման տեսանկյունից, որը միավորում է մուտքի և ելքի երկրները: Սոցիալական ցանցերի տեսության կենտրոնում միկրո մակարդակի գործոններն են, մասնավորապես, միգրանտների և նրանց ընկերների միջև եղած կապերը: Նմանատիպ սոցիալական ցանցերը իջեցնում են ներգաղթողների ռիսկերը և ծախսերը, ինչը տանում է նման ցանցերի տարածման և միգրանտների հոսքերի ավելացմանը: Այս տեսության հիմքում ընկած է անհատի կամ ընտանիքի մակարդակում որոշում կայացնելու ուսումնասիրությունը, ինչպես նաև սոցիալական ցանցերի չափերը, կառուցվածքը և որակական բնորոշիչները: Ինստիտուցիոնալ տեսության մեջ շեշտը դրվում է մակրոմակարդակի գործոնների վրա: Միգրացիայի ուսումնասիրությունը համարվում է ոչ ֆորմալ և անօրինական միգրացիոն սխեմաների արդյունք, որոնք գործ ունեն անօրինական միգրանտների հետ: Սակայն այստեղ տեսադաշտից դուրս է մնում անհատի, տնային տնտեսության՝ որոշում կայացնելու գործընթացը: Կոմույալիստիկ պայմանավորվածության տեսության շրջանակներում

²³ St' u D.S. Massey. S.A. Graema and others. "Theories of international Migration: A Review and Appraisal". Population and Development Review. Vol. 19, No 3 (September 1993) Page 435.

քննարկվում են սոցիալ-տնտեսական գործընթացները, մասնավորապես, յուրաքանչյուր միգրացիոն երևույթ առաջացնում է սոցիալական պատկերի փոփոխություն, որի ժամանակ որոշում է կայացվում հաջորդող միգրացիաների վերաբերյալ՝ դարձնելով նոր միգրացիոն հոսքերն ավելի հավանական 6 հիմնական սոցիալ-տնտեսական գործոնների առումով, որոնք նշվել են տեսության մեջ որպես միգրացիայի պատճառ: Դրանք են՝ եկամտի և հողի բաշխում, մարդկային կապիտալի տարածաշրջանային բաշխում, գյուղատնտեսության կազմակերպում, միգրացիայի մշակույթ, աշխատանքի և զբաղվածության այլ ձևերի սոցիալական նշանակություն: Այս տեսության թերությունը այն է, որ քիչ ուշադրություն է դարձվում անհատի և տնային տնտեսության մակարդակով որոշման կայացմանը: Միգրացիոն համակարգերի տեսությունը կենտրոնացված է միաժամանակ տվյալ մակարդակի գործոնների վրա, այլ կերպ ասած՝ փորձ է արվել միգրացիոն տեսությունները միկրո և մակրո մակարդակներում խմբավորել մի տեսության մեջ: Առանցքային խնդիրը համարվում է հաստատուն միգրացիոն հոսքերի բնորոշումն ու ուսումնասիրությունը, ինչպես նաև առաջացման պատճառները: Այստեղ հաշվի են առնվում նաև անհատների և տնային տնտեսությունների՝ որոշում կայացնելու փաստը:

Միջազգային միգրացիայի տեսություններն իրենց հերթին բաժանվում են 4 խմբերի՝ նոր դասական տեսություն (Ravenstain 1889²⁴, Smith 1776²⁵, Lewis 1951²⁶), միգրացիայի նոր տեսություն (Stark 1981²⁷), աշխատանքի կրկնակի շուկայի տեսություն (Piore 1979), համաշխարհային համակարգերի տեսություն (Wallerstein 1979²⁸, Masseg 1989):

Անհատի միգրացիոն վարքագիծը բացատրող տնտեսական մոդելների մեծ մասը հիմնված է նոր դասական տեսության վրա, որի հիմնադիրներից է Ե. Ռավենստայնը:

²⁴ Տե՛ս Ravenstain E. "The Laws of Migration; Journal of the Statistical Society", June 1889. Pp. 214-301

²⁵ Տե՛ս Smith A., (1776): Inquiry into the Nature and Causes of the Wives Employment: How Long does it Last?", Social Science Quarterly, 65: pp. 21-36

²⁶ Տե՛ս Luis A. B. European Community Competition Procedure. Clarendon Press, 1966, pp.15-46

²⁷ Տե՛ս Stark O., Taylor J., and Yitzhaki, (1986), "Remittances and Inequality", The Economic Journal; pp. 722-740 Stark O., Taylor J., and Yitzhaki, (1988)"Labour migration as a Response Deprivation", Journal of Population Economics, 1: pp. 57-70, Stark O., (1991) "The migration of Labour", Stark O., Taylor J., and Taylor J., (1991): "Migration Incentives, Migration Types; The Role of Relative Deprivation". The Economic journal, 101:pp. 1163-1178

²⁸ Տե՛ս Wallerstein, I, The Modern World System, Capitalist Agriculture and the Origins of the European World Economy in the Sixteenth Century, New York: Academic Press, 1974

XIX դարի 80-ական թվականներին գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա նա տվել է միգրացիայի ինտենսիվության և ուղղությունների միջև սերտ կապը և բացահայտել դրանց միջև գոյություն ունեցող 6 հիմնական կախվածությունները:

Դրանք են՝

1. միգրացիայի ինտենսիվությունն աշխարհագրական երկու կետերի միջև հակադարձ համեմատական է դրանց հեռավորությանը,
2. միգրանտները ամենից առաջ ձգտում են հասնել արդյունաբերական և առևտրի կենտրոններին,
3. միգրացիան սկզբում տեղի է ունենում դեպի հարևան (կամ մոտ), իսկ հետո՝ արդյունաբերական զարգացած երկրներ,
4. յուրաքանչյուր միգրացիոն հոսք (անկախ չափերից) ծնում է հակադարձ հոսք,
5. տեխնոլոգիական առաջընթացը և կապուղիների զարգացումը նպաստում են բնակչության միգրացիայի մեծացմանը,
6. միգրացիայի հիմնական պատճառը տնտեսականն է:

Միգրացիայի վերաբերյալ Ռավենստայնի տեսության հիմնական ենթադրությունը այն է, որ անհատները առավելագույնի են հասցնում իրենց օգտակարությունը՝ կախված բյուջետային սահմանափակումներից: Միգրացիան հիմնականում տեղի է ունենում աշխատանքի շուկաներում գոյություն ունեցող առաջարկի և պահանջարկի տարբերությունների պատճառով: Աշխատուժի պակաս ունեցող տարածաշրջաններին բնորոշ է աշխատավարձի բարձր մակարդակը, իսկ աշխատուժի առաջարկի ավեցուկ ունեցող տարածաշրջաններին՝ ցածր աշխատավարձը:

Անդրադառնանք նաև միգրացիայի նոր տեսությանը: Նոր դասական տեսության շատ ենթադրություններ և եզրահանգումներ վիճարկելի է համարում միգրացիայի նոր տեսությունը: Միգրացիան միայն անհատական որոշում չէ: Հաճախ ամբողջ ընտանիքներ պլանավորում են ռազմավարություն՝ ուղարկելով մեկ կամ մի քանի հոգու արտերկիր, որպեսզի պահպանեն իրենց գոյությունը: Ոչ բոլոր զարգացող պետություններն ունեն սոցիալական ապահովության որոշակի ձև, այդ պատճառով ընտանիքի անդամները փորձում են ինքնուրույն լուծել ընտանիքի սոցիալական խնդիրները:

Այսպիսով՝ միգրացիայի նոր տեսությունը փոխում է միգրացիոն որոշման գնահատականը՝ ընդգծելով ընտանիքը՝ որպես որոշում կայացնող միավոր: Սակայն այս մոդելն ամբողջությամբ չի բացատրում միգրացիոն գործընթացները՝ անտեսելով անհատին, և միգրացիոն որոշումը դիտվում է միայն որպես ընտանիքի ներսում ձևավորվող գործընթաց: Այս տեսության հեղինակները²⁹ պնդում են, որ տնային տնտեսությունները աշխատողներին ուղարկում են արտասահման ոչ միայն եկամուտը բացարձակ արտահայտությամբ բարելավելու, այլ նաև եկամուտը այլ տնտեսությունների համեմատ ավելացնելու և որոշակի սոցիալական խմբի համեմատ իրենց հարաբերական գրկանքները նվազեցնելու համար: Տեսության հիմնական դրույթը կապված է մարդկանց հետ՝ ի դեմս ընտանիքների կամ տնային տնտեսությունների, որտեղ մարդիկ գործում են ոչ միայն սպասվող եկամուտը առավելագույնի հասցնելու, այլ նաև ռիսկերը նվազագույնի հասցնելու և շուկայի անհաջողությունների բազմազանության հետ կապված սահմանափակումները մեղմացնելու նպատակով:

Ըստ աշխատանքի կրկնակի շուկայի տեսության՝ կապիտալիստական զարգացումը ստեղծում է աշխատանքի 2 տարբեր ձև՝ անվտանգ, կայուն, բարձր որակավորում պահանջող, լավ վարձատրվող և ժամանակատար, ծանր, տհաճ խնդիրներից բաղկացած, վատ վարձատրվող աշխատանք: Անգլիայում 2-րդ ձևը հաճախ անվանում են DDD (dirty, dangerous, difficult), իսկ Ճապոնիայում դրան կոչում են KKK (kitanai, kiden, kitsu): Միգրացիա ծնող պատճառներից մեկն էլ հենց հարուստ և աղքատ երկրների միջև աշխատավարձերի տարբերությունն է: Աշխատավարձի չափի տարբերությունը ցույց է տալիս սոցիալական շերտավորումը, քանի որ մարդկանց նպատակն է բարձրանալ աշխատանքային սանդուղքներով դեպի վեր՝ թողնելով ցածր մակարդակի աշխատանքը միգրանտներին: Բնակչության մեծամասնությունը ցանկանում է ունենալ կայուն, լավ վարձատրվող աշխատատեղ և նախընտրում է հեռու մնալ աշխատանքի երկրորդ ձևից: Սակայն արդյունքում շատ երկրներ հաճախ բախվում են

²⁹ St' u Stark O., Taylor J., and Yitzhaki, (1986), "Remittances and Inequality", The Economic Journal; pp. 722-740 Stark O., Taylor J., and Yitzhaki,(1988) "Labour migration as a Response Deprivation", Journal of Popoulation Economocs, 1: pp. 57-70, Stark O., (1991) "The migration of Labour", Stark O., Taylor J., and Taylor J., (1991): "Migration Incentives, Migration Types; The Role of Relative Deprivation". The Economic journal, 101 pp. 1163-1178

որոշակի խնդիրների, որոնց լուծումն աշխատավարձի բարձրացումն է, և եթե բարձրացվում է բարձրակարգ աշխատանք ունեցողի աշխատավարձը, պետք է բարձրացվի նաև ցածրակարգ աշխատանք իրականացնողների աշխատավարձը: Երկու աշխատանքների միջև այս հստակ տարբերությունը խոսում է կրկնակի աշխատանքային շուկայի գոյության մասին: Այս դեպքում միգրանտի վրա ազդում են իր համար անհասկանալի ուժեր՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, որոնք դուրս են բերում մարդուն մի երկրի սահմանից և տանում դեպի մեկ այլ երկիր: Այս տեսության հիմքում որպես էմիգրացիայի պատճառներ նշվում են ներգաղթող երկրում տնտեսության կառուցվածքային պահանջները: Մեծ ուշադրություն է դարձվում ներգաղթն ապահովող գործոններին, որոնք են ցածրակարգ աշխատանքի զբաղվածության կրճատումը:

Համաշխարհային համակարգի տեսությունը պնդում է, որ աշխատանքային միգրացիան բխում է ընդարձակվող գլոբալ շուկայի քաղաքական ու տնտեսական կառուցվածքից: Ըստ այս տեսության, միգրացիայի հիմնական պատճառներն են տնտեսական և քաղաքական գլոբալացումը: Գլոբալացումն առաջացնում է սոցիալական փոփոխություններ և ազդում է գործատու-աշխատող ավանդական հարաբերությունների վրա, ներդնում է արտադրության ժամանակակից միջոցներ՝ դուրս հանելով ոչ բարձր որակավորում ունեցող աշխատողներին աշխատանքից: Այս տեսության մեջ խիստ ուշադրության է արժանացել հարուստ երկրների կազմակերպությունների մոտքը աղքատ երկրների շուկաներ և նրանց ազդեցությունը տեղական արժեքների, սպասումների վրա, որը հանգեցնում է էմիգրացիոն վիճակի:

XX դարի 60-ական թվականներին միգրացիոն գործընթացների ուսումնասիրությանը զբաղվել են նաև այլ տնտեսագետներ: Նրանցից ուշադրության արժանի է Մ.Թափինոսի³⁰ կողմից կատարված հետազոտությունը, որում ուսումնասիրվել են հետևյալ ցուցանիշները.

1. ռեցիպիենտ երկրում տնտեսական գործունեության տարբեր ձևերից ստացված վարձատրությունը,
2. սպառողական ծախսերը (սնունդ, հագուստ, բնակարան, երկարաժամկետ

³⁰ St' u Tapinos M. Leconome de migration internationale. Paris, 1974, pp. 5-31.

օգտագործման ապրանքներ, կրթություն, առողջապահական ծառայություններ և այլն),

3. խնայողությունների մեծությունը,

4. գների մակարդակը և տնտեսական այլ գործոններ:

Ժամանակավոր միգրացիայի դեպքում վերոհիշյալ փոփոխականներից Թափինսոնն առաջին պլան է մղել խնայողությունների մեծությունը, իսկ մշտական բնակության դեպքում՝ տնտեսական օգուտի գերազանցումը «ոչ տնտեսական գնի» նկատմամբ: Վերջինս այն հոգեբանական կորուստն է, որ միգրանտը ստանում է հարազատ միջավայրից և ազգային մշակույթից կտրվելու, ինչպես նաև կորուստը՝ կապված լեզվական դժվարությունների հետ: Այդ գնի մակարդակը կախման մեջ է դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսական զարգացման մակարդակներից: Թափինսոնն աշխատուժի միջազգային միգրացիան համարում էր միգրանտների պրոֆեսիոնալ որակական մակարդակի իրացման միջոց, սոցիալական մակարդակի բարձրացման հնարավորություն, աշխատուժի համաշխարհային շուկայում եկամուտների հավասարեցման միտում:

Ամերիկացի տնտեսագետներ Լյուիսը³¹ և Քայդնբերգերը³² եվրոպական երկրների փորձի հիման վրա բացահայտել են տնտեսական աճի և օտարերկրյա աշխատուժի կիրառման անմիջական կապը: Այսինքն՝ այն, որ արտասահմանյան աշխատուժի կիրառումը հանդիսանում է տնտեսական աճի խթանիչ:

Տնտեսագետներից ոմանք էլ օտարերկրյա աշխատուժի կիրառումը դիտում են նրանց ինտեգրման և ասիմիլացման (միաձուլման) տեսանկյունից: Միգրանտների ասիմիլացման ուղին անցնում է մշակութային ադապտացման և հետագա ինտեգրման միջոցով: Մշակութային ադապտացման տակ նրանք նկատի ունենին լեզվի յուրացումը և տվյալ երկրի կրոնի ընդունումը: Այնուհետև սկսվում է կառուցվածքային ինտեգրման փուլը, որի ավարտից հետո վերանում են միգրանտների ու տեղացիների միջև գոյություն ունեցող խտրականությունները: Դրանից հետո տեղի է ունենում միգրանտների ասիմիլացումը: Իհարկե, իրականությունն այն է, որ այնքան էլ հեշտ չէ կատարվում միգրանտների ասիմիլացումը, քանի որ նրանք ինչ-որ շրջանակներում տարբեր ձևերով պահպանում են իրենց ազգային կենսակերպը: Ավելին, հատկապես

³¹ St' u Luis A. B. European Community Competition Procedure. Clarendon Press, 1966, pp.15-46

³² St' u Kindleberger G.P. American Business Abroad. New Haven Conn: Yale University Press, 1969, pp.13-14

երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ասիմիլացիոն գործընթացները ոչ միայն դանդաղել, այլև, կարելի է ասել, կարծես թե վերացել են: Որոշ հետազոտողներ էլ գտնում են, որ միգրանտները դատապարտված են երկրորդական շուկայի սեգմենտ լինելուն: Նրանց կարծիքով աշխատուժի շուկայի սեգմենտ կարելի է համարել «ուղեղների հոսքի» ներկայացուցիչներին, որոնց ասիմիլացումը կատարվում է անհամեմատ ավելի հեշտ³³:

Տնտեսագետ Սայմոնը³⁴, ԱՄՆ-ի օրինակով ուսումնասիրելով միգրացիայի հետևանքները, հանգել է այն եզրակացության, որ էմիգրանտների ընտանիքները ամերիկացիների համար ներդրումների գերազանց օբյեկտ են, որ միգրացիան չի սրում մրցակցությունը աշխատուժի շուկայում և չի տանում գործազրկության աճի, այլ, ընդհակառակը, պահանջարկի ընդլայման և նոր բիզնեսի զարգացման միջոցով խթանում է աշխատատեղերի ստեղծումը:

Բնակչության միգրացիան նաև դիտվում է որպես տնտեսական զարգացման և ժողովրդագրական աճի միջև անհամամասնությունների արդյունք: Երբ տնտեսական աճը ետ է մնում բնակչության արագ աճից, այդ ժամանակ ձևավորվում է այսպես կոչված, գերբնակչություն, որն աշխատանք փնտրելու նպատակով դառնում է միգրանտ: Այսպես, աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնահարցերն ուսումնասիրող տնտեսագետներից ոմանք կարծում են, որ ժամանակավոր էմիգրացիան դրական երևույթ է, և պետությունը պետք է խթանի այն, իսկ ոմանց պնդմամբ՝ էմիգրացիան տեղիք է տալիս «ուղեղների արտահոսքին», որի համար էլ պետությունը պետք է սահմանափակի այն: Սակայն իրական կյանքը հաստատում է, որ որքան էլ մեծ լինեն աշխատուժի միգրացիայի դրական հետևանքները, ապա միևնույն է, ռեցիպիենտ երկրները մշտապես ձգտել են և ձգտում են բազմաթիվ արգելքների միջոցով սահմանափակելու աշխատուժի ներհոսքը:

Տնտեսագետները կարծիք են հայտնում նաև անօրինական միգրացիայի վերաբերյալ: Ըստ այդմ, անօրինական միգրացիան ավելի շահավետ է ռեցիպիենտ երկրների համար, քան օրինականը: Անօրինական միգրացիան հնարավորություն է

³³ Տե՛ս Վ.Ղալումյան, «Ուղեղների արտահոսքի» համընդհանրական բնույթը արդի ժամանակաշրջանում, «Բանբեր» ՀՊՏՀ գիտական հանդես 3, Երևան 2013, էջ 133-140:

³⁴ Տե՛ս Simon J. The Economic Determinants of Migration. Washington, D.C: Brookings Institution. 1989, pp. 84-95.

տալիս միգրանտներին ներգրավելու այնպիսի աշխատանքներում, որոնցից հրաժարվում են տեղացի աշխատողները: Տնտեսագետների մի մասն էլ կարծում է, որ էժան աշխատուժի ներմուծումը էլ ավելի է իջեցնում ռեցիպիենտ երկրների աշխատավարձերի մակարդակը, որը բոլորովին շահավետ չէ նման երկրների տեղաբնակ աշխատողների համար:

Կարծում ենք, իրարամերժ տեսակետները վկայում են, որ անօրինական միգրացիան իսկապես ունենում է և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Բայց քանի որ երկրորդ տեսակետի կողմնակիցների փաստարկներն ավելի ծանրակշիռ են, ուստի ռեցիպիենտ երկրները միջոցներ են ձեռնարկում հնարավորինս կանխելու անօրինական միգրացիան: Այդ նպատակով մի շարք երկրներում նույնիսկ կիրառվում են զսպող մեթոդներ, որոնք միշտ չէ, որ արդյունավետ են:


Ամփոփելով կցանկանայինք նշել, որ չնայած յուրաքանչյուր տեսությունից ստացված հիմնավորումները, ենթադրություններն ու հիպոթեզները միմյանց առանձնապես չեն հակասում, սակայն միգրացիոն քաղաքականության ձևավորման համար ունեն բավականին տարբեր նշանակություններ: Մեր կարծիքով արտագաղթը (էմիգրացիան) թուլացնելու լավագույն միջոցը դոնոր երկրներում տնտեսական առաջընթացի ապահովումն է և բարձր որակավորում ունեցող աշխատատեղերի ստեղծումը:

1.2 Աշխատուժի միջազգային միգրացիոն հոսքերի արդի ուղղությունները

Արդի ժամանակներում աշխատուժի միջազգային միգրացիան ստացել է գլոբալ բնույթ՝ ընդգրկելով գրեթե բոլոր երկրներն ու մայրցամաքները, հասարակության սոցիալական բոլոր շերտերը: Համաշխարհային տնտեսության աշխատանքային ռեսուրսները բնութագրող հիմնական ցուցանիշներից մեկը աշխարհի բնակչության թվաքանակն է: 2016թ. դրությամբ աշխարհի բնակչությունը կազմում էր մոտ 7.5 մլրդ մարդ, այն դեպքում, երբ XX դարի կեսերին ընդամենը 2,5 մլրդ էր: Բնակչության թվաքանակի տարեկան աճը կազմում է մոտ 30 մլն մարդ: ՄԱԿ-ի կանխատեսումների համաձայն՝ աշխարհի բնակչությունը 2100թ.-ին կհասնի 11.2 մլրդ մարդու (տե՛ս

հավելված/գծապատկեր 1): Բնակչության 60%-ը ապրում է Ասիայում, 15%-ը Աֆրիկայում, 12%-ը՝ Եվրոպայում, 6%-ը՝ Հյուսիսային Ամերիկայում՝ 5%, Լատինական Ամերիկայում՝ 9%-ը և 0.5%-ը՝ Ավստրալիայում: Աշխատանքային ռեսուրսները (աշխատունակ տարիքի բնակչությունը) կազմում են աշխարհի բնակչության շուրջ 60-65%-ը³⁵: Բնակչության թվաքանակը ավելի արագ է աճում զարգացող երկրներում: Սակայն հարկ է նշել, որ վերջին 30 տարիների ընթացքում ընդհանուր առմամբ բնակչության թվաքանակի աճը դանդաղել է:

2016թ. մոտ 275 մլն մարդ, այսինքն՝ աշխարհի բնակչության մոտ 3.4%-ը միգրանտ է: Դրանց 60% բնակվում է զարգացած, իսկ 40%-ը զարգացող երկրներում: Առավել զարգացած երկրներում յուրաքանչյուր 10-րդ բնակիչը միգրանտ է, իսկ զարգացող երկրներում՝ 70-ից մեկը: Տարիներ շարունակ փոփոխության չի ենթարկվում նաև հիմնական ընդունող երկրների դասավորվածությունը: Այսպես, ԱՄՆ-ը շարունակում է գրավել առաջին տեղը՝ 47 մլն. մարդ, նրան հաջորդում են Ռուսաստանը և Գերմանիան 12 և 10 մլն մարդ համապատասխանաբար, Սաուդյան Արաբիան՝ 9.8 մլն. մարդ, Միացյալ Թագավորությունը՝ 9 մլն. մարդ և այլն (տես գծապատկեր 1.1):




Գծապատկեր 1.1 Աշխատուժի միգրացիայի առաջատար ռեցիպիենտ երկրները 2015թ. (մլն մարդ)³⁶

³⁵ Տե՛ս http://www.wikipedia.org/wiki/World_population

³⁶ Տե՛ս International Migration Report 2015 Highlight, United Nations 2016, p.11

Սակայն բնակչության ընդհանուր թվում միգրանտների ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Արևմտյան Ասիայի երկրները. Քաթար՝ 87%, ԱՄԷ՝ 70%, Քուվեյթ 69%, Հորդանան 46% և Պաղեստին 44%: (տես գծապատկեր 1.2): Ընդ որում՝ միգրանտների 71%-ը բնակվում է աշխարհի բարձր եկամուտ ունեցող երկրներում (միջին հաշվով, այս երկրների բնակչության մոտ 10%-ը կազմում են ներգաղթողները):³⁷

Ամենալայնածավալ միգրացիոն հոսքերի 10 ուղղություններից են Մեքսիկա-ԱՄՆ (12 մլն մարդ), Հնդկաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ (3 մլն մարդ), ՌԴ-Ուկրաինա (3 մլն մարդ), Ուկրաինա-ՌԴ (3 մլն մարդ), Բանգլադեշ-Հնդկաստան (3 մլն մարդ), Թուրքիա-Գերմանիա (2.7 մլն մարդ), Ղազախստան-ՌԴ (3 մլն մարդ), ՌԴ-Ղազախստան (3 մլն մարդ), Չինաստան-Հոնգ Կոնգ (2 մլն մարդ), Չինաստան-ԱՄՆ (2 մլն մարդ) (տե՛ս հավելված/գծապատկեր 2, 3): Այնուհանդերձ, միջազգային միգրանտների ավելի քան 75%-ը մեկնում են այն երկրներ, որոնցում մարդկային զարգացման համաթիվն ավելի բարձր է, քան իրենց երկրներում:



Գծապատկեր 1.2 Բնակչության ընդհանուր թվի մեջ, օտարերկրյա աշխատուժի ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող երկրները 2015թ.³⁸

Նշենք, որ այսօր զարգացած երկրներում աշխատուժի քանակի աճի տեմպերը գնալով

³⁷ Տե՛ս International Migration Report 2015 Highlight, United Nations 2016, p.5

³⁸ Տե՛ս International Migration Report 2015 Highlight, United Nations 2016, p.24

զիջում են աշխարհի մնացած երկրների համապատասխան ցուցանիշներին: Այսպես, ըստ կանխատեսումների՝ 2050թ. առավել զարգացած երկրներում աշխատուժի քանակը կշարունակի տատանվել 600 մլն-ի սահմանում, այն դեպքում, երբ պակաս զարգացած երկրներում այն ներկայիս 2.4 մլրդ-ից 2020թ. կհասնի 3.0 մլրդ-ի, իսկ 2040թ.՝ 3.6 մլրդ-ի³⁹:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում աստիճանաբար տեղի ունեցավ միգրացիայի ձևի փոփոխություն. վերաբնակեցման նպատակով մշտական միգրացիան իր տեղը զիջեց աշխատանքի նպատակով ժամանակավոր միգրացիային: Դրա հետևանքով աճեց միգրանտների թիվը, և աննախադեպ չափերի հասան նրանց կողմից կատարվող տրանսֆերտները, որոնք փոխանցվում են զբաղվածության երկրից դեպի ծագման երկիր և էական նշանակություն ունեն աշխատուժ արտահանող երկրների տնտեսությունների համար: Չնայած աղքատ երկրներում միգրացիայի և զարգացման միջև փոխկապվածությունը երկարատև հետազոտությունների առարկա է եղել, այնուամենայնիվ մինչ այժմ գոյություն չունի մեկ ընդհանուր տեսակետ աշխատուժ արտահանող երկրների տնտեսությունների վրա միգրացիայի և արտագնա աշխատողների դրամական փոխանցումների ազդեցության վերաբերյալ: Սակայն ակնհայտ է, որ արտագաղթողների կողմից իրականացվող այդ փոխանցումների գումարը բավականին մեծ է և զարգացող երկրներից շատերի համար հանդիսանում է արտարժույթի հիմնական աղբյուր և կարևորագույն դեր է խաղում դոնոր երկրների տնտեսական զարգացման վրա⁴⁰:


2016թ. տվյալներով աշխարհի տարբեր երկրների միջև միգրանտների կատարած դրամական փոխանցումների ընդհանուր ծավալը կազմել է 426 մլրդ ԱՄՆ դոլար, որից միայն 404 մլրդ ԱՄՆ դոլարը փոխանցվել է զարգացող երկրներ: Այս ցուցանիշը 2015 թ.-ի համեմատ նվազել է 2.4%-ով:⁴¹ Այս անկումը հիմնականում պայմանավորված է Եվրոպայում և ՌԴ-ում վերջին 3 տարիների տնտեսական զարգացման տեմպերի ցածր ցուցանիշների, ինչպես նաև շատ երկրներում միգրացիոն

³⁹ Տե՛ս World Migration Report 2015, The Future of migration: Building capacities for change, IOM Geneva, p.3

⁴⁰ Տե՛ս Վ. Ղալումյան, Աշխատուժի միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, «Ֆինանսներ և էկոնոմիկա» 1(163), Երևան 2014, էջ 53-56:

⁴¹ Տե՛ս Migration and Development Brief 27, Migration and Remittances Unit, Recent Development and Outlook, World Bank, 2017, p.1

քաղաքականության խստացման հետ: Ազդեցություն է ունեցել նաև Եվրոյի և Ռուբլու արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ: Միգրանտների փոխանցումներ ստացող հիմնական 10 երկրներն են Հնդկաստանը (62.7 ԱՄՆ մլրդ դոլար), Չինաստանը (61 ԱՄՆ մլրդ դոլար), Ֆիլիպինները (29.9 ԱՄՆ մլրդ դոլար), Մեքսիկան (28.5 ԱՄՆ մլրդ դոլար), Պակիստանը (19.8 մլրդ ԱՄՆ դոլար), Նիգերիան (19 մլրդ ԱՄՆ դոլար), Եգիպտոսը (16.6 մլրդ ԱՄՆ դոլար), Բանգլադեշը (13.7 մլրդ ԱՄՆ դոլար), Վիետնամը (13.4 մլրդ ԱՄՆ դոլար), Ինդոնեզիան (9.2 մլրդ ԱՄՆ դոլար):



Գծապատկեր 1.3 Միգրանտների տրանսֆերտներ ընդունող առաջատար 10 երկրները (2016թ., մլրդ ԱՄՆ դոլար)⁴²


Սակայն պետք է նշել, որ դրանց իրական ծավալները, ներառյալ չգրանցված մուտքերը, պաշտոնական և ոչ պաշտոնական տվյալներով անհամեմատ ավելի բարձր են:⁴³

Տրանսֆերտների տեսակարար կշռով ՀՆԱ-ում 2016թ.-ին առաջին տեղում էր Ղրղզստանը՝ 34.5% Նեպալը՝ 29.7% Լիբերիան՝ 29.6% Հայիթին՝ 27.8%, Տոնգան՝


⁴² St'u Migration and Development Brief 27, Migration and Remittances Unit, Recent Development and Outlook, Figure 1.2, World Bank, 2017, p. 3

⁴³ St'u Migration and Development Brief 27, Migration and Remittances Unit, Recent Development and Outlook, Figure 1.2 World Bank, 2017, p.3

27.8%, Տաջիկստանը՝ 26.9%, ապա հաջորդում են, Մոլդովան՝ 21.7%-ը, Կոմորոսը՝ 21.3%, Գամբիան՝ 20.4% և Հոնդուրասը՝ 18.4%: Սխալ կլիներ պնդել, որ միջազգային փոխանցումների գերակշիռ մասը կուտակվում է ամենաաղքատ երկրներում: Զարգացող երկրների կողմից ստացվող բոլոր փոխանցումների գրեթե կեսը հոսում է դեպի միջին եկամուտ ունեցող երկրների ստորին խումբը, մինչդեռ հոսքերի մյուս կեսը (միևնույն համամասնությամբ)՝ դեպի միջին եկամուտ ունեցող երկրների վերին խումբը և ցածր եկամուտ ունեցող երկրները:



Գծապատկեր 1.4 Ստացված տրանսֆերտների բաժինը ՀՆԱ-ում (2016թ., %-ներով)⁴⁴



Գծապատկեր 1.5 Միգրանտների տրանսֆերտներ ընդունող ԱՊՀ առաջատար 5 երկրները (2016թ., մլրդ ԱՄՆ դոլար)⁴⁵

⁴⁴ Տե՛ս նույն տեղում

⁴⁵ Տե՛ս Migration and Development Brief 27, Migration and Remittances Unit, Recent Development and Outlook, Figure A.2 World Bank, 2017, p.23

2016թ.-ին ամենախոշոր տրանսֆերտներ ընդունող ԱՊՀ երկրները եղել են ՌԴ-ն և Ուկրաինան՝ 6.2 մլրդ ԱՄՆ դոլար համապատասխանաբար, այնուհետև Ուզբեկստանը՝ 2.3 մլրդ ԱՄՆ դոլար , որին հետևում են՝ Ղրղզստանը՝ 2 մլրդ ԱՄՆ դոլար, և Տաջիկստանը՝ 1.8 մլրդ ԱՄՆ դոլար: Հարկ ենք համարում նաև նշել Վրաստանը՝ 1.5 մլրդ ԱՄՆ դոլար տրանսֆերտների ծավալով, թեպետ վերջինս այլևս ԱՊՀ անդամ երկիր չի: ԱՊՀ-ում տրանսֆերտների տեսակարար կշռով ՀՆԱ-ում առաջին տեղում է Ղրղզստանը՝ 34.5%, այնուհետև Տաջիկստանը՝ 26.9%, ապա Մոլդովան՝ 21.7 % և Հայաստանը՝ 11.3%, իսկ Վրաստանը՝ 10.3%:⁴⁶ Ռուսաստանը հանդիսանում է տրանսֆերտների ամենագլխավոր աղբյուրը ԱՊՀ երկրների համար, այդ պատճառով ցանկացած, թեկուզև, աննշան տնտեսական ցնցումները ՌԴ-ում հանգեցնում են տրանսֆերտների անկմանը ԱՊՀ երկրներում:

Աշխատուժի ձգողության կենտրոնների մի մասը ավանդական են: Դրանք ձևավորվել են դեռևս XVIII-XIX դարերում, իսկ մյուսները նոր են: Ավանդական կենտրոնների թվին պատկանում են՝ ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները, Ավստրալիան⁴⁷: Աշխարհի տնտեսապես զարգացած ամենահզոր երկիրը՝ ԱՄՆ-ը, ամեն տարի ավելի շատ միգրանտներ է ընդունում, քան աշխարհի մյուս երկրները միասին վերցրած: XX դարի 50-ական թվականներից մինչ օրս ԱՄՆ-ը իրակացնում է «ուղեղների ներգրավման» քաղաքականություն: Աշխատող միգրանտները ապահովում են ամերիկյան աշխատուժի զգալի մասը: ԱՄՆ-ը ընդունում է և՛ որակավորում չունեցող, և՛ բարձր որակավորմամբ աշխատուժ: Առաջինն ընդունում է Մեքսիկայից և Կարիբյան ավազանի երկրներից, իսկ երկրորդը՝ աշխարհի մյուս բոլոր երկրներից⁴⁸: ԱՄՆ-ում էմիգրանտների ներգրավվածությունը տնտեսական ակտիվ գործունեությանը 7%-ով բարձր է, քան տեղական բնակչությանը (համապատասխանաբար 57% և 50%), իսկ ՀՆԱ-ի ծավալը, որը արտադրվում է միգրանտների կողմից, գնահատվում է 1.43-1.62 տրլն ԱՄՆ դոլար, որը մոտավորապես հավասար է Կալիֆոռնիա նահանգի ՀՆԱ-ին⁴⁹: Միայն անօրինական ներգաղթյալների ամբողջական եկամուտը գնահատվում է

⁴⁶ Տե՛ս նույն տեղում

⁴⁷ Տե՛ս И. Цапенко, Причины, обуславливающие выбор страны въезда

⁴⁸ Տե՛ս Գ. Աղաջանյան և այլք, ՄՏՀ ձեռնարկ, 2008, էջ 171

⁴⁹ Տե՛ս А. Коробков, В. Мукомель, «Опыт миграционный политики США: уроки для России», Москва 2008, стр. 22

մոտ 350 մլրդ ԱՄՆ դոլար⁵⁰:

Աշխատանքային իմիգրացիան ԱՄՆ-ում կատարվում է 2 սխեմայով.

- աշխատանքային միգրանտի կարգավիճակ ստանալու միջոցով, երբ միգրանտը ԱՄՆ է ժամանում ամերիկյան գործատու ընկերության հրավերով (տարեկան այս եղանակով ամերիկյան կառավարության կողմից 140 հզ. թույլտվություն է տրվում աշխատանքային իմիգրանտների համար):
- ոչ իմիգրացիոն կարգավիճակի ձեռքբերման միջոցով որպես ժամանակավոր աշխատող ժամանելով (իշխանությունների կողմից սահմանափակվում են ժամկետները)⁵¹:

Տարեկան 55 հազար «գրին քարտեր» խաղարկվում են վիճակախաղով, ևս 90 հազար՝ նախատեսված է ԱՄՆ-ում ապաստան գտած փախստականների համար: Սահմանվում են նաև հատուկ իմիգրացիոն քվոտաներ և քվոտաներ աշխատողների համար:

Աշխատուժի 5%-ը ԱՄՆ է ներգաղթում անօրինական ճանապարհով: Անօրինական իմիգրացիան կանխելու նպատակով իրականացվում է սահմանային վերահսկողության և անօրինական միգրանտների որոնում երկրի ներսում համապատասխան մարմինների կողմից:

Ուսանողները աշխատելու իրավունք են ձեռք բերում այն պայմանով, որ աշխատանքը չլինի նրանց հիմնական զբաղմունքը կամ եկամտի աղբյուրը:

Չնայած այն հանգամանքին, որ տարեկան հազարավոր մարդիկ գնում են ԱՄՆ աշխատելու և բնակություն հաստատելու նպատակով, այնուհանդերձ շատ ամերիկացիներ լքում են երկիրը տարբեր նպատակներով: Սակայն որպես ռեցիպիենտ երկիր, արտագաղթը ամերիկյան տնտեսության համար հիմնախնդիր չէ, և այստեղ առավելապես մեծ ուշադրություն են դարձնում իմիգրացիոն քաղաքականությանը:

Աշխատուժի ձգողության մյուս խոշոր ավանդական կենտրոնը Արևմտյան Եվրոպայի երկրներն են, որտեղ աշխատուժի միգրացիայի ինտենսիվ գործընթացները

⁵⁰ Տե՛ս William F. Ford. «immigrationomics: A Discussion of Some Key Issues.» *Economic Education Bulletin*. Vol.47. no. 10, October 2007, 2, 3, 5

⁵¹ Տե՛ս www.rospersonal.ru, Иммиграционная политика и использование иностранной рабочей силы в США.

ուժեղացել են հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Եվրոպայի զարգացած երկրները օգտագործել են Իսպանիայի, Պորտուգալիայի, Հունաստանի և Հարավսլավիայի էժան աշխատուժը: ԵՄ-ի երկրների մեջ մտնող երկրներին բնորոշ է միգրացիայի 2 տեսակ՝

- աշխատուժի միգրացիա ԵՄ անդամ երկրների միջև: Նման հոսքերի թիվն աճում է մեծ չափերով: Դա վկայում է այն մասին, որ աստիճանաբար էլ ավելի են խորանում ինտեգրացիոն գործընթացները ԵՄ երկրների միջև,
- աշխատուժի միգրացիա աշխարհի մյուս երկրների հետ: Արևմտյան Եվրոպայի երկրներում միգրանտների և նրանց ընտանիքների թիվն արդեն հասել է 1.3 մլն-ի: Աշխատուժի հիմնական ներմուծողներն են Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Բելգիան, Շվեյցարիան և Հոլանդիան: Այդ երկրներին աշխատուժ մատակարարում են Թուրքիան, Իտալիան, Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի երկրները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ երկրները⁵²:

Եվրամիության շրջանակներում միգրանտների 40%-ից ավելին նրա անդամ երկրներից են, որտեղ գոյություն ունի աշխատուժի միասնական շուկա, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշխատուժի ազատ տեղաշարժի համար: 2013թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Եվրամիության 27 երկրներում բնակվում էին 33.5 մլն օտարերկրյա քաղաքացիներ: Ամենամեծ թվով օտարերկրացիներ գրանցվել են Գերմանիայում, Իսպանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում:

Աշխատուժի ձգողության ավանդական կենտրոններից է նաև Ավստրալիան: Այստեղ աշխատում են մոտ 200 հազար արտասահմանցի: Միգրացիոն հոսքերը ձևավորվում են հիմնականում Արևելյան և Հարավարևելյան Ասիայի, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներից: Ավստրալիան առաջին հերթին ընդունում է այն միգրանտներին, որոնք նախապես խոստանում են այդ երկրի տնտեսության մեջ կատարել ներդրումներ⁵³:

⁵² Տե՛ս Ирина Молодикова, Иммиграция в страны Европейского Союза. Москва 2005.

⁵³ Տե՛ս Գ. Աղաջանյան և այլք, ՄՏՀ ձեռնարկ, 2008, էջ 171

Իմիգրացիան Եվրոպայում 2015թ. (հազ.մարդ)⁵⁴

Երկիր	Արտասահմանյան քաղաքացիներ	Բնակչության մեջ %-ներով
Բելգիա	1300.5	11.6%
Բուլղարիա	65.6	0.9%
Չեխիա	457.3	4.3%
Դանիա	422.5	7.5%
Գերմանիա	7539.8	9.3%
Էստոնիա	191.3	14.6%
Իռլանդիա	550.6	11.9%
Հունաստան	822.0	7.6%
Իսպանիա	4454.4	9.6%
Ֆրանսիա	4355.7	6.6%
Իտալիա	5014.4	8.2%
Կիպրոս	144.6	17.1%
Լատվիա	298.4	15%
Լիտվա	22.5	0.8%
Լյուքսեմբուրգ	258.7	45.9%
Հունգարիա	145.7	1.5%
Մալթա	27.5	6.4%
Նիդերլանդներ	773.3	4.6%
Ավստրիա	1131.2	13.2%
Լեհաստան	108.3	0.3%
Պորտուգալիա	395.2	3.8%

XX դարի 60-70-ական թթ. տարբեր տարածաշրջանների տնտեսական զարգացման առանձնահատկությունները ձևավորել են աշխատուժի ձգողության նոր կենտրոններ: Դրանցից են՝

- Հարավարևելյան Ասիայի երկրները, պայմանավորված տնտեսական բուռն զարգացմամբ: Զգալիորեն ավելանում է աշխատանքային միգրանտների ներհոսքը, որոնք հիմնականում կատարում են ժամանակավոր աշխատանքներ: Հատկապես դա բնորոշ է Հարավային Կորեային և Մալազիային: Տարածաշրջանում ռեցիպիենտ երկրներ են հանդիսանում «4 վագրերը» (Հարավային Կորեա, Սինգապուր, Հոնկոնգ, Թայվան), իսկ դոնոր են Չինաստանը, Լաոսը, Կամբոջան և Վիետնամը:
- Մերձավոր Արևելքի նավթ արդյունահանող երկրները, Հարավարևելյան

⁵⁴ St'u Population of foreign citizens in the EU27 in 2015, Eurostat Newsrelease, 2016

Ասիայի երկրները, Ռուսաստանը, ինչպես նաև աֆրիկյան և Լատինական Ամերիկայի զարգացող երկրները: Նավթ արդյունահանող երկրները 1970-ական թթ. կեսերին դարձան աշխատուժի միգրացիայի ձգողության կենտրոն: Միգրանտներն այստեղ են գալիս մոտակա արաբական երկրներից (Եգիպտոս, Սիրիա, Եմեն), ինչպես նաև Հնդկաստանից, Պակիստանից, Բանգլադեշից, Հարավային Կորեայից, Ֆիլիպիններից: Պարսից ծոցի երկրներում աշխատուժի ընդհանուր թվաքանակի մեջ իմիգրանտների բաժինը ամենամեծն է Քաթարում՝ 92%, ՄԱԷ-ում՝ 89%, Քուվեյթում՝ 86%, Օմանում՝ 70%, Սաուդյան Արաբիայում՝ 60 %, Բահրեյնում՝ 51%:

- Լատինական Ամերիկայում աշխատուժի ձգողության հիմնական երկրներն են Արգենտինան և Վենեսուելան, որոնք աշխատուժ ներմուծում են տարածաշրջանի մյուս երկրներից, ասիական և աֆրիկյան պետություններից, հետսոցիալիստական երկրներից: Լատինական Ամերիկայում միգրացիան ունի սեզոնային բնույթ. առավել հետամնաց լատինաամերիկյան երկրներից աշխատուժը հոսում է դեպի Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա: Վերջին տարիներին այս տարածաշրջանում զարգացած երկրների ՎԱԿ-երը հիմնել են ավտոմոբիլաշինական ընկերություններ, որոնք նախադրյալներ են ստեղծում սեզոնային միգրացիան մշտականի վերածելու համար:
- Հարավային Աֆրիկան, հատկապես Հարավաֆրիկյան Հանրապետությունը, որտեղ միգրանտներն աշխատանքի են անցնում ալմաստի, ոսկու և ուրանի արդյունահանող ճյուղերում,
- Խորհրդային համակարգի փլուզումից հետո աշխատուժի ներմուծման կենտրոններ են դարձել Ռուսաստանը, Չեխիան, Լեհաստանը և այլն: Ընդ որում՝ Ռուսաստանը՝ որպես խոշոր ռեցիպիենտ երկիր, միաժամանակ նաև դոնոր երկիր է. աշխատուժի և արտահոսքը, և ներհոսքը հասնում են հսկայական չափերի: Քանի որ Ռուսաստանն ունի լայնածավալ և զարգացած աշխատանքային շուկա, ինչպես նաև լայն հնարավորություններ է տալիս բարձր աշխատավարձով աշխատանք գտնելու, ապա այս ամենը ակտիվորեն գրավում է ժամանակավոր միգրանտներին ԱՊՀ երկրներից և այլ

պետություններից: Մոսկվայում մեծ է Չինաստանից, Վիետնամից և Վրաստանից եկած միգրանտների թիվը: 2013թ. չինացի և վիետնամցի միգրանտները կազմում էին ռուսական աշխատանքի շուկայում պաշտոնապես ներգրավված օտարերկրյա աշխատուժի կեսից ավելին: ԱՊՀ երկրներից աչքի են ընկնում Ուկրաինան և Մոլդովան, որոնց միգրանտները կազմում են Մոսկվայի միգրանտների 1.4%-ը: Միգրանտները աշխատում են որպես վաճառողներ շուկաներում, կրպակներում, որպես խոհարարներ և մատուցողներ՝ ռեստորաններում, սրճարաններում և այլն: Մոսկվայում գոյություն ունեն ավելի քան 170 խոշոր շուկաներ, որտեղ օրինական կերպով աշխատում են օտարերկրյա քաղաքացիություն ունեցող մոտ 180 հազ. մարդ: Հաջորդ բնագավառը, որտեղ ակտիվորեն օգտագործվում է միգրանտների աշխատանքը, տրանսպորտն է և կապը: Ուկրաինայի, Մոլդովայի, Հայաստանի և ԱՊՀ այլ երկրների միգրանտները աշխատում են որպես ավտոբուսների, տրոլեյբուսների, տաքսիների վարորդներ: Ժամանակավոր միգրանտների 80-90%-ը տղամարդիկ են: Միգրանտների 30-45 %-ը մտնում են 30-39 տարիքային խմբի մեջ, 20-25 %-ը՝ 40-45 տարիքային խմբի մեջ⁵⁵:

1.3 Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա


Միգրացիոն հոսքերի ձևավորման սկզբնական շրջանում երկրների միգրացիոն քաղաքականությունն ուղղված էր վերջինիս խթանմանը: Դա պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում լայն տարածում ստացած մերկանտիլիստական մոտեցումներով, համաձայն որոնց՝ աշխատուժը հանդիսանում էր սովորական ապրանք և հետևաբար արտահանվում էր ոսկու ներհոսքի ավելացման ակնկալիքով: Սակայն արդյո՞ք աշխատուժը արտաքին առևտրի առարկա հանդիսացող սովորական ապրանք է: Որո՞նք են *աշխատուժ* ապրանքի առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ աշխատուժը նախ տնտեսական ռեսուրս է, ապա նոր առևտրի

⁵⁵ Ст'ю И. Цапенко, Движущие силы международной миграции населения, МЭМО, 2007, №3

առարկա: Իսկ տնտեսական ռեսուրսների վերաբաշխումը երկրների միջև ենթադրում է տնտեսական ներուժի ուժեղացում կամ թուլացում: Փորձենք ցույց տալ, թե ինչ է տեղի ունենում ընդունող և արտահանող երկրների արտադրական ներուժի հետ աշխատուժի միգրացիայի արդյունքում:


Դիտարկենք արտադրական հնարավորությունների կորը⁵⁶ (տես գծապատկեր 1.6), որը ցույց է տալիս A և B ապրանքների այն առավելագույն քանակությունը, որ կարելի է արտադրել երկրում առկա ամբողջ տնտեսական ռեսուրսների ներգրավման հաշվին:



Գծապատկեր 1.6. Արտադրական հնարավորությունների կորը

Գծապատկերից երևում է, որ տվյալ երկրի տնտեսական ներուժը A և B ապրանքների արտադրության այլընտրանքային տարբերակների կիրառման հնարավորություն է տալիս՝ կորի երկայնքով: Այլ կերպ ասած՝ կորի վրա գտնվող ցանկացած կետի ընտրություն կնշանակի երկրի բոլոր ռեսուրսների լրիվ օգտագործում: K կետում արտադրության մակարդակը գերազանցում է երկրի տնտեսական ներուժին, իսկ N կետում արդեն գործ ունենք ռեսուրսների ոչ լրիվ օգտագործման հետ: Այսինքն՝ գոյություն ունի գործազրկություն, չօգտագործված կապիտալ և այլն: Բնականաբար այս պարագայում գործազուրկները կսկսեն աշխատանք փնտրել արտասահմանում: Դա կմեծացնի արտադրական ներուժն՝ ընդունող երկրում և կթուլացնի այն արտահանող երկրում (գծապատկեր 1.7):

⁵⁶ Տե՛ս Պետք է նշել, որ արտադրական հնարավորությունների կորը վերացական հասկացություն է: Սակայն նրա միջոցով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել միգրացիայի հետևանքների մասին:



Գծապատկեր 1.7. Արտադրական հնարավորությունների կորն աշխատուժ ներմուծող և արտահանող երկրներում

Այսպիսով, աշխատուժի իմիգրացիան կմեծացնի ընդունող երկրի արտադրական ներուժը, և արտադրական հնարավորությունների կորը կտեղաշարժվի դեպի աջ: Ինչ վերաբերում է աշխատուժ արտահանող երկրին, ապա այստեղ, ինչպես արդեն նշեցինք, արտադրական ներուժը կթուլանա, և արտադրական հնարավորությունների կորը կտեղափոխվի ձախ: Սակայն որոշ ժամանակ անց, երբ կմեծանա ֆինանսական կապիտալի ներհոսքը էմիգրանտների կատարած տրանսֆերտների հաշվին, արտադրական ներուժը նորից կավելանա: Իսկ հետագայում միգրացիոն հոսքերի առաջացման շնորհիվ կապահովվի նաև տնտեսական առաջընթաց:

Օտարերկրյա աշխատուժի ներմուծումը հնարավորություն է տալիս տնտեսական աճ ապահովել այն երկրներում, որոնք ունեն չօգտագործված կապիտալ և աշխատուժի պակասուրդ: Սակայն հարց է ծագում, թե ազգային եկամուտի հավելաճի ո՞ր մասն է բաժին ընկնում իմիգրանտներին:

Դրա համար դիտարկենք հանրահայտ արտադրական ֆունկցիան⁵⁷

$$Q=f(K;L). \quad (1)$$

որտեղ K -ն կապիտալն է, L -ը՝ աշխատուժը, որն իր մեջ ներառում է և տեղացիներին, և օտարերկրացիներին:

Ենթադրենք, որ երկրում առկա ամբողջ կապիտալը պատկանում է տեղացիներին: Այսինքն՝ մենք անտեսում ենք այն հնարավորությունը, որ


⁵⁷ St'u The Journal of Economic Perspectives, spring 1995, page 3-18

իմիգրանտները կարող են ավելացնել ընդունող երկրի կապիտալի պաշարները: Ենթադրենք նաև, որ իմիգրանտները և տեղացիներն ունեն միևնույն աշխատանքի արտադրողականությունը: Ընդունենք նաև, որ աշխատանքի և կապիտալի առաջարկները էլաստիկ չեն գնի նկատմամբ:

$$L=N \text{ (տեղացիներ)} + M \text{ (միգրանտներ)}, (2)$$

Ինչպես գիտենք, արտադրված ազգային եկամուտը՝ Q -ն, բաշխվում է կապիտալի և աշխատուժի սեփականատերերի միջև՝ ըստ այդ գործոնների սահմանային արդյունքի: Ենթադրենք, կապիտալի օգտագործման գինը՝ r_0 է, իսկ աշխատանքինը՝ w_0 : Հետևաբար մինչև միգրանտների ընդունումը ազգային եկամուտը կլինի.

$$Q_N=r_0K+w_0L, (3)$$



Գծապատկեր 1.8 Ազգային եկամտի հավելան իմիգրացիայի հաշվին

Դիտարկենք գծապատկեր 1.8-ը, որը ցույց է տալիս անհավասարակշռությունն աշխատանքի շուկայում: Քանի որ կապիտալի առաջարկը ճկուն չէ, աշխատանքի սահմանային արդյունքի կորից (MP_L) ներքև գտնվող հատվածը կազմում է տնտեսության ամբողջ եկամուտը: Այսինքն՝ մինչև իմիգրանտների ժամանումը տնտեսության ամբողջ եկամուտը, որն արտադրվել է տեղացիների կողմից, կազմում է Q_N , ինչը գրաֆիկում $ABNO$ քառանկյունն է: Երբ տնտեսություն է մտնում նոր աշխատուժ, վերջինիս առաջարկն ավելանում է, և բնականաբար աշխատավարձն ընկնում է մինչև w_1 : Տնտեսության ամբողջ եկամուտն այս անգամ պատկերում է $ACLO$ քառանկյունը: Սակայն նկատենք, որ թեև աշխատավարձն ընկել է, աշխատողների արտադրողականության մակարդակը մնացել է նույնը: Այսինքն՝ BCD եռանկյունը, որը

եկամտի հավելաճն է իմիգրանտների հաշվին (*իմիգրացիոն ավելցուկ*): Եթե աշխատանքի պահանջարկը լիներ ճկուն գնի նկատմամբ և իմիգրացիայի արդյունքում աշխատավարձերի մակարդակը չընկներ, ապա ամբողջ եկամուտը բաժին կընկներ իմիգրանտներին, իսկ տեղացիները ոչինչ չէին ստանա: Այլ կերպ ասած՝ *իմիգրացիոն ավելցուկը* գոյանում է միայն այն ժամանակ, երբ իմիգրացիայի հետևանքով աշխատավարձի մակարդակն ընկնում է:

Իմիգրացիոն ավելցուկը (A) կարելի է հաշվարկել հետևյալ կերպ՝

$$A=1/2 M(w_0-w_1), (4)$$

Հարկ է նշել, որ իմիգրացիան նաև վերաբաշխող գործառույթ է կատարում: Այսինքն՝ վերաբաշխում է հարստությունը՝ փոխանցելով այն աշխատողներից սեփականատերերին: Մասնավորապես, տեղացի աշխատողներն իմիգրացիայի հետևանքով կորցնում են w_0BDw_1 քառանկյան չափով: Իսկ կապիտալի սեփականատերերը շահում են, ինչպես այն քառանկյան, այնպես էլ իմիգրացիոն ավելցուկի եռանկյան չափով: Աշխատողների կորուստը և կապիտալի սեփականատերերի օգուտը կարելի է հաշվել այսպես.

1. տեղացի աշխատողների եկամուտների փոփոխություն/ $Q=sem(1-m)$,
2. ձեռնարկատերերի եկամուտների փոփոխություն/ $Q=-sem(1-1/2m)$.

որտեղ s -ն ազգային եկամտի այն մասն է, որ բաժին է ընկնում աշխատանքին, e -ն աշխատավարձի ճկունությունն է աշխատուժի առաջարկի նկատմամբ, և վերջապես m -ը դա իմիգրանտների տեսակարար կշիռն է աշխատողների ընդհանուր թվի մեջ ($m=M/L$):

Իմիգրացիայի արդյունքում առաջացած ազգային եկամտի հավելաճի վերլուծության ժամանակ՝ մենք ընդունեցինք, որ իմիգրանտների և տեղացիների աշխատանքի արտադրողականության մակարդակը հավասար է: Սակայն իրականում դա այդպես չէ, և իմիգրացիոն ավելցուկի հաշվարկման համար բնականաբար անհրաժեշտ է ընդունել, որ գոյություն ունեն ինչպես բարձր, այնպես էլ ցածր որակավորում ունեցող իմիգրանտներ: Իսկ ո՞ր կարգի իմիգրանտների ներհոսքն է բերում ազգային եկամտի առավելագույն աճի:

Ենթադրենք, գոյություն ունեն երկու տեսակի աշխատողներ՝ որակյալ (L_s) և

անորակ (L_U): Որակյալ աշխատողների տեսակարար կշիռը տեղացի աշխատողների ընդհանուր թվի մեջ նշանակենք p -ով: Այդ նույն ցուցանիշն իմիգրանտների համար՝ b -ով: Ենթադրենք նաև, որ գոյություն ունի միայն մեկ արտադրության գործոն՝ աշխատանքը, և ընդունենք, որ այդ գործոնի առաջարկն ընդհանրապես ճկուն չէ գնի նկատմամբ: Արտադրական ֆունկցիան կլինի հետևյալը.

$$Q=f(L_S;L_U), (5)$$

Այս պայմաններում իմիգրացիոն ավելցուկը կլինի դրական միայն այն դեպքում, երբ b -ն և p -ն լինեն տարբեր: Իսկ եթե, $b=p$, ապա իմիգրացիայի արդյունքում աշխատուժի շուկայում գները չեն փոփոխվի, և իմիգրացիոն ավելցուկն այդ դեպքում հավասար կլինի զրոյի, քանի որ արտադրական ֆունկցիան ունի կայուն հատույց մասշտաբից:

Աշխատուժի միգրացիան ազդում է ընդունող և արտահանող երկրների բնակչության թվաքանակի, էթնիկական, սեռատարիքային կազմի վրա, և ապա միգրանտներն իրենք են ադապտացվում և ինտեգրվում ընդունող երկրի հասարակության հետ:

Բնակչության աճի և միգրացիայի միջև գոյություն ունի սերտ կապ, որը խիստ անդրադառնում է բնակչության որակական կազմի վրա:

Այդպիսով, ընդունող երկիրը շահում է օտարերկրյա աշխատուժ ներմուծելուց միայն այն ժամանակ, երբ իմիգրանտների որակական կազմը տարբերվում է տեղական աշխատուժի որակական կազմից: Իսկ իմիգրացիոն ավելցուկը առավելագույնի կհասնի այն ժամանակ, երբ իմիգրանտների 100 տոկոսը լինի կամ որակյալ, կամ անորակ աշխատուժ⁵⁸:

Հարկ է նշել, որ գործնականում երկրներն ավելի շատ ձգտում են թույլատրելու որակյալ աշխատուժի իմիգրացիան, քանի որ փորձը ցույց է տալիս, որ անորակ աշխատուժի պահպանման հետ կապված խնդիրներն ավելի շատ են: Մասնավորապես, ցածր որակավորում ունեցող աշխատողներն ավելի հաճախ են դիմում պետական ծառայություններին, ինչը բնականաբար լրացուցիչ ծախսեր է պահանջում:

⁵⁸ Այս մոտեցումը բավականին նման է արտաքին առևտրի համեմատական առավելությունների տեսությանը, համաձայն որի երկրները շահում են արտաքին առևտրից այն դեպքում, երբ արտահանում են այն ապրանքները, որոնք արտադրության համար ունեն համեմատական առավելություններ:

Մենք անդրադարձանք իմիգրացիայի տնտեսական օգուտին, սակայն պետք է ընդգծել նաև այն բացասական կողմերը, որ ունի այս երևույթը: Մասնավորապես, ինչպես արդեն նշել ենք, իմիգրացիայից շահում են միայն ձեռնարկատերերն՝ էժան և որակյալ աշխատուժ ընդունելով: Մինչդեռ, տեղացի աշխատողները կորցնում են իրենց աշխատանքը, ինչը լարվածություն է առաջացնում տեղացիների շրջանում: Բացի այդ, աշխատավարձերի մակարդակի անկումը վրդովեցնում է արհմիություններին, և վերջիններս տարբեր միջոցներով ձգտում են նորից բարձրացնել այն: Եթե դա նրանց հաջողվում է, իմիգրացիոն ավելցուկը հավասարվում է զրոյի: Եվ վերջապես իմիգրացիայի արդյունքում ձևավորվում է ֆինանսական կապիտալի արտահոսք, ինչն իր բացասական հետքն է թողնում ընդունող երկրի վճարային հաշվեկշռի վրա:

Եթե իմիգրացիայի տնտեսական հետևանքներն անդրադառնում են աշխատուժ ներմուծող երկրների վրա, ապա էմիգրացիայի տնտեսական հետևանքներն ի հայտ են գալիս արտահանող երկրներում: Փորձենք կիրառել իմիգրացիոն ավելցուկի տեսության տրամաբանությունը էմիգրացիայի տնտեսական հետևանքները վերլուծելու համար: Այսպես, էմիգրացիայի հետևանքով մայր երկրում նվազում է աշխատուժի առաջարկը, և արդյունքում բարձրանում է միավոր աշխատուժի գինը: Դա կամ առաջացնում է գործազրկության նոր ալիք, կամ գործարարներն ուղղակի բարձրացնում են աշխատավարձը, ինչի հետևանքով ձևավորվում է «էմիգրացիոն պակասուրդ»: Սակայն դեպքերի այսպիսի զարգացումը գործնականում անհնար է՝ այն պարզ պատճառով, որ էմիգրացիայի երկրները սովորաբար ունեն աշխատանքային ռեսուրսների ավելցուկ, և էմիգրացիոն հոսքերը ձևավորվում են այդ ավելցուկի հաշվին, ինչը գրեթե չի անդրադառնում աշխատուժի շուկայի վրա: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, էմիգրացիայի արդյունքում տեղի է ունենում ֆինանսական կապիտալի ներհոսք, որի խելամիտ օգտագործումը հնարավորություն է տալիս տնտեսական առաջընթաց արձանագրել: Այնուամենայնիվ, էմիգրացիոն հոսքերի ձևավորման ընթացքում տեղի է ունենում «ուղեղների արտահոսք», իսկ դա միանշանակ բացասաբար է անդրադառնում դոնոր երկրի վրա:

Այսպիսով, էմիգրացիայի հետևանքով թուլանում է լարվածությունը հասարակության մեջ՝ կապված գործազրկության մակարդակի հետ: Մեծանում է մեկ շնչին ընկնող

ՀՆԱ-ի ցուցանիշը, քանի որ կրճատվել է բնակչության թվաքանակը (իհարկե, այս ցուցանիշը գործնականում ոչ մի կերպ չի անդրադառնում մարդկանց կյանքի որակի վրա): Հետագայում՝ արժութային հոսքերի ձևավորումից հետո, նախադրյալներ են ստեղծվում տնտեսական առաջընթացի համար: Սակայն բացի այս դրական կողմերից, էմիգրացիան ունի նաև բացասական կողմեր: Նախ, ինչպես արդեն նշեցինք, դա «ուղեղների արտահոսքն» է, երկրորդը՝ երկրի արտադրական ներուժի նվազումն է, որը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ չեն ձևավորվում էմիգրացիային հակառակ՝ ռեէմիգրացիոն հոսքեր: Նվազում է երկրի պաշտպանունակությունը, փոփոխվում է բնակչության ժողովրդագրական կազմը. ավելի մեծ տոկոս են կազմում երեխաներն ու տարիքավոր մարդիկ և այլն:

Միգրացիայի սոցիալական և ժողովրդագրական հետևանքների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ նախ միգրացիան ազդում է ընդունող և արտահանող երկրների բնակչության թվաքանակի, էթնիկական, սեռատարիքային կազմի վրա, և ապա միգրանտներն իրենք են ադապտացվում և ինտեգրվում ընդունող հասարակությանը: Հարկ է նշել, որ այսպիսի գործընթացները միանշանակ չեն ընդունվում: Ընդհանրապես դրանց դեմ են ազգային գաղափարախոսության կրողները, սակայն եթե այդ գործընթացը դիտարկենք գլոբալացման տանող գործոնների շարքում, ապա այն նպաստում է վերազգային հասարակության ձևավորմանը: Այնուամենայնիվ, չհերքենք այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների առկայությունը երկրում, երբեմն կարող է կոնֆլիկտային իրավիճակի պատճառ դառնալ:

Եթե փորձենք աշխատուժի միգրացիայի և տնտեսական աճի կապը մեկնաբանել մերկանտիլիստական մոտեցման տեսանկյունից, ապա կստացվի, որ երկրները պետք է խթանեն աշխատուժի էմիգրացիան և արգելակեն իմիգրացիան: Քանի որ, աշխատուժը ապրանք է, այն կարելի է արտահանել՝ ակնկալելով ֆինանսական կապիտալի ներհոսք: Այդպիսով, կբարելավվի վճարային հաշվեկշիռն, ինչը կարևոր է տնտեսական առաջընթացի համար: Սակայն այս մոտեցումն ունի մի շարք թերություններ, որոնցից ամենանշանակալին այն է, որ այն հեռանկարային չէ: Այսինքն՝ երբ էմիգրացիային հակառակ ռեէմիգրացիոն հոսքեր չեն ձևավորվում, և արտագաղթը մշտական բնույթ է կրում, նվազում է երկրի կապիտալի ներհոսքը, ինչը

հնարավորություն կտար ներդրումներ կատարելու գիտատեխնիկական առաջընթացի ոլորտում, և կլուծվեր այդ ոլորտում գործազրկության հետ կապված հիմնախնդիրը: Այնուամենայնիվ փաստենք, որ նման մոտեցումը գործնականում կիրառելի չէ, քանի որ դոնոր երկրներում գիտությունը գտնվում է շատ ավելի ցածր մակարդակի վրա, քան ռեցիպիենտ երկրներում:

Շատ ավելի հեռանկարային է, երբ փորձում ենք միգրացիայի և տնտեսական աճի կապը մեկնաբանել համեմատական առավելությունների տեսության միջոցով: Այսինքն՝ եթե էմիգրացիայի երկիրն ունի աշխատուժի չօգտագործված ռեզերվներ, ապա կարող է այն արտահանել, ինչը կապահովի ֆինանսական կապիտալի ներհոսք: Սակայն միաժամանակ պետք է մտածել ռեէմիգրացիոն հոսքերի ձևավորման մասին, որը կօգնի արդյունավետ կերպով ներդնելու ստացված ֆինանսական կապիտալը: Ինչ վերաբերում է էմիգրացիայի երկրներին, ապա մենք ցույց տվեցինք այն օգուտը, որ ստացվում է էմիգրացիայի արդյունքում: Սակայն որպեսզի այդ օգուտը լինի առավելագույն, պետք է ներմուծել այնպիսի աշխատուժ, որի պակասը զգացվում է, և որի պատրաստումն երկրի ներսում լրացուցիչ ծախսեր է պահանջում:

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Աշխատուժի միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները և միգրացիոն հոսքերի կարգավորման մեխանիզմները

Աշխատուժի միգրացիայի հետևանքների գնահատականը միանշանակ չէ: Ենթադրվում է, որ, վերջին հաշվով, աշխատանքային միգրացիայի հետևանքները հիմնականում կախված են մեկ հանգամանքից. արդյոք էմիգրանտները հետագայում վերադառնում են հայրենիք, թե՞ ոչ: Եթե պատասխանը դրական է, ապա աշխատանքային միգրացիայի հետևանքները դրական են ինչպես արտահանող, այնպես էլ ներմուծող երկրների համար: Եթե միգրացիան անվերադարձ է, ապա հետևանքները ուսումնասիրել և գնահատել բավականին դժվար է: Աշխատուժը տնտեսական աճի գործոններից մեկն է: Այդ իսկ պատճառով, բնական է, որ աշխատուժ ներմուծող երկրները արտասահմանյան մասնագետներին հրավիրում են այն ժամանակ, երբ աշխատուժի նկատմամբ լրացուցիչ պահանջարկ է ստեղծվում: Բնական է նաև այն, որ տեղի է ունենում հայրենադարձություն, երբ տնտեսական կոնյուկտուրան փոփոխությունների է ենթարկվում, և կրճատվում է արտասահմանյան աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Աշխատանքային միգրացիան հաճախ լինում է անվերադարձ, որի արդյունքում ընդունող երկրում տնտեսական անկումների ժամանակ աշխատուժի ավելցուկը դառնում է մակրոտնտեսական իրավիճակը ապակայունացնող գործոն: Ի հայտ եկող խնդիրները լուծելի են 2 դեպքում. առաջին՝ երբ աշխատող միգրանտների զգալի մասը բարձր որակավորում ունի, և երկրորդ՝ աշխատուժ ներմուծող երկիրը բաց է և գրավիչ ՕՈՒՆ-ների համար: Արտասահմանյան որակյալ աշխատուժի և ՕՈՒՆ-ների միավորումը խթանում է տնտեսական աճը, բարձրացնում է ազգային տնտեսության մրցունակության մակարդակը և խթանում պետքային եկամուտների աճը: Վերջին հաշվով, ընդլայնվում են սոցիալական երաշխիքների տրամադրման հնարավորությունները: Որպես օրինակ կարող ենք բերել Իռլանդիան, որը ընտրել է տնտեսության բացության արդյունավետ մոդել և ընդամենը 20 տարվա ընթացքում,

լինելով արևմտաեվրոպական ամենաաղքատ երկիրը (1 շնչի հաշվով ՀՆԱ-ով) դարձավ ամենահարուստներից մեկը: Այլ քաղաքականություն է վարում Չինաստանը, որը համեմատաբար փակ տնտեսություն ունի և աշխատուժի ավելցուկ: Չինաստանին դինամիկ աճ ապահովելու հնարավորություն է տալիս ՕՈՒՆ-ների անընդհատ ներհոսքը, որոնց համար գրավիչ են երկրում առկա էժան, որակյալ աշխատուժը և սեփականության իրավունքի երաշխիքները: Այսպիսով, մենք կարող ենք ընդգծել ժամանակակից բաց տնտեսության «ոսկե կանոնը». ՕՈՒՆ-ների ներհոսքի աճի տեմպերը համապատասխանում են արտասահմանյան որակավորված աշխատուժի աճի տեմպերին:

Համաշխարհային փորձը վկայում է, որ աշխատուժի միգրացիան անհամեմատ օգուտներ է ապահովում ինչպես աշխատուժ արտահանող, այնպես էլ ընդունող երկրներին: Սակայն աշխատուժի միգրացիան կարող է սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների պատճառ հանդիսանալ⁵⁹: Աշխատուժի միգրացիայի վերաբերյալ մեկնաբանություններ անելիս հաճախ շեշտը դրվում է ռեցիպիենտ երկրներում բացասական հետևանքների վրա. ազգամիջյան ընդհարումները, ժողովրդագրական խնդիրները, սոցիալական լարվածությունը, այն, որ օտարերկրյա աշխատողները կրճատում են աշխատատեղերի քանակը և մեծացնում են տեղի բնակչության գործազրկությունը: Իհարկե, նման խնդիրների առկայությունը չի կարելի հերքել, սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ միգրանտները նաև դրական ազդեցություն են ունենում ռեցիպիենտ երկրների տնտեսության վրա, իրենց հետ բերում են նոր փորձ, գիտելիքներ և հմտություններ: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան և Ավստրալիան, առաջացել են հենց իմիգրացիայի արդյունքում⁶⁰: 2014թ. ԵՄ երկրներում օտարերկրյա աշխատուժի ավելացումը 8 մլն. մարդով չուղեկցվեց աշխատանքի շուկայի վատթարացմամբ, նույնիսկ ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար գրանցվել է արտահանման ամենաբարձր տեմպը՝ 3.6%⁶¹: Արևմուտքի համար իմիգրացիան ավելի շատ դրական, քան բացասական երևույթ է: Ակնհայտ է, որ, եթե խոշորամասշտաբ միգրացիան չլիներ, ապա 1950-60-ական թթ. եվրոպական երկրների աշխատուժի շուկայում

⁵⁹ Տե՛ս “Роль иммиграции в экономике разбитых стран”, И. Цапенко, МЭМО, 2004, N 5, с. 30

⁶⁰ Տե՛ս А.И.Дралин, С.Г. Михнева, “Международные экономические отношения”, 2006, стр.103

⁶¹ Տե՛ս International Migration Report 2015 Highlight, United Nations 2016, p.14

կառաջանային լուրջ խնդիրներ: Կայուն տնտեսական աճի, լրիվ զբաղվածության և համեմատաբար ցածր գնաճի պայմաններում մեղմացավ ցածր վարձատրվող միգրանտների մշտական հոսքը:

Արտադրելով և սպառելով տեղական արտադրանք, վճարելով հարկեր, կատարելով խնայողություններ՝ միգրանտերն ունենում են բավականին նշանակալի ազդեցություն ընդունող երկրի տնտեսության զարգացման վրա: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ իմիգրանտները կատարում են կարևոր հասարակական աշխատանքներ այն ոլորտներում, որտեղ խիստ զգացվում է աշխատուժի պակաս: Առաջին հերթին դա վերաբերում է ցածր վարձատրությամբ, ոչ որակավորված, դժվար և վտանգավոր աշխատանքներին, որոնք տեղացիները հրաժարվում են կատարել: Օրինակ՝ Բելգիայում հանքափորների կեսը իմիգրանտներ են, Շվեյցարիայում՝ շինարարների 40%-ը, ԱՄՆ-ում՝ հողագործների 70%-ը և այլն: Իսկ նորագույն ճյուղերի զարգացումը իրականանում է շնորհիվ բարձր որակավորում ունեցող իմիգրանտների ներգրավման: ԱՄՆ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատում են 640 հազ. արտասահմանցիներ, որոնք կազմում են այդ բնագավառում զբաղվածների 18.3%-ը: Հնդկ մասնագետները, որոնք փորձառությամբ ոչնչով չեն զիջում տեղացիներին, բավականին ցածր աշխատավարձ են ստանում աշխատելով ԱՄՆ նախագահի Սպիտակ տան համակարգչային ցանցի արդիականացման ուղղությամբ: Ավելին, արտադրության որոշ ճյուղեր, այդ թվում և արտահանում ապահովողները, չէին գոյատևի առանց իմիգրանտների (օրինակ՝ ՀԱՀ-ի լեռնահանքային արդյունաբերությունը, Մալազիայի կաուչուկի և ռետինի արտադրությունը, Իսպանիայի և Դոմինիկյան Հանրապետության գյուղատնտեսական պլանտացիաները): Օտարերկրյա աշխատուժի ներհոսքը թույլ է տալիս զարգացած երկրներին ազգային աշխատուժը տեղափոխել բարձր տեխնոլոգիական ճյուղեր առանց վնաս հասցնելու այն ճյուղերին, որոնք լքում են տեղացիները: Բարձր շարժունակություն ունեցող օտարերկրյա աշխատուժի ներհոսքը հեշտացնում է ազգային տնտեսության մեջ կառուցվածքային, ճյուղային և այլ փոփոխությունները: Միգրանտները ռեցիպիենտ երկրների առանձին ճյուղերի տնտեսական զարգացմանը դինամիկա են հաղորդում: Դրա վառ օրինակ են Ինդոնեզիայի և Մալազիայի արդյունաբերության մեջ ներառված չինացի աշխատողները, Հոնկոնգի

ձեռնարկատերերը Կանադայում, հնդիկ և լիբանանցի գործարարները Աֆրիկայում, Պարսից ծոցի նավթարդյունահանող երկրներում աշխատող հնդիկներն ու պաղեստինցիները:

Միգրացիայի հետևանքներից է ռեցիպիենտ երկրների ավելի ակտիվ մասնակցությունը միջազգային առևտրին: Ըստ ուսումնասիրությունների՝ ԱՄՆ-ի իսպանախոս իմիգրանտների մոտ 10%-ը առևտրային հարաբերությունների մեջ է հայրենի երկրների հետ: Ռեցիպիենտ 10 երկրների ապրանքների արտահանումից եկամուտների ավելացումը պայմանավորված է աշխատուժի միջազգային միգրացիայով: Բացի այն, որ միգրանտները նպաստում են հայրենի երկրների արտահանման ծավալների ավելացմանը, նրանք նաև հայրենի երկիր են ներմուծում անհրաժեշտ ապրանքներ: Իմիգրանտները մեծ պահանջարկ են ներկայացնում ազգային կերակուրների, խմիչքների, երաժշտության նկատմամբ⁶²:

Օտարերկրյա աշխատուժ ներմուծող երկրների ձեռնարկատերերը շահում են նաև այն պատճառով, որ իմիգրանտների պատրաստակամությունը աշխատելու տվյալ երկրում ընդունված աշխատավարձի ստանդարտներից շատ ավելի ցածր վարձատրության դիմաց, թույլ է տալիս զգալիորեն տնտեսել աշխատանքային ծախսերը, ինչն էլ իջեցնում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքը և մեծացնում ձեռնարկատերերի շահույթը: Զարգացած շատ երկրներում գործում է աշխատուժի երկակի շուկա. առաջինում տեղի է ունենում որակավորված և բարձր վարձատրվող ազգային աշխատուժի առուծախ, իսկ մյուսում՝ օտարերկրյա, որը պատրաստ է ծանր և ոչ որակավորված աշխատանքներ կատարել նույնիսկ ավելի ցածր վարձատրության դիմաց: Որպես դրական հետևանք կարելի է համարել նաև այն, որ օտարերկրյա աշխատողները հաճախ որոշակի ամորտիզատորի դեր են կատարում ճգնաժամների և գործազրկության ժամանակ, քանի որ նրանց առաջինն են ազատում աշխատանքից:

Նշված ակնհայտ տնտեսական օգուտներից բացի իմիգրացիան զարգացած երկրներում ունի նաև ժողովրդագրական և սոցիալական անհերքելի կարևոր նշանակություն: Ըստ որոշ կանխատեսումների՝ մինչև 2020 թվականը զարգացած երկրների աշխատուժի շուկայի վիճակը կվատթարանա. դա կարտացոլվի աշխատունակ

⁶² St' u Labor Mobility and the Integration of European Labor Markets, Prof. Dr. Klaus F. Zimmermann, April 2010, <http://www.opec.ru/1244421.html>

բնակչության աճի տեմպերի դանդաղեցման, տնտեսապես ակտիվ բնակչության կառուցվածքում ավագ տարիքային խմբի բաժնի ավելացման, ցածր որակակալորում ունեցող մեծաթիվ աշխատատեղերի պահպանման պայմաններում բարձրորակ աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի մեջ: Այս ամենը ծնում է աշխատուժի պակասուրդ: Բնակչությունը գնում է ծերացման, ծնելիությունն ընկնում է, և անհավասարություն է առաջանում աշխատունակ և ոչ աշխատունակ բնակչության միջև՝ հոգուտ երկրորդի: Սկսած անցյալ դարի 60-ականներից՝ ԵՄ ծնելիության ցուցանիշը կրկնակի կրճատվել է: ԵՄ ընդլայնումը 10 երկրով՝ 2004թ. մայիսին և ևս 2 երկրով 2007թ. հունվարին զգալի, չափով մեծացրեց ԵՄ բնակչության թվաքանակը: Այժմ Եվրամիության կազմում են 28 երկրներ: Հին երկրները շատ անհանգստացան սպասվող իմիգրացիայի հետևանքներից: Իրոք, Իռլանդիայում, Մեծ Բրիտանիայում և Լյուքսեմբուրգում ազատ միգրացիոն քաղաքականության շնորհիվ իմիգրանտների թիվը կտրուկ մեծացավ: Սակայն, ինչպես նշում է Բոննի Աշխատանքի տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Կլաուս Ֆիմերմանը, ընդունող երկրները իմիգրանտների հոսքից շուկա չապրեցին, չմեծացավ գործազրկության մակարդակը, չտատանվեց աշխատավարձը: Նման երևույթներ եթե նույնիսկ նկատվեցին, ապա միայն ժամանակավորապես: Մակրոմակարդակում գրանցվեց ՀՆԱ-ի մեծացում: Ընդհանուր առմամբ, միգրացիայի հետևանքով ի հայտ են եկել դրական հետևանքներ. ՀՆԱ աճի հետ մեկտեղ աճել են նաև աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձի մակարդակը⁶³:

Միգրանտները կարևոր դեր են խաղում ընդունող երկրների ժողովրդագրական խնդիրների լուծման հարցում: Օրինակ՝ 2009-2010թթ. միգրանտ կանանց բաժինը ընդհանուր ծնելիության մեջ Ավստրիայում, Դանիայում, Իտալիայում և Ֆրանսիայում կազմել է 11-15%, Բելգիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Նիդերլանդներում և Շվեդիայում՝ 17-19%, Անգլիայում, Ուելսում՝ 22%, Շվեյցարիայում՝ 26%: Նշված երկրներում այս ցուցանիշը աճի միտում ունի, որն ակնհայտ է դառնում դինամիկան

⁶³ St' u Labor Mobility and the Integration of European Labor Markets, Prof. Dr. Klaus F. Zimmermann, April 2010, <http://www.opec.ru/1244421.html>

ուսումնասիրելիս⁶⁴:

Սպասվում է, որ մինչ 2050թ. ԵՄ բնակչությունը կկրճատվի 12%-ով և այդ դեպքում Եվրոպայի բնակչությունը կկազմի աշխարհի ամբողջ բնակչության 9%-ը՝ 13%-ի փոխարեն, իսկ ԱՄՆ-ինը 4% է, 5%-ի փոխարեն: Այժմ ԵՄ ամեն 6-րդ բնակիչը 65 տարեկանից բարձր է, 2020թ.-ին կլինի ամեն 5-րդը, իսկ 2050թ.-ին 50 տարեկանից բարձր բնակչության կեսը կկազմի ամբողջի կեսը: Այնինչ, մարդկանց 30-45%-ը 55-64 տարեկանում դուրս են գալիս աշխատուժի շուկայից, իսկ 65-69 տարեկանների միայն 10%-ն է աշխատում, ինչը, բնականաբար, կրճատում է տնտեսապես ակտիվ բնակչության քանակը: Այսպիսով, ԵՄ բնակչության ծերացումը արդեն 2040թ. կարող է հանգեցնել նրան, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կրճատվի 18%-ով: ՄԱԿ-ի կանխատեսումներով՝ 2000-2050թթ. ակտիվ բնակչության թվաքանակի մակարդակը պահպանելու համար երկրներին անհրաժեշտ է իրականացնել փոխհատուցող իմիգրացիա: Այսինքն՝ նրանք ամեն տարի պետք է ընդունեն մոտ 950 հազար միգրանտ⁶⁵:

Շատ երկրներում մեծ դեր ունի, այսպես կոչված, էթնիկ բիզնեսը, որտեղ միավորված են միևնույն էթնիկ ծագում ունեցող իմիգրանտներ: Շնորհիվ նրանց ձեռնարկատիրական ունակությունների՝ ԱՄՆ-ում ի հայտ եկան արագ զարգացող գործարար գոտիներ, որոնք են «Կորեաթաունը», «Փոքր Սայգոնը», «Չայնաթաունը», «Փոքր Հավանան» և այլն: Էթնիկ բիզնեսը հատկապես զարգացավ ծառայության և առևտրի ոլորտում, այդ թվում՝ բեռնափոխադրումներում, ռեստորանային, հյուրանոցային և զբոսաշրջության բիզնեսում, հագուստի և սննդի առևտրում, ներթափանցեց նաև բանկային և ապահովագրության ոլորտներ:

Ինչ վերաբերում է իմիգրացիայի ազդեցությանը բյուջեի վրա, ապա կարող ենք ասել, որ այն, ընդհանուր առմամբ, դրական է, բայց, միևնույն ժամանակ, չպետք է անտեսենք բյուջեի վրա ծանրաբեռնվածությունը, որն ի հայտ է գալիս ներգաղթողների և փախստականների հոսքի պատճառով:

Իմիգրացիան ընդունող երկրի համար ունենում է ոչ միանշանակ, չալանավորված

⁶⁴ St' u Sobotka T. The rising importance of migrants for childbearing in Europe //Demographic Research. 2008. Vol. 19. Article 9, <http://www.demographic-research.org/Volumes/Vol19/9/>

⁶⁵ St' u “Роль иммиграции в экономике разбитых стран”, И. Цапенко, МЭМО, 2004, N 5, с.30

տնտեսական, ինչպես նաև սոցիալական հետևանքներ: Զարգացած երկրների մեծամասնության համար իմիգրացիան թողնում է խթանող ազդեցություն, որն այս կամ այն չափով նպաստում է աշխատաշուկայի անհամաչափության հղկմանը, արտադրության բնականոն ընթացքին և ներդրումային գործընթացին: Իմիգրացիան նպաստում է ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը ոչ միայն աշխատանքային, այլև ֆինանսական ոլորտներում, ինչը բարձրացնում է ընդհանուր տնտեսական արդյունավետությունը:

Իմիգրացիայի բոլոր դրական հետևանքների կողքին առաջ են գալիս նաև բազմաբնույթ բացասական երևույթներ: Մեծ թվով միգրանտների ներգրավումը տնտեսության առանձին ճյուղերի մեջ և նրանց երկարատև օգտագործումը բոլոր ճյուղերը կախվածության մեջ են դրել միգրանտների աշխատանքից: Այդպիսի ճյուղերից են շինարարությունը, առևտուրը, ծառայությունների ոլորտը և այլն: Միգրանտների ներհոսքը տեղական բնակչության մոտ դժգոհություն է առաջացնում, քանի որ աշխատուժի ազգային շուկայում տեղի է ունենում գների նվազեցում: Օտարերկրյա աշխատուժի նկատմամբ պահանջարկը բարձրանում է, քանի որ միգրանտները համաձայն են աշխատելու ավելի ցածր վարձատրությամբ: Սա բերում է աշխատատեղերի կրճատման, գործազրկության աճի և ընդհանուր առմամբ վատթարացնում է դրությունը աշխատուժի ազգային շուկայում: Աշխատուժի միգրացիայի բացասական հետևանքներից առավել սուր է իմիգրանտների նկատմամբ տեղական բնակչության անհանդուրժողականությունը, իմիգրանտների ադապտացման գործընթացները:

Դոնոր երկրների տնտեսությունների վրա աշխատուժի միգրացիան ունենում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Առաջին հերթին, աշխատուժի միգրացիան արժույթային եկամուտների լրացուցիչ աղբյուր է ապահովում դոնոր երկրների համար, ինչպես նաև գործազրկության բարձր մակարդակի դեպքում նպաստում է սոցիալական լարվածության թուլացմանը: Էմիգրացիան բարելավում է աշխատուժի ազգային շուկայի դրությունը, քանի որ աշխատուժի արտահանումը թուլացնում է հավելյալ աշխատանքային ռեսուրսների ճնշումը: Աշխատուժի միգրացիան դոնոր երկրներում տանում է աշխատուժի առաջարկի նվազմանը, ինչի արդյունքում բարձրանում է միավոր աշխատուժի գինը: Սակայն սա ընդամենը տեսական

դրույթ է, որը գործնականում անհնար է, քանի որ որոշ երկրներ սովորաբար ունեն աշխատանքային ռեսուրսների ավելցուկ:

Այլ երկրներում աշխատելը էմիգրանտներին հնարավորություն է տալիս ստանալու մասնագիտական նոր գիտելիքներ, բարձրացնել իրենց որակավորումը: Առանց դոնոր երկրների կողմից կատարվող ծախսերի, էմիգրանտները իրենց հետ հայրենիք են բերում նորույթներ, ներդնում են նոր տեխնոլոգիաներ և աշխատանքի կազմակերպման առաջատար մեթոդներ, նվազում են դոնոր երկրների կրթության, առողջապահության և սոցիալական բնույթի այլ ծախսերը, որոնք էմիգրանտների համար կատարում են ընդունող երկրի կառավարությունները: Վերադառնալով հայրենիք՝ էմիգրանտները բերում են նյութական արժեքներ և խնայողություններ, ներդրումներ են կատարում տնտեսության տարբեր ոլորտներում, զարգացնում առանձին ճյուղեր: Ըստ որոշ գնահատականների՝ միգրանտները, վերադառնալով հայրենիք, իրենց հետ բերում են մոտավորապես այնքան գումար, որքան բանկերի միջոցով փոխանցել էին այլ երկրներում աշխատելիս:

Դոնոր երկրների համար էմիգրացիայի ամենակարևոր հետևանքը արտարժույթի ներհոսքն է, որը տեղի է ունենում հետևյալ հիմնական ձևերով.

- միգրանտների փոխանցումները հայրենիք՝ ընտանիքներին և հարազատներին աջակցելու համար,
- հարկեր միջնորդ ֆիրմաների եկամուտներից,
- միգրանտների անձնական ներդրումները (արտադրության միջոցների և երկարաժամկետ օգտագործման ապրանքների, կանխիկ միջոցների ներկրումը հայրենիք):

Միգրանտների կողմից հայրենիք փոխանցվող արտարժույթը մի շարք երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի համար հանդիսանում է օտարերկրյա արժույթի ներհոսքի հիմնական աղբյուրներից մեկը: Հատկապես զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների համար աշխատուժի արտահանումը արժույթային հոսքերի կարևորագույն աղբյուր է: Առանձին տարիներին այն գերազանցել է արտաքին տնտեսական հարաբերությունների այլ տեսակներից ստացվող գումարին: Դրամական փոխանցումները էականորեն ազդում են Երրորդ աշխարհի երկրների տնտեսությունների զարգացման

վրա: Պակիստանում վերջին 15 տարիներին արտասահմանում աշխատողների դրամական փոխանցումները հինգ անգամ ավելի շատ էին, քան ապրանքների և ծառայությունների արտահանումից արժույթային հոսքերը: Եմենում էմիգրանտների փոխանցումները առանձին տարիներին 30 անգամ գերազանցել են արտահանումից մուտքերը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ էմիգրանտների փոխանցումները ի սկզբանե ուղղվում են առաջնահերթ պահանջմունքների բավարարմանը և հետագայում միայն՝ դոնոր երկրների տնտեսական կայունացմանը և ներդրումային մթնոլորտի բարելավմանը:

Արժույթային ներհոսքի ապահովման, երկրում աշխատանքի շուկայի վիճակի բարելավման, նոր տեխնոլոգիաների ներկրման հետ մեկտեղ աշխատուժի էմիգրացիան զգալի բացասական ազդեցություն է թողնում, որը հիմնականում պայմանավորված է բարձր որակավորում ունեցող և հատկապես երիտասարդ բնակչության արտահոսքով: Երկիրը հիմնականում լքում է աշխատունակ տարիքի բնակչությունը, ինչն էլ նվազեցնում է աշխատանքային ռեսուրսների թիվը և տանում բնակչության ծերացման. սա հատկապես լուրջ խնդիր է փոքր երկրների համար, ինչպիսին է, օրինակ, մեր երկիրը: Աշխատուժի էմիգրացիայի հետևանքով փոխվում է բնակչության ազգային կառուցվածքը, վատթարանում է ժողովրդագրական դրությունը՝ առաջին հերթին, կապված երիտասարդ աշխատողների և մասնագետների էմիգրացիայի հետ: Միգրացիայի արդյունքում գյուղական բնակչությունը կենտրոնանում է խոշոր քաղաքներում, ինչի հետևանքով դատարկվում են են գյուղերը: Դա լուրջ կորուստներ է առաջացնում այն երկրներում, որոնք ունեն համեմատական առավելություններ գյուղատնտեսության ոլորտում: Երիտասարդները, լքելով գյուղը, գյուղատնտեսությանը զրկում են աշխատուժից, քանի որ ծանր ֆիզիկական աշխատանքները դժվար իրագործելի են մեծահասակ բնակչության համար:

Դոնոր երկրների համար ամենագլխավոր հիմնախնդիրը «ուղեղների արտահոսքն» է, որը հատկապես սուր բնույթ է կրում զարգացող երկրների մեծամասնության մոտ, քանի որ վերջիններս կորցնում են ոչ միայն նրանց պատրաստման համար կատարած ծախսերը, այլև տնտեսության առաջընթացի համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների ամենաօգտակար մասը: Գիտատեխնիկական հեղափոխությ-

յան ծավալմանը զուգընթաց աշխատուժի միջազգային միգրացիոն գործընթացներում առավել կարևոր տեղ է գրավում բարձր որակավորում ունեցող աշխատողների տեղաշարժը, որը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը: Այդ հասկացության տակ տնտեսագետները նկատի ունեն բարձր որակավորում ունեցող մասնագետների (այդ թվում՝ գիտնականների) միջազգային միգրացիան, որը ներկա ժամանակներում կրում է զանգվածային բնույթ: Այդ տերմինը առաջացել է XX դարի 50-60 ական թվականներին Արևմտյան Եվրոպայի երկրներում ծագած մի նոր երևույթի բնութագրման համար: Խոսքն այն ժամանակ Եվրոպայից ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա երիտասարդ գիտնականների և տեխնոլոգների արտագաղթի մասին էր: Որոշ տնտեսագետներ «ուղեղների արտահոսք» տերմինի փոխարեն օգտագործում են ավելի չեզոք անվանումներ, օրինակ «ուղեղների փոխանակում» (Brain Exchange), «ուղեղների շարժունություն» (Brain Mobility): Սրանով նրանք փորձում են ընդգծել այս երևույթի ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը:

«Ուղեղների արտահոսքը» երկրի զարգացման հեռանկարների կորուստ է: Այն կառավարությունների առջև խնդիր է դնում համապատասխան միջոցառումներով կանխել նման երևույթը, հակառակ դեպքում «ուղեղների արտահոսքը» վերջիվերջո կարող է հասցնել տնտեսական և սոցիալական աղետների: Հենց այս տեսանկյունից ելնելով՝ որոշ տնտեսագետներ «ուղեղների արտահոսքը» դիտում են որպես ազգային անվտանգության սպառնալիք: Դա է պատճառը, որ մի շարք զարգացող երկրների կառավարություններ կիրառում են այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որ կանխեն իրենց երկրներից որակավորված աշխատուժի արտահոսքը դեպի արտասահմանյան երկրներ:

Մինչդեռ զարգացած երկրների համար խիստ ձեռնտու է թույլ զարգացած երկրներից ձեռք բերել պատրաստի մասնագետներ, քան կատարել մեծ չափերի հասնող ծախսեր նման մասնագետներ պատրաստելու համար: Տնտեսումը մեծանում է նաև ուրիշ երկրների պատրաստի մասնագետների օգտագործումից երկարատև ժամանակաշրջանում՝ նկատի ունենալով նրանց աշխատանքի վճարման և սոցիալական ծախսերի տարբերությունները:

Կա նաև այլ կարծիք, որ «ուղեղների արտահոսքը» կարող է տանել դոնոր երկրում

մարդկային կապիտալի զարգացմանը: ԱՄՆ-ում զարգացող երկրներից ներգաղթած բժիշկները և բուժքույրերը աշխատանքի տեղավորվելու մեծ հնարավորություններ ունեն, որը դոնոր երկրներում խթաններ է ստեղծում այդ մասնագիտությունների գծով ավելացնելու կրթություն ստացողների թվականակը: Դոնոր երկրները այլ հավասար պայմաններում ստանում են որոշակի օգուտ, որը հանդես է գալիս դրամական փոխանցումների (տրանսֆերտների) և ներդրումների, ինչպես նաև ռեցիպիենտ երկրներում ձեռք բերած հմտությունները և փորձը հայրենիք տեղափոխելու միջոցով: Փորձագետների գնահատմամբ զարգացող շատ երկրներ յուրաքանչյուր որակավորված էմիգրանտի հաշվով տարեկան ստանում են 500-2000 ԱՄՆ դոլար եկամուտ⁶⁶:

Նախկինում, որպես կանոն, բարձր որակավորում ունեցող մասնագետները զարգացող երկրներից տեղափոխվել են զարգացած երկրներ, որին նպաստել են հետևյալ գործոնները.

- ռեցիպիենտ երկրներում աշխատավարձի բարձր մակարդակը,
- ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորությունները,
- տեխնիկական միջոցներով և լաբորատոր պայմաններով առավելագույն ապահովվածությունը,
- սոցիալ-կենցաղային բարենպաստ պայմանները,
- ժողովրդավարությունը,
- դոնոր երկրներում գիտատար կամ բարձր տեխնոլոգատար արտադրությունների բացակայությունը:

Հետագայում տեղի է ունեցել (և ունենում է) հակառակ գործընթացը՝ զարգացած երկրներից փորձառու մասնագետների հոսքը դեպի զարգացող երկրներ: Շատ գիտնականներ, ինժեներներ, բժիշկներ, բարձրագույն կրթությամբ այլ մասնագետներ զարգացած երկրներից տեղափոխվում են զարգացող երկրներ՝ կապված այդ երկրներում բարձր տեխնոլոգատար արտադրությունների զարգացման հետ:

«Ուղեղների հոսք»-ի համար շատ երկրներ ստեղծում են այնպիսի պայմաններ, որոնք թելադրված են գիտատեխնիկական առաջընթացի և արդյունաբերության առաջատար նոր ճյուղերի զարգացմամբ: Ընդհանրապես, որպեսզի ռեցիպիենտ երկրի

⁶⁶ Տե՛ս John Gibson, David McKenzie “Eight questions about brain drain” 2011 Page 16

օգուտը լինի առավելագույնը, նա պետք է ներմուծի աշխատուժ, որի պակասը զգացվում է, այն էլ այնպիսի աշխատուժ, որի «պատրաստման» համար իր երկրի ներսում պահանջվում են ավելի մեծ ծախսեր:

Աշխարհի տարբեր երկրներից բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման բավական մեծ փորձ ունի ԱՄՆ-ը: «Ուղեղների ներհոսքը» դեպի ԱՄՆ տեղի է ունենում տարբեր երկրներից , այն էլ տարբեր ուղիներով⁶⁷:

XX դարի 90-ական թվականների սկզբներից դեպի ԱՄՆ բարձր որակավորում ունեցող աշխատուժի արտահոսքը Արևմտյան Եվրոպայից և նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ոչ միայն չի դադարում այլ աճում է ավելի բարձր տեմպերով: Վերջին 30 տարիների ընթացքում ԱՄՆ-ը գրեթե 300000 բարձրորակ մասնագետների (արտագաղթած զարգացող երկրներից և Արևմտյան Եվրոպայից) ապահովել է աշխատանքով: Արտերկրների բարձրորակ մասնագետներ ներգրավելու հաշվին ԱՄՆ-ը XX դարի վերջին քառորդում տնտեսել է 15 մլրդ ԱՄՆ դոլար՝ կրթության և գիտության բնագավառներում կատարվելիք ծախսերի տնտեսման հաշվին ⁶⁸ : Գիտնականների և բարձր որակավորում ունեցող այլ մասնագետների ներմուծման հաշվին ԱՄՆ-ը տարեկան շահում է 80-100 ԱՄՆ մլրդ դոլար⁶⁹: ԱՄՆ տնտեսության համար «ուղեղների ներհոսքի» դրական ազդեցությունը ակնհայտ է: Բավական է նշել, որ 1980-ական թվականներին ԱՄՆ-ում ինժեներական և համակարգչային գիտությունների գծով դոկտորների 40%-ը և Բուհ-երի տեխնիկական գիտությունների դասախոսների 25%-ը իմիգրանտներ էին: 1990-ական թվականների վերջերին ԱՄՆ-ի 13 մլն իմիգրանտները տարեկան վաստակում էին 240 մլրդ ԱՄՆ դոլար և վճարում ավելի քան 90 մլրդ ԱՄՆ դոլար հարկ: Այնինչ ԱՄՆ կառավարությունը տարեկան ծախսում էր 5 մլրդ ԱՄՆ դոլար իմիգրանտների սոցիալական օգնության համար: Ասվածից հետևում է, որ իմիգրանտներից ստացված օգուտը զուտ դրամական արտահայտությամբ հսկայական է: Անգնահատելի է հատկապես բարձր որակավորում ունեցող ներգաղթողների ներդրումը ԱՄՆ-ի գիտության, բժշկության և մշակույթի զարգացման գործում: 1990-ական թվականների վերջին ԱՄՆ-ում բնական և ճշգրիտ

⁶⁷ Տե՛ս “Экономическая теория” под ред. В.М. Видяпина, Г.П. Журавлевой, Москва 1997 стр.

⁶⁸ Տե՛ս Е.Ф. Авдокушин “Международные экономические отношения” учебное пособие, 5-ое издание, Москва 2000, стр 124:

⁶⁹ Տե՛ս “Экономическая теория” под ред. В.М. Видяпина, Г.П. Журавлевой, Москва 1997 стр.

գիտությունների բնագավառում աշխատողների 23%-ը իմիգրանտ էին⁷⁰:

«Ուղեղների արտահոսք» երևույթը Եվրոպայում ունի երկու միտում: Առաջինը՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների միգրացիան է Արևմտյան Եվրոպայից դեպի ԱՄՆ, երկրորդը՝ միգրացիան է Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայից դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ, որը ավելի հեշտ է իրականանում ԵՄ նոր ընդլայնման հետևանքով: ԵՄ-ը իրականացնում է նաև «blue card»-ի քաղաքականությունը՝ ամերիկյան «green card»-ին համանման, որով փորձում է ներգրավել Ասիայից, Աֆրիկայից և Լատինական Ամերիկայից բարձր որակավորում ունեցող աշխատուժ: Չնայած ԵՄ-ը կարիք ունի ինտենսիվ իմիգրացիայի, որպեսզի չեզոքացնի բնակչության ծերացման հետևանքները, այնուամենայնիվ ազգային քաղաքական կուսակցությունները կոչ են անում օրենսդրորեն սահմանափակել ներգաղթը դեպի Եվրոպա: Ինչպես գիտենք, միգրանտները բեռ են դառնում պետության համար և պատճառ հանդիսանում սոցիալական խնդիրների: Այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ Արևմտյան Եվրոպան աշխարհի ամենազարգացած տարածաշրջաններից մեկն է: Թեև այնտեղ ևս տեղի են ունենում էմիգրացիոն երևույթներ, սակայն դեռ բազմաթիվ գիտնականներ մեկնում են Արևմտյան Եվրոպա: Այսպիսով, մասնագետների մեկնումն ու ժամանումը հավասարակշռում է:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջազգային շուկան համալրվեց Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից արտագաղթածների հաշվին: Տնտեսական անկման պատճառով հնարավոր չէր կանխել «ուղեղների արտահոսքը» այդ երկրներից: Այսպես, վերջին երկու տասնամյակներում Ռուսաստանի համար մեծ հիմնախնդիր է դարձել ոչ միայն «կապիտալի փախուստը», այլ նաև մեծ քանակությամբ գիտնականների և բարձր որակավորում ունեցող այլ աշխատողների արտահոսքը⁷¹: Ավելի քան 500.000 ռուս գիտնականներ և համակարգչային ծրագրավորողներ 1990-ական թվականներից հետո մեկնեցին արտասահման: «Ուղեղների արտահոսքից» Ռուսաստանը տարեկան կորցնում է 50-60 մլրդ ԱՄՆ դոլար, քանի որ ռուս

⁷⁰ St'u E.Ф. Авдокушин “Международные экономические отношения” учебное пособие, 5-ое издание, Москва 2000, стр 185.

⁷¹ St'u МОСТЫ между торговлей и устойчивым развитием, Выпуск 8, декабрь, 2009, Россия на мировом рынке труда и денежных переводов мигрантов" <http://tradc.ecoaccord.org/bridges/0809/0809.pdf>

գիտնականների 1/3-ը աշխատում է արտասահմանյան երկրներում: Ռուս գիտնականների նկատմամբ խիստ շահագրգռվածություն են ցուցաբերում ԱՄՆ-ը, Գերմանիան, Իսրայելը, Հարավային Կորեան, Չինաստանը, Բրազիլիան, Արգենտինան, Մեքսիկան և այլ երկրներ⁷²:

Այսպիսով, «ուղեղների արտահոսքը» դոնոր երկրների վրա չնայած հիմնականում ունենում է բացասական հետևանքներ, այնուամենայնիվ պետք է նաև ընդունել, որ ինչպես ժամանակավոր օրինական աշխատանքային միգրացիան, այնպես էլ «ուղեղների արտահոսքը» ինչ-որ չափով կարող է շահավետ լինել տվյալ պետության համար, եթե այն չի թուլացնում երկրի ազգային անվտանգությունը:

2.2 Աշխատուժի միգրացիայի պետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորումը

Աշխատուժի միգրացիայի պետական կարգավորումը

Աշխատուժի միջազգային միգրացիայի արդյունքում առաջացող բացասական հետևանքների չեզոքացման և դրական ազդեցությունների ուժեղացման համար կիրառվում են պետական քաղաքականության միջոցներ: Աշխատուժի միգրացիայի ահռելի չափերը զարգացած երկրների առջև դրել են բարդ հիմնախնդիրներ, որոնք տարան աշխատուժի միգրացիայի պետական և միջպետական կարգավորման լայն համակարգի ստեղծմանը: Աշխատուժի միջազգային տեղաշարժերի զարգացմանը զուգընթաց առաջանում և կատարելագործվում են միգրացիոն հոսքերի պետական կարգավորման մի շարք մեթոդներ:

Աշխարհի երկրների մեծամասնությունը առաջնորդվում են արտաքին առևտրի ազատական քաղաքականությամբ, սակայն միաժամանակ նրանք ձեռնարկում են միջազգային միգրացիան սահմանափակող միջոցառումներ: Մի կողմից, բաց տնտեսության սկզբունքներին հետևելը կառավարություններին ստիպում է պահպանել աշխատուժի ազատ տեղաշարժի սկզբունքը, սակայն մյուս կողմից՝ երկրում տիրող իրական վիճակը ստիպում է կիրառել տարբեր տիպի արգելքներ և սահմանափա-

⁷² См. Е.Ф. Авдокушин “Международные экономические отношения” учебное пособие, 5-ое издание, Москва 2000, стр 185

կումներ: 1948 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի ընդունած «Մարդու իրավունքների համընդհանուր» դեկլարացիան որպես մարդու հիմնական իրավունք հռչակում է բնակության և աշխատանքի վայրի ազատ ընտրությունը⁷³: Սակայն յուրաքանչյուր երկրի իրական իրավիճակը ստիպում է մշակել միգրացիոն ազգային քաղաքականություն, որն իր մեջ ներառում է օրենսդրական, կազմակերպչական և այլ միջոցառումների ամբողջություն, որը թույլ է տալիս կարգավորել իմիգրացիոն և էմիգրացիոն գործընթացները: Աշխատուժի միջազգային տեղաշարժի գործընթացներին պետության միջամտությունը տեղի է ունեցել ավելի վաղ, քան նրա մասնակցությունը միջազգային առևտրի կարգավորման գործընթացներին: Դեռևս XVIII դարի վերջին Անգլիայում ընդունվել էին օրենքներ, որոնք արդյունաբերության աշխատողներին արգելում էին լքել երկիրը: XIX դարի ընթացքում եվրոպական շատ երկրներ ընդունել էին օրենքներ, որոնք սահմանափակում էին անցանկալի անձանց մուտքը երկիր: Հենց այդ ժամանակ երկրները սկսեցին կնքել միգրացիան կարգավորող երկկողմ պայմանագրեր, որոնց մի մասը գործում է մինչ օրս⁷⁴:

Աշխատուժի միգրացիայի պետական կարգավորման նպատակը միգրացիայի ցանկալի մասշտաբների ապահովումն է և անօրինական միգրացիայի դեմ պայքարը: Միգրացիոն պետական քաղաքականությունը պետության նպատակաուղղված գործունեությունն է՝ ուղղված աշխատուժի իմիգրացիոն և էմիգրացիոն գործընթացների կարգավորմանը, որն իր հերթին ունի կարգավորման տարբեր մեթոդներ:

Իմիգրացիոն քաղաքականությունը կոչված է պաշտպանելու աշխատուժի ազգային շուկան միգրանտների չվերահսկվող հոսքերից, ապահովելու վերջիններիս աշխատանքի արդյունավետ կիրառում: Իմիգրացիոն քաղաքականության սկզբունքներն են՝ թափանցիկությունը և բազմակողմանիությունը, իմիգրացիոն և էմիգրացիոն երկրների միջև երկխոսությունը և միգրանտների ինտեգրումը ընդունող երկրի հասարակությանը: Ռեցիպիենտ երկրները իրենց իմիգրացիոն քաղաքականությունը մշակելիս առաջին հերթին հենվում են իմիգրանտների քանակական և որակական կազմի վրա: Լայնորեն օգտագործվում է ընտրանքային մոտեցումը, որի իմաստը այն է,

⁷³ St'u Department of Economic and Social Affairs, International Migration Report 2002, UN, N.Y. 2002, p. 1.

⁷⁴ St'u Menger C., Tanner M. E. The Right to the Whole Produce of Labour. A. M. Kelley, 1970, p. 8.

որ պետությունը չի խոչընդոտում աշխատողների այն կատեգորիայի մուտքին, որ անհրաժեշտ է տվյալ երկրին՝ միաժամանակ սահմանափակելով մյուսների մուտքը: Ցանկալի իմիգրանտների ցանկը տարբեր է՝ կախված երկրից, սակայն հաճախ նրանք վերաբերում են հետևյալ կատեգորիաներին.

- աշխատողներ, որոնք պատրաստ են ցածր աշխատավարձով կատարել ծանր, վտանգավոր, կեղտոտ, որակավորում չպահանջող աշխատանք,
- նոր և հեռանկարային մասնագետներ (ծրագրավորողներ, նեղ մասնագիտացում ունեցող ինժեներներ, բանկային մասնագետներ),
- հազվագյուտ մասնագիտությունների տիրապետողներ (ադամանդ մշակողներ, նկարներ վերականգնողներ, ոչ ավանդական ձևով բուժող բժշկներ),
- համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետներ (երաժիշտներ, դերասաններ, գիտնականներ, մարզիկներ, բժիշկներ, գրողներ),
- գործարարներ, որոնք պատրաստ են իրենց գործունեությունը տեղափոխել ռեցիպիենտ երկիր, ներդնել կապիտալ և ստեղծել նոր աշխատատեղեր:

Աշխատուժի միգրացիայի խնդիրներով զբաղվում են ռեցիպիենտ երկրների պետական ինստիտուտները, որոնք գործում են ազգային օրենսդրության, ինչպես նաև երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի հիման վրա: Սովորաբար իմիգրացիոն քաղաքականության իրականացմանը և վերահսկմանը մասնակցում են առնվազն երեք պետական մարմիններ՝

- արտաքին գործերի նախարարությունը, որն իր հյուպատոսական ներկայացուցչությունների միջոցով տրամադրում է մուտքի վիզա,
- ոստիկանությունը, որը իր կազմի մեջ մտնող ստորաբաժանումների միջոցով կարգավորում է սահմանային անձնագրային ռեժիմը,
- աշխատանքի նախարարությունը, որն իրականացնում է օտարերկրացիների աշխատանքի տեղավորման վերահսկողություն:

Շատ երկրներում իմիգրանտին երկիր մուտք գործելու թույլտվությունը տրվում է նրա աշխատանքի տեղավորման մասին վկայող գործատուի հետ կնքած պայմանագրի և Աշխատանքի նախարարության այնպիսի եզրակացության հիման վրա, որտեղ նշվում է, որ այդ աշխատանքը պահանջում է հատուկ գիտելիքներ կամ այլ

պատճառներով չի կարող իրականացվել տեղացիների կողմից: Որոշ երկրներում մինչև պոտենցիալ իմիգրանտին երկիր մուտք գործելու թույլտվություն տալը նրա գործատուն պետք է ստանա արտաքին գործերի նախարարության և արհմիությունների թույլտվությունը:

Ռեցիպիենտ շատ երկրներում իմիգրացիայի համար նորմաիրավական հիմք են հանդիսանում մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Իմիգրացիոն քաղաքականությունը տարանջատվում է երկու մասի.

- մուտքի թույլտվության քաղաքականություն, որը սահմանում է թույլատրելի միգրանտների կատեգորիաները,
- վերահսկող քաղաքականություն, որն ապահովում է մուտքի թույլտվություն ստացած միգրանտների օրինական շարժը ընդունող երկրի սահմաններում:

Մուտքի թույլտվության քաղաքականության տեսանկյունից առանձնացվում է միգրացիայի երեք տարատեսակ՝ ընտանիքների վերամիավորում, մարդասիրական սկզբունքներով թույլատրվող և աշխատանքային միգրացիա:

Իմիգրացիոն քաղաքականության վերահսկման մեթոդները հանգում են սահմանների արդյունավետ վերահսկմանը, մուտքի թույլտվության փաստաթղթեր տրամադրող ծառայությունների ձևավորմանը, պատժամիջոցների սահմանմանը, դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությանը և այլն:

Իմիգրացիոն քաղաքականությունն իր մեջ ներառում է միջոցառումների համակարգ, որն ուղղված է հետևյալին:

1. Մասնագիտական որակավորում: Ռեցիպիենտ երկրները խիստ պահանջներ են ներկայացնում իմիգրանտների կրթական մակարդակի և ըստ մասնագիտության՝ աշխատանքային ստաժի նկատմամբ: Ըստ կրթության հանդեպ ներկայացվող նվազագույն պահանջների՝ իմիգրանտը պետք է ավարտած լինի միջնակարգ դպրոց կամ մասնագիտական տեխնիկական ուսումնարան, և դա պետք է հաստատվի համապատասխան դիպլոմի առկայությամբ:

2. Անձնական բնույթի սահմանափակումներ: Ռեցիպիենտ երկրները խիստ պահանջներ են ներկայացնում նաև իմիգրանտների առողջական վիճակի նկատմամբ: Երկիր մուտք գործելու թույլտվություն չի տրվում թմրամոլներին, հոգեկան

հիվանդներին, ՁԻԱՀ-ով վարակված անձանց և այլն:

3. Քանակական սահմանափակումներ: Ռեցիպիենտ երկրների մեծ մասը սահմանում է իմիգրանտների առավելագույն քանակը: Քանակական սահմանափակումները սահմանվում են քվոտաների միջոցով, որոնք սահմանվում են ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ առանձին ճյուղերի և ընկերությունների մասշտաբով:

4. Տնտեսական կարգավորում: Այն իրականացվում է ֆինանսական սահմանափակումների միջոցով, որոնք ապահովում են իմիգրանտների թվի կրճատում: Որոշ երկրներում տնտեսվարողները իրավունք ունեն վարձելու օտարերկրյա աշխատուժ միայն այն դեպքում, երբ ապահովել են վաճառքի կամ շրջանառության որոշակի ծավալ կամ կատարել են որոշակի վճարումներ պետական բյուջե:

5. Ժամկետային սահմանափակումներ: Շատ երկրների օրենսդրությունները օտարերկրյա աշխատուժի համար սահմանում են երկրում գտնվելու առավելագույն ժամկետներ, որոնց լրանալուց հետո նրանք պետք է լքեն երկիրը կամ իրավասու մարմինների կողմից ստանան թույլտվություն երկարացնելու երկրում գտնվելու ժամկետը:

6. Աշխարհագրական նախապատվություն: Գրեթե բոլոր ռեցիպիենտ երկրները օրենսդրորեն սահմանում են իմիգրացիայի աշխարհագրական և ազգային կառուցվածքը, որը կարգավորվում է առանձին երկրների իմիգրանտների համար քվոտաներ սահմանելու միջոցով:

7. Արգելքներ: Օտարերկրյա աշխատուժի բացահայտ և թաքնված արգելքները ներառված են այն մասնագիտությունների մասին օրենքներում, որոնցով օտարերկրացիներին զբաղվելն արգելված է: Բացահայտ արգելքները ուղղակիորեն նշում են այն ոլորտները կամ մասնագիտությունները, որտեղ օտարերկրյա աշխատուժի ներգրավումը արգելված է: Թաքնված արգելքները, ընդհակառակը, սահմանում են այն ոլորտներն ու մասնագիտությունները, որտեղ կարող են աշխատել միայն տվյալ երկրի քաղաքացիները:

Օրենսդրորեն սահմանվում են նաև պատժամիջոցներ իմիգրացիոն կարգը խախտելու համար, որոնք կարող են կիրառվել ինչպես իմիգրանտների, այնպես էլ նրանց նկատմամբ, ովքեր օգնում են նրանց անօրինական մուտք գործելուն երկիր կամ

վարձում են նրանց աշխատանքի: Երկիր անօրինական մուտք գործելը համարվում է հանցագործություն, և դրա համար նախատեսվում են երկրից արտաքսում, դրամական տուգանքներ կամ ազատազրկում: Անօրինական իմիգրանտների հետ համագործակցելը կամ նրանց աշխատանքի վերցնելը նույնպես համարվում է հանցագործություն, որի համար նախատեսված տուգանքների չափը այնպիսին է, որ կարող է ոչ մեծ ֆիրմաների և ընկերությունների համար լուծարման պատճառ դառնալ:

Աշխատուժի էմիգրացիայի պետական կարգավորումը ուղղված է ինչպես ռեցիպիենտ երկրներում իմիգրանտների շահերի պաշտպանմանը, այնպես էլ ազգային աշխատուժի էմիգրացիայի հետևանքով առաջացած կորուստների փոխհատուցմանը: Էմիգրացիոն քաղաքականությունը ենթադրում է արտասահմանում էմիգրանտների շահերի պաշտպանություն, որը, սակայն, չպետք է հակասի ռեցիպիենտ երկրների շահերին:

Պետության էմիգրացիոն քաղաքականությունը ներառում է կարգավորման անուղղակի մեթոդներ, որոնք կոչված են ստեղծելու բարենպաստ էմիգրացիոն մթնոլորտ, ինչպես նաև ուղղակի մեթոդներ, որոնք ուղղված են էմիգրացիոն հոսքերի ծավալների և կառուցվածքի կարգավորմանը: Էմիգրացիոն հոսքերի կարգավորման անուղղակի մեթոդներն են՝ արտասահմանից արժույթային փոխանցումների խրախուսումը, բանկային և արժույթային քաղաքականությունը, ներդրումների համար արտոնությունների տրամադրումը, միգրանտներին արժեթղթերի վաճառքը՝ հարկերից ազատումով, մաքսային քաղաքականությունը, որը նախատեսում է մաքսային արտոնություններ հայրենիք վերադարձող միգրանտների համար: Էմիգրացիայի կարգավորման ուղղակի մեթոդներն են՝ աշխատող միգրանտների և միջնորդ ընկերությունների նկատմամբ պահանջները, նվաճողաական քաղաքականությունը, որն ուղղված է օտարերկրյա շուկաներում աշխատատեղերի գրավմանը, կառուցվածքային քաղաքականությունը, որի հիմնական տարրերն են արտասահմանյան անձնագրերի տրման սահմանափակումը և առանձին կատեգորիայի աշխատողների ելքի արգելքը, ինչպես նաև էմիգրացիոն քվոտաների ներմուծումը:

Դոնոր երկրների էմիգրացիոն քաղաքականության իրականացումն ուղղված է տնտեսական, սոցիալական և ռազմավարական նշանակություն ունեցող հետևյալ

հիմնախնդիրների լուծմանը.

- գործազրկության մակարդակի նվազեցում,
- փոխանցումների հաշվին արտարժույթի մուտքերի ավելացում,
- խնայողությունների մակարդակի բարձրացում, որը հնարավոր է արտարժույթային մուտքերի ավելացման արդյունքում,
- կրթությանն ուղղված սոցիալական մուտքերի ավելացում և այնպիսի համակարգերի ստեղծում, որոնք այդ մուտքերը կապահովեն փոխանցումների հաշվին,
- էմիգրանտների և հայրենիքում մնացած նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության բարձրացում,
- արտասահմանում էմիգրանտների շահերի պաշտպանություն և նրանց ապահովության համապատասխան երաշխիքներ,
- արտաքին կապերի ընդլայնման ճանապարհով միգրացիոն հոսքերի արդյունավետ կազմակերպում և կառավարում,
- «ուղեղների արտահոսքի» վերահսկում,
- աշխատուժի շուկայում հավասարակշռության պահպանում,
- էմիգրացիայի օգտագործումը ինովացիաների ձեռք բերման համար,
- ռեէմիգրացիոն հոսքերի խթանման աշխատանքների կազմակերպում:

Աշխատուժի միջազգային միգրացիայի ժամանակակից գործընթացների վրա գնալով ակտիվանում է դոնոր երկրների ազդեցությունը: Դոնոր երկրները կիրառում են տարբեր մեթոդներ և միջոցներ էմիգրացիայի նպատակներին հասնելու համար:

Դրանցից հիմնականներն են.

- դոնոր երկրների շահերի պաշտպանության մեթոդներ և միջոցներ, որոնք իրականացվում են էմիգրացիայի մասշտաբների և էմիգրանտների որակական կազմի կարգավորման ճանապարհով: Երկրների մեծամասնությունն էմիգրացիոն քաղաքականություններն իրականացնելիս հաշվի են առնում իրենց քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքը: Որոշ երկրներ վարում են էմիգրացիան զսպող քաղաքականություն:
- էմիգրացիայի օգտագործումը որպես երկրի տնտեսությունը ռեսուրսներով

ապահովելու մեթոդներ, որոնք իրականացվում են միգրանտների դրամական միջոցների ներգրավման ճանապարհով: Դրա համար ազգային բանկերում էմիգրանտների համար հաշիվ են բացում ավելի բարձր տոկոսադրույքներով, նրանց համար շահավետ պայմաններ են ստեղծում ապրանքներ և արտադրական սարքավորումներ ձեռք բերելու համար:

- Էմիգրանտների իրավունքների պաշտպանության մեթոդներ և միջոցներ, որոնք իրականացվում են երկկողմ համաձայնագրերի և էմիգրանտին արտասահմանում աշխատանքի վարձելու մասին պայմանագրի օգտագործման ճանապարհով, ինչպես նաև տարբեր հաստատությունների, հիմնադրամների, ներկայացուցչությունների ձևավորման և հատուկ պաշտոնատար անձանց նշանակման ճանապարհով, որոնց նպատակն է վերահսկել աշխատուժի միգրացիայի միջազգային համաձայնագրերի պայմանների կատարումը, լուծել ռեցիպիենտ երկրում ծագած վիճելի հարցերը և պաշտպանել էմիգրանտների հիմնական իրավունքները:
- Երկրների շահերի, միգրանտների իրավունքների և ազատության պաշտպանությանը նպաստող միջոցառումներ: Կառավարությունը ձգտում է մշակել միգրացիայի կարգավորման այնպիսի մեխանիզմ, որը թույլ կտա համատեղել երկրի և քաղաքացիների շահերը: Այս խնդրի իրականացման գործիքներից է այնպիսի միջնորդ կազմակերպությունների գործունեության լիցենզավորումը, որոնք զբաղվում են արտասահմանում աշխատանքի տեղավորելու գործունեությամբ:
- Դոնոր և ռեցիպիենտ երկրների շահերի փոխադարձ պաշտպանությանն ուղղված միջոցառումներ (օրինակ՝ միգրացիան զսպող քաղաքականության իրականացում, ռեէմիգրացիայի խթանում):

Միգրացիայի կարգավորման կարևոր մաս է ռեէմիգրացիան, որի նպատակը մի կողմից էմիգրանտներին երկրից դուրս բերելն է, իսկ մյուս կողմից՝ հայրենադարձության խթանումը:

Անցյալ դարի 1970-ական թթ. զարգացած մի շարք երկրներում օտարերկրյա աշխատուժի թվաքանակի աճը հանգեցրեց այդ երկրներում գործազրկության աճին:

Դա առաջացրեց դժգոհության ալիք տեղացիների շրջանում, որոնք արհմիություններից պահանջեցին պաշտպանել իրենց իրավունքները: Արհմիությունների ճնշմամբ կառավարությունները սկսեցին ակտիվ միջոցառումներ ձեռնարկել իմիգրանտների հայրենադարձությունը խթանելու համար: Կառավարությունների ռեէմիգրացիոն քաղաքականությունը ներառում է.

- Ռեէմիգրացիայի խթանման ծրագրեր, որոնք ներառում են միջոցառումների լայն շրջանակ՝ սկսած անօրինական իմիգրանտներին երկրից հարկադրաբար արտաքսելուց մինչև հայրենիք վերադառնալ ցանկացողներին նյութական օգնություն ցուցաբերելը:
- Էմիգրանտների մասնագիտական պատրաստման ծրագրեր: Որոշ երկրներ (Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա) որպես իմիգրանտներին հայրենիք վերադարձի միջոց համարում են իմիգրանտների մասնագիտական կրթության ծրագրերը: Այդ ծրագրերի իմաստը այն է, որ զարգացած երկրներում կրթություն ստացած իմիգրանտները հայրենիքում կարող են ակնկալել ավելի բարձր վարձատրվող աշխատանք, որը և կստիպի նրանց վերադառնալ հայրենիք:
- Տնտեսական օգնության ծրագրեր զանգվածային էմիգրացիայի երկրների համար: Զարգացած երկրները դոնոր երկրների հետ կնքում են համաձայնագրեր այնտեղ ներդրումներ կատարելու մասին, որի արդյունքում ստեղծվում են նոր ձեռնարկություններ և համապատասխանաբար նոր աշխատատեղեր:

Այսպիսով, տարբեր երկրներ, ելնելով իրենց երկրում առկա իրավիճակից, վարում են տարբեր միգրացիոն քաղաքականություն:

Աշխատուժի միգրացիայի տարածաշրջանային կարգավորումը

Աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորման այլընտրանքային մոդել է կարգավորումը տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների մակարդակով, մասնավորապես Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ասոցիացիայի (NAFTA) և Եվրամիության (ԵՄ) շրջանակներում: Աշխատուժի միգրացիան կոնկրետ ինտեգրացիոն միավորման ներսում պայմանավորված է զբաղվածության խնդիրներով, այլ ոչ թե

եկամուտների տարբերությամբ: Նման շարժառիթով պայմանավորված միգրացիան հնարավորություն է տալիս հավասարակշռելու աշխատուժի շուկան ինտեգրացիոն միավորման ներսում և դրա շնորհիվ արձանագրելու տնտեսական աճ:

NAFTA -ի օրինակը. Մեքսիկացիների միգրացիան դեպի ԱՄՆ երկու երկրների համագործակցության ողջ պատմության ընթացքում հիմնական խնդիրներից մեկն է: Ընդ որում, խոսքը ոչ թե օրինական միգրացիայի մասին է, որը այս կամ այն չափով պլանավորվում և կարգավորվում է ամերիկյան իշխանության կողմից, այլ մեքսիկացիների զանգվածային անօրինական հոսքի մասին: Մեքսիկայի աշխատուժի միգրացիան դեպի ԱՄՆ տնտեսական զարգացվածության տարբեր մակարդակ ունեցող երկու երկրների սերտ համագործակցության արդյունք է: Կենսամակարդակի և աշխատավարձի միջև գոյություն ունեցող էական տարբերությունը Մեքսիկայից դեպի ԱՄՆ միգրացիայի հիմնական շարժառիթն է: Բացի այդ, խթան է նաև այն, որ նրանք հարևան երկրներ են:

1992 թ. ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի կառավարությունները կնքեցին Հյուսիս-ամերիկյան ազատ առևտրի համաձայնագիրը (NAFTA), որն ուժի մեջ մտավ 1994 թ.-ի հունվարի 1-ից: Այդ համաձայնագրի հիմնական նպատակներն էին երեք երկրների փոխադարձ առևտրի ճանապարհին առկա առևտրային և ներդրումային գրեթե բոլոր արգելքների աստիճանաբար վերացումը և նրանց սահմաններով ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի ապահովումը: Այդ համաձայնագրի ստորագրումը նախատեսում էր նաև այլ նպատակներ, մասնավորապես՝ NAFTA-ի կողմնակիցներն այն կարծիքին էին, որ մաքսատուրքերի վերացումը և տարածաշրջանային առևտրի զարգացումը կնպաստեն Մեքսիկայում արտադրության աճին, ազգային տնտեսության զարգացմանը, բնակչության զբաղվածության և կենսամակարդակի բարձրացմանը: Վերջինս իր հերթին կնվազեցնի մեքսիկացիների հոսքը դեպի ԱՄՆ: Ընդ որում առաջին հերթին խոսքը անօրինական միգրանտների մասին էր⁷⁵: Բացի այդ, ամերիկյան շատ ձեռնարկատերեր որոշեցին օգտվել NAFTA-ի ընձեռած հնարավորություններից և Մեքսիկայում ստեղծել իրենց ընկերությունների մասնաճյուղերը, իսկ մի շարք դեպքերում արտադրությունը ամբողջությամբ

⁷⁵ Տե՛ս US Commision for the study of International Migration & Cooperative economic Development

տեղափոխել Մեքսիկա՝ տեղի էժան աշխատուժն օգտագործելու նպատակով: NAFTA-ի գործունեության առաջին տասնամյակում պլանավորվում էր Մեքսիկայում ստեղծել 60 հազ. նոր աշխատատեղեր: 1993թ. Մեքսիկայի նախագահ Սալինասը հայտարարեց, որ մեքսիկացիները գաղթում են այնտեղ, որտեղ ստեղծվում են նոր աշխատատեղեր, այսինքն՝ երկրի հյուսիս, այնուհետև՝ ԱՄՆ: Նա նաև նշեց, որ NAFTA-ի կազմի մեջ մտնելուց հետո նոր աշխատատեղեր կստեղծվեն, ինչը կհանգեցնի երկրի ներսում և նրա սահմաններից դուրս միգրացիայի էական կրճատմանը⁷⁶:

Սակայն գոյություն ուներ նաև այլ տեսակետ: Ամերիկյան մասնագետների կարծիքով, համաձայնագրի գործունեության սկզբնական շրջանում մեքսիկացի միգրանտների հոսքը դեպի ԱՄՆ կտրուկ կավելանար և միայն մի քանի տարի անց կսկսեր նվազել: Նրանց կարծիքով, անցումային շրջանում միգրացիոն հոսքերի ավելացումը բնական երևույթ էր: Մինչև NAFTA-ի համաձայնագրի կնքումը մեքսիկական ընկերությունները, որոնք զբաղվում էին ներմուծված հումքի վրա վերջնական արտադրանքի հավաքման գործընթացներով, տեղաբաշխված էին ԱՄՆ-ին սահմանամերձ Մեքսիկայի հյուսիսում: Այդ ամենը գրավում էր միգրանտներին դեպի երկրի հյուսիս, իսկ այնուհետև՝ ԱՄՆ: NAFTA-ի համաձայնագրի կնքելուց հետո այդ ընկերությունները սկսեցին տեղաբաշխվել գրեթե ամբողջ երկրի տարածքով: Առաջացան արդյունաբերության նոր խոշոր կենտրոններ երկրի կենտրոնական մասերում: Այդ ամենը հնարավորություն տվեց որոշ չափով կրճատելու միգրացիայի հոսքերը և ստեղծելու նոր աշխատատեղեր: Այդ ընկերությունների արտադրանքը կապված է Մեքսիկայի տնտեսության հեռանկարային ճյուղերի հետ, որոնք ուղղված են դեպի արտահանումը: Դրանց թվին են պատկանում էլեկտրոնիկայի և էլեկտրատեխնիկայի, ավտոմեքենաների հավաքումը, հագուստի և կոշիկեղենի արտադրությունը, խաղալիքների, կահույքի, դեղերի արտադրությունը և այլն: Այս ճյուղերի զարգացումը նպաստում է այդ ընկերություններում աշխատավարձերի բարձրացմանը: NAFTA-ի ձևավորումից հետո այդ ընկերություններում միջին աշխատավարձը ավելացավ ավելի քան 2 անգամ և ներկայումս կազմում է ժամում 3 ԱՄՆ դոլար: Շատ մեքսիկացիներ են ցանկանում աշխատել նման ընկերություններում, սակայն այդպիսի աշխատանքի

⁷⁶ St' u H.A. Карелина, Нелегальная миграция в США: до и после НАФТА, 2002

տեղավորվելը հեշտ չէ: Դրա համար նրանք պետք է ունենան միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթություն և տիրապետեն որոշակի գիտելիքների: Գյուղական ծագում ունեցողների համար, որոնք չեն ավարտել միջնակարգ դպրոցը ամբողջությամբ, այդպիսի աշխատանքի տեղավորվելը շատ դժվար է: Նրանք գոյատևելու համար ստիպված գնում են ԱՄՆ և համալրում որակավորում չունեցող աշխատուժի շարքերը: Ըստ եկամուտների մակարդակի՝ Մեքսիկային բնորոշ է բնակչության խիստ բևեռացվածություն: NAFTA-ի ձևավորումից հետո իրավիճակը չփոխվեց: Ներկայումս երկրի 100 մլն. բնակչության 44 մլն.-ը գտնվում են աղքատության շեմին, իսկ 10 մլն.-ը ստանում է ամբողջ ազգային եկամտի 40%-ը: Սրա հետ կապված՝ դեռևս չի հաջողվում կրճատել միգրացիոն հոսքը դեպի ԱՄՆ, այլ, ընդհակառակը, Մեքսիկայից իմիգրանտների հոսքը շարունակում է աճել⁷⁷:

NAFTA-ի համաձայնագրի կնքումից հետո փոքր և միջին շատ ձեռնարկություններ չկարողացան դիմակայել ամերիկյան և կանադական ձեռնարկությունների մրցակցությանը և ստիպված փակվեցին: Բարդ իրավիճակում հայտնվեցին նաև Մեքսիկայի գյուղատնտեսության ճյուղերը, որոնք մրցակցության պատճառով էական կորուստներ կրեցին, որի հետևանքով աշխատավարձերը նվազեցին 20%-ով: Այս ամենը հանգեցրեց մեքսիկացիների էմիգրացիայի աճին: Նրանց մեծ մասն ուղղվեց դեպի ԱՄՆ-ի գյուղատնտեսական պլանտացիաներ: Որոշ տվյալների համաձայն՝ 1990-ական թթ. Մեքսիկայից ԱՄՆ են գաղթել գյուղատնտեսության 600-800 հազ. աշխատողներ (գյուղատնտեսությունում զբաղվածների 15%-ը), որոնց մեծ մասը անօրինական իմիգրանտներ էին⁷⁸:

Վերջին տարիներին Մեքսիկայի և ԱՄՆ-ի սահմանը տարեկան անօրինական հատում է 1 մլն. իմիգրանտ: Ընդ որում, նրանց 80%-ը մեկնում է ժամանակավոր աշխատանք կատարելու և միջինում կես տարուց հետո վերադառնում հայրենիք: Մնացած 20%-ը մնում է ԱՄՆ-ում՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Ներկայումս անօրինական իմիգրանտների համար էլ ավելի դժվար է դառնում ԱՄՆ-ի և Մեքսիկայի սահմանը հատելը: NAFTA-ի համաձայնագրի կնքելուց հետո ԱՄՆ-ի կառավարության կողմից լրացուցիչ միջոցներ են տրամադրվել երկրի սահմանի

⁷⁷ Տե՛ս Н.А. Карелина, Нелегальная миграция в США: до и после НАФТА, 2002

⁷⁸ Տե՛ս նույն տեղում

հսկումը ուժեղացնելու համար⁷⁹:

Մեքսիկայից անօրինական իմիգրանտների հոսքի վերահսկումը շարունակում է մնալ հակասական, քանի որ շոշափում է տարբեր կողմերի՝ ամենից առաջ կենտրոնական իշխանությունների և տեղացի գործատուների շահերը:

Մի կողմից, ԱՄՆ-ի իշխանությունները անօրինական իմիգրացիայի զսպման մեծ ջանքեր են գործադրում: Երկրի սահմանների հսկումը ուժեղացնելուց բացի՝ ԱՄՆ-ի կառավարությունը անօրինական իմիգրանտներին աշխատանքի վերցրած ամերիկյան ձեռնարկատերերի համար սահմանել է խոշոր տուգանքներ, վերացրել է անվճար շտապ բժշկական և պարենային օգնությունը նույնիսկ անօրինական իմիգրանտների երեխաների համար, կարգավորել է երկրից արտաքսման գործընթացը⁸⁰:

Մեքսիկացի միգրանտներից շատերը շահագործվում են ամերիկյան գործատուների կողմից. նրանք ստիպված համաձայնում են աշխատել ցածր աշխատավարձով, ապրել շատ վատ պայմաններում և աշխատել օրական 12 ժամ, քանի որ գործատուները սպառնում են արտաքսել նրանց երկրից:

Չնայած դեպի ԱՄՆ մեքսիկացի միգրանտների հոսքի հետ կապված հարցերը հաճախ են քննարկվում երկու երկրների կառավարությունների կողմից, այնուամենայնիվ իրականում դրանց լուծմանը քիչ ուշադրություն է դարձվում: Մի կողմից, ԱՄՆ-ի համար մեքսիկացիների հոսքը հանդիսանում է էժան աշխատուժի աղբյուր ԱՄՆ-ի հարավային նահանգների արտադրողների համար: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ում աշխատող մեքսիկացիների կողմից կատարված դրամական փոխանցումները Մեքսիկայի համար եկամուտների խոշոր աղբյուր են: Իմիգրանտների ընտանիքները տարեկան ստանում են մոտ 6-8 մլրդ. ԱՄՆ դոլար⁸¹:

Այսպիսով, NAFTA-ի համաձայնագրի կնքումը չլուծեց դեպի ԱՄՆ մեքսիկացիների միգրացիոն հոսքերի հետ կապված խնդիրները: Ինչպես ենթադրվում էր, մի շարք ամերիկյան մասնագետների կողմից միգրացիոն հոսքերը ակնհայտորեն ավելանում էին և շարունակում են աճել: Չնայած ԱՄՆ-Մեքսիկա սահմանի վերահսկման ուժեղացմանը՝ անօրինական միգրանտների թիվը նույնպես չի նվազում: Նրանք

⁷⁹ Տե՛ս նույն տեղում

⁸⁰ Տե՛ս նույն տեղում

⁸¹ Տե՛ս Steven Camarota "Immigration From Mexico: Assessing the Impact on the United States", Washington, 2001, p. 20

շարունակում են համալրել ԱՄՆ-ի ցածր որակավորում ունեցող էժան աշխատուժի շարքերը: Չնայած NAFTA-ի համաձայնագրի ստորագրումից հետո Մեքսիկայի տնտեսության աճին՝ գնաճի մակարդակի կրճատմանը, աշխատավարձի բարձրացմանը՝ այնուամենայնիվ չնվազեց դեպի ԱՄՆ միգրացիոն հոսքը:

ԵՄ-ի օրինակը. ԵՄ-ը աշխատուժի շուկայի կարգավորման և զբաղվածության քաղաքականության մշակման ժամանակ առաջնորդվում է (flexicurity) հայեցակարգով, որը հիմնված է 2 սկզբունքների վրա՝ ճկունություն (flexibility) և անվտանգություն (security): Ճկունությունը ենթադրում է աշխատողների մասնակցության ապահովում կառավարության որոշումներին, աշխատանքային շարժունակություն, աշխատանքային գրաֆիկի փոփոխման հնարավորություն: Անվտանգությունը տվյալ դեպքում ենթադրում է աշխատատեղի և եկամուտների ապահովման երաշխիք ցանկացած պարագայում: Զբաղվածության կարգավորման այս հայեցակարգն ուղղված է մրցունակության ապահովմանը: Այս համակարգը նպատակ ունի ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան օգտագործել գլոբալացման ընձեռած բոլոր հնարավորությունները, ինչպես նաև լուծել ժողովրդագրական խնդիրները: Քանի որ յուրաքանչյուր երկրում աշխատուժի շուկան ունի իր առանձնահատկությունները, ուստի յուրաքանչյուր երկիր flexicurity համակարգը ներդնում է՝ հաշվի առնելով այդ առանձնահատկությունները: Այս համակարգի հիմնական բաղադրիչներն են.

- ճկուն և հուսալի պայմանագրային հարաբերություններ աշխատողների և գործատուների միջև,
- ուսուցում կյանքի ամբողջ ընթացքում, ինչն ապահովում է մշտական զբաղվածություն.
- աշխատանքի շուկայում արդյունավետ ակտիվ քաղաքականություն,
- սոցիալական ապահովության համակարգ, որն ապահովում է եկամուտների կայուն մակարդակ, խթանում է զբաղվածությունը և աշխատուժի շուկայի շարժունակությունը:


Ընդհանուր առմամբ, զբաղվածության եվրոպական քաղաքականությունն իրենից ներկայացնում է «առաջանցիկ զարգացման» մոդել՝ ամերիկյան աշխատուժի շուկայի համեմատությամբ: Եվրոպացիները, ձգտելով ստեղծել հավասարակշռված

աշխատուժի շուկա, ձգտում են բարձրացնել ազգային տնտեսական մրցունակությունը աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:

Ինտեգրացիոն խմբավորումների մեջ մտնող երկրների միջև աշխատուժի միգրացիոն գործընթացները կարգավորող միջազգային իրավական փաստաթղթերը, որպես կանոն, ազատական բնույթ են կրում: 1957 թ. «Հռոմի պայմանագրի» (ուժի մեջ է մտել 1968 թ.) 52 պարագրաֆում սահմանված է, որ ԵՄ անդամ-երկրների քաղաքացիները իրավունք ունեն աշխատանք փնտրել ԵՄ ողջ տարածքում: «Շենգենյան համաձայնագիրը»⁸² 1985 թ. սահմանեց վիզայի միասնական կանոններ: 1990 թ. «Դուբլինի կոնվենցիան» սահմանեց ապաստան տրամադրելու կանոնները: 1989 թ. դեկտեմբերին ընդունվել է «ԵՄ երկրներում աշխատողների հիմնական սոցիալական իրավունքների մասին» համաձայնագիրը: Համաձայնագրում նշվում է, որ ԵՄ երկրների ցանկացած աշխատող իրավունք ունի ազատ տեղաշարժվելու անդամ-երկրների տարածքով՝ ենթարկվելով հասարակական կարգուկանոնի, հասարակական անվտանգության և հասարակական առողջության պահպանման անհրաժեշտությամբ պայմանավորված կանոններին և սահմանափակումներին⁸³: Համաձայնագրում նշվում է, որ ազատ տեղաշարժը յուրաքանչյուր աշխատողի իրավունք է տալիս սոցիալական ապահովության, աշխատանքի պայմանների և աշխատանքի տեղավորման բնագավառում առկա հավասարության սկզբունքների հիման վրա ընտրել ցանկացած մասնագիտություն ԵՄ երկրներում: ԵՄ երկրները մշակել են տնտեսական և քաղաքական միասնական գոտի, որտեղ բնակչության տեղաշարժը ազատ է: Այսպիսով, ձևավորվել է արևմտաեվրոպական միգրացիոն համակարգը, որի հիմքում ընկած են ԵՄ միջուկը կազմող ռեցիպիենտ երկրները (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Գերմանիա, Բելգիա և Սկանդինավյան երկրներ) (տե՛ս գծապատկեր 2.1):

⁸² Բոլոր շենգենյան երկրները, բացառությամբ մի քանի երկրի՝ Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեյցարիայի հանդիսանում են ԵՄ անդամ: Շենգենյան գոտին ընդգրկում է 26 երկիր:

⁸³ Տե՛ս Европейская конвенция о правовом положении рабочих-мигрантов СДСЕ №:093, <http://conventions.coe.int/Treaty/rus/Treaties/Html/093.htm>



ԵՄ միջուկ
 ԵՄ ծայրամաս
 ԵՄ ընդլայնում
 «Թեկնածուներ»
 Այլ երկրներ

Գծապատկեր 2.1 Արևմտաեվրոպական միգրացիոն համակարգի գոտիներ

ԵՄ միջուկը կազմող երկրների ծայրամասային գոտին (Հարավարևմտյան Եվրոպա՝ Միջերկրական ծովի երկրներ) ԵՄ-ին միացել են ավելի ուշ և երկար ժամանակ հենց իրենք են հանդիսացել դոնոր ԵՄ միջուկ երկրների համար: Այդ միտումը շարունակվում է նաև այսօր, սակայն ավելի քիչ տեմպերով, քանի որ ներկայումս այդ երկրներում առկա են իմիգրացիոն մեծ հոսքեր: Այս երկրները միգրանտների համար հանդիսանում են նաև տարանցիկ երկրներ ԵՄ միջուկ երկրներ մուտք գործելու համար: Երրորդ գոտին ԵՄ-ին 2004 թ. միացած երկրներն են (Հունգարիա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Մալթա, Կիպրոս): ԵՄ աշխատուժի շուկայում խնդիրները սրվեցին հենց այդ ընդլայնման արդյունքում, քանի որ այդ երկրներում առկա էր գործազրկության բարձր մակարդակ: Աշխատավարձի միջին մակարդակը զգալիորեն ցածր էր, քան մյուս երկրներում: ԵՄ-ի աշխատանքային միգրացիայի սահմանափակումների կիրառումը պայմանավորված էր այստեղ խիստ արտահայտված ժողովրդագրական խնդիրներով: Ազատ մուտքի և աշխատանքի իրավունք ստացան միայն Մալթայի և Կիպրոսի բնակիչները: Իհարկե, ԵՄ-ի ոչ բոլոր երկրները նման սահմանափակումներ կիրառեցին: Օրինակ՝ Մեծ Բրիտանիան, Իռլանդիան և Շվեդիան ընդհանրապես նման սահմանափակումներ չկիրառեցին: Մի քանի տարի անց Իսպանիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան, Հունաստանը, Բելգիան, Դանիան, Ֆրանսիան, Նիդերլանդները և

Լյուքսեմբուրգը ևս որոշ կատեգորիայի աշխատողների համար արտոնյալ ռեժիմ սահմանեցին: Միայն Գերմանիան և Ավստրիան որոշեցին մինչև սահմանված ժամկետը չհանել սահմանափակումները: Սահմանափակումները կիրառվել են 3 փուլով՝ “2+3+2” սխեմայով.

- 2004–2006թթ. կարելի էր պահպանել այն պայմանները, որոնք առկա էին մինչև ընդլայնումը, կամ կիրառել սահմանափակումների աստիճանաբար վերացում:
- 2006–2009թթ. պետությունը պետք է Եվրոպական հանձնաժողովին տեղյակ պահեր սահմանափակումների կիրառությունը շարունակելու մասին, հակառակ դեպքում կկիրառվեր ազատական ռեժիմ:
- 2009–2011թթ. պետությունը սահմանափակումներ կարող էր կիրառել միայն այն դեպքում, եթե ԵՄ նոր երկրներից աշխատանքային միգրանտների ներհոսքը կարող էր վտանգ ներկայացնել երկրի աշխատուժի շուկային:

2011 թվականի մայիսին Ավստրիան և Գերմանիան, ըստ պայմանավորվածության, ևս հանեցին միգրացիոն արգելքները ԵՄ անդամ երկրների նկատմամբ: Չնայած այդ հանգամանքին՝ Գերմանիայում աշխատանքային միգրանտների նկատմամբ որոշ արգելքներ կան մինչ օրս: Միգրանտները պարտավոր են տիրապետել գերմաներենին: Ներկայումս Գերմանիայում որակավորված մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկ կա: 2011թ. դրությամբ միայն մաթեմատիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, գիտության և տեխնիկայի ոլորտում կա չգրադեցրած 117 հզ. աշխատատեղ, մեծահասակների և երեխաների խնամքի ոլորտում՝ 20 հզ. աշխատատեղ⁸⁴: Գերմանիայում առկա ժողովրդագրական իրավիճակը հանգեցրել է աշխատուժի պակասության: Այդ խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է կատարել բարեփոխումներ երկրի մուտքի վիզաների տրամադրման ոլորտում, մասնավորապես՝ նախատեսվում է կիրառել վիզաների տրամադրման բալային համակարգ: Այդ համակարգը արդեն հաջողությամբ գործում է Ավստրիայում և Կանադայում: Բացի այդ, յուրահատուկ մոտեցում է ցուցաբերվում Գերմանիայում սովորող արտասահմանցի ուսանողների նկատմամբ: Ուսումն ավարտելուց հետո նրանք

⁸⁴ St'и Ирина Молодикова, Иммиграция в страны Европейского Союза

իրավունք են ստանում ևս 1 տարի մնալ երկրում աշխատանք գտնելու նպատակով: Եթե աշխատանքը գտնվել է, ուսանողական վիզան փոխարինվում է աշխատանքայինով: Հետագայում կարող է ստանալ նաև քաղաքացիություն:

Գերմանիայի համար լուրջ խնդիր է մահմեդականների թվաքանակի աճը (3,5 մլն, բնակչության 10%) երկրում: Թուրքիայից միգրացիոն հոսքերը ամենաշատն են: Մեծ է նաև ասիական, աֆրիկյան, լատինամերիկյան և չինական զանգվածի առկայությունը երկրում: Չինացիները Գերմանիա են գալիս զբոսաշրջային խմբերով, իսկ հետագայում ամեն ճիգ գործադրում են փախստականի կարգավիճակ ստանալու և մնալու համար: Գերմանիայում լուրջ խնդիր է միգրանտներին տեղի հասարակությանն ինտեգրելը: Գերմանիայի կառավարությունն այդ խնդրի լուծման նպատակով միջոցառումներ է ձեռնարկել: Այն միգրանտները, որոնք կիրառարվեն հաճախել ինտեգրման կուրսերի, կտուգանվեն՝ ընդհուպ մինչև կգրկվեն երկրում բնակվելու և աշխատելու թույլտվությունից:

Ֆրանսիան ևս հայտնի է իր իմիգրացիոն կոշտ քաղաքականությամբ: Արտոնյալ պայմաններ այստեղ ունեն գիտնականները, արվեստագետները, նկարիչները և մարզիկները: Մնացած բոլորի համար Ֆրանսիայում օրինական բնակության և աշխատանքի թույլտվություն ստանալը բարդ է: Օրինակ՝ 10 տարով բնակության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է կնքել ինտեգրման պայմանագիր, տիրապետել ֆրանսերենին և ֆրանսիական քաղաքակրթությանը: Աշխատանքային իմիգրացիայի համար բավական չէ ունենալ անհրաժեշտ որակավորում և գտնել գործատու տվյալ երկրից: Ֆրանսիական օրենքով աշխատանքային միգրանտը և նրա գործատուն պետք է ապացուցեն, որ տվյալ աշխատատեղը անհասանելի է Ֆրանսիայի քաղաքացիների համար: Որպես կանոն, ֆրանսիական կազմակերպությունները ձգտում են հրավիրել բարձր մակարդակի արտասահմանյան մասնագետների⁸⁵:

Որոշ մասնագետների կարծիքով ԵՄ շրջանակներում ազատ տեղաշարժի սկզբունքների իրականացումը կարող է հանգեցնել բարձր որակավորում ունեցող մասնագետների կենտրոնացմանը առավել զարգացած երկրներում: Ցածր որակավորում ունեցող աշխատողները ավելի քիչ կտեղաշարժվեն: ԵՄ շրջանակներում

⁸⁵ St'u Ирина Молодикова, Иммиграция в страны Европейского Союза

աշխատուժի միգրացիայի արդյունքը կարող է լինել դեմայինգը:

Միգրացիոն քաղաքականության ուղղության ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև միջազգային փորձը: Առկա գնահատականների համաձայն՝ ԵՄ ժամանած միգրանտների 50 տոկոսը այն մարդիկ են, որոնք չունեն մասնագիտական որակավորում կամ ունեն ընդհանուր կրթության նվազագույն մակարդակ: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ ժամանած միգրանտների զգալի մասը ունեն բարձր որակավորում: Իսկ ինչով է պայմանավորված այդ տարբերությունը: Իհարկե, էական նշանակություն ունեն երկրների միգրացիոն քաղաքականությունները: Սակայն, ինչպես ցույց է տալիս սոցիոլոգիական վերլուծությունը, վճռական դեր է խաղում ԵՄ-ում գործող սոցիալական երաշխիքների համակարգը: Այդ երաշխիքները հնարավորություն են տալիս նաև լավ ապրելու նրանց, ովքեր չեն աշխատում կամ կատարում են հասարակ աշխատանք: ԱՄՆ-ում նման երաշխիքները բացակայում են, այդ պատճառով մեծ հնարավորություններ ունեն միայն որակավորված աշխատողները: Այսպիսով, նման սոցիալական երաշխիքները ապակայունացնում են աշխատուժի շուկան, իսկ բարձր հարկերը նվազեցնում են աշխատելու շարժառիթները: Հարկային բեռը և սոցիալական պատասխանատվությունը դառնում են կապիտալի արտահոսքի պատճառ⁸⁶:

ԱՊՀ-ի օրինակով. Աշխատուժի միգրացիայի տարածաշրջանային կարգավորումը որոշ չափով նաև իրականացվում է ԱՊՀ շրջանակներում: 1994 թ. ապրիլին ԱՊՀ անդամ-երկրները ստորագրել են «Աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների սոցիալական պաշտպանվածության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը: Ռուսաստանում այդ համաձայնագիրը ուժի մեջ է մտել 1995 թ. սեպտեմբերի 1-ից, համաձայն որի՝ Ռուսաստանի տարածքում աշխատավոր միգրանտները՝ ըստ աշխատանքի ձևավորման գործող օրենսդրության, օգտվում են սոցիալական ապահովագրությունից և սոցիալական ապահովությունից (բացի կենսաթոշակից): Աշխատանքային միգրացիայի կարգավորումը ԱՊՀ շրջանակներում իրականացվում է նաև երկկողմ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա: Ռուսաստանի, Հայաստանի,

⁸⁶ Տե՛ս www.oecd.org ինտերնետային կայքը

Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միջև կնքվել են երկկողմանի համաձայնագրեր, որոնք կարգավորում են միգրանտների և նրանց ընտանիքների աշխատանքային գործունեությունը և սոցիալական պաշտպանվածությունը:

Աշխատուժի միգրացիայի միջազգային կարգավորումը

Աշխատուժի միգրացիայի պետական և տարածաշրջանային կարգավորումից բացի շատ կարևոր է միգրացիայի միջազգային կարգավորումը: Աշխատուժի միգրացիայի կարգավորման խնդրով զբաղվում են մի շարք միջազգային կազմակերպություններ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) և այլն: Այդ կազմակերպությունների դերը միգրացիայի կարգավորման գործում այն է, որ դրանք փորձում են օժանդակել միգրացիոն գործընթացներում ներգրավված երկրների համագործակցությանը:

1951 թ. Բելգիայի և ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Բրյուսելում տեղի ունեցավ միջազգային համաժողով, որի արդյունքում ստեղծվեց Եվրոպայում միգրանտների տեղաշարժի հետ կապված Միջկառավարական ժամանակավոր կոմիտե, որը հետագայում վերանվանվեց «Եվրոպայում միգրացիայի հարցերով զբաղվող միջկառավարական կոմիտե» (ԵՄՄԿ): 1964 թ. ԵՄՄԿ-ն սկսեց իրականացնել «Միգրացիա զարգացման համար ծրագիրը», որն ուղղված էր Լատինական Ամերիկայի երկրների համար բարձր որակավորում ունեցող միգրանտների հավաքագրմանը և տեղաբաշխմանը: ԵՄՄԿ-ն երկրներին հնարավորություն էր տալիս կատարել փորձի փոխանակում միգրացիայի կարգավորման բնագավառում: 1974 թ-ից ԵՄՄԿ-ն սկսեց իրականացնել «Տաղանդավոր միգրանտներին հայրենիք վերադարձնելու» ծրագիրը, 1980 թ. ԵՄՄԿ-ի խորհուրդն այն վերանվանեց «Միգրացիայի միջկառավարական կոմիտե», իսկ 1989 թվականին այն անվանեց «Միգրացիայի միջազգային կազմակերպության»: 1990 թվականից սկսած՝ ՄՄԿ-ն իրագործել է արտասահմանում դժվարին պայմաններում գտնվող միգրանտների հայրենադարձության ծրագիր:

Տարբեր երկրների կառավարությունների և այլ գործակալությունների հետ համագործակցելու արդյունքում ՄՄԿ-ն մշակել է աշխատուժի միգրացիայի հատուկ ծրագրեր, որոնք շահավետ են ինչպես ռեցիպիենտ, այնպես էլ դոնոր երկրների համար, ընդ որում՝ դրանք նպաստում են միգրացիոն գործընթացների առավել լավ

կարգավորմանը և երկրների զարգացմանը: ՄՄԿ-ի ծրագրերը տարբերվում են՝ կապված երկրում առկա միգրացիոն իրավիճակի քաղաքական, տնտեսական և աշխարհագրական իրավիճակից:

ՄՄԿ-ն օգնում է վերանայել և բարելավել աշխատուժի միգրացիայի ազգային քաղաքականությունները: Շատ երկրներ ռեցիպիենտ երկրներում բախվում են դժվարություններին: Այդ պատճառով ՄՄԿ-ն մշակել է հատուկ ծրագիր, որն իր մեջ ներառում է ռեցիպիենտ երկրի կենսապայմանների և աշխատանքային պայմանների վերաբերյալ տեսական գիտելիքներ, լեզվի բազային գիտելիքներ, բժշկական խորհրդատվություն, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ դասընթաց: Այդ ծրագիրը նաև հայրենիք վերադառնալիս օգնում է միգրանտներին սոցիալ-տնտեսական ադապտացման հարցում:

ՄՄԿ-ն նպաստում է միգրացիոն գործընթացների կարգավորման հետ կապված ժամանակակից միջոցառումների ձեռնարկմանը: Նույն աշխարհագրական գոտում գտնվող երկրները միասին քննարկում են աշխատուժի միգրացիայի ազդեցությունը իրենց երկրների և ամբողջ տարածաշրջանի վրա, ինչպես նաև մշակում են միասնական գործողություններ: Այդպիսի գործողություններ մշակվում են ԱՄՆ-ում, Ասիայում, Հարավային և Արևմտյան Աֆրիկայում, Հարավարևելյան Եվրոպայում, Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: ՄՄԿ-ն նախաձեռնել է գործողությունների խումբ, որով նույնիսկ աշխարհագրորեն իրարից հեռու գտնվող դոնոր և ռեցիպիենտ երկրները կկարողանան ազատ հանդիպել և բանակցություններ վարել միգրացիոն հոսքերը կարգավորող միասնական գործողությունների վերաբերյալ: Իր գոյության ընթացքում ՄՄԿ-ն օգնել է միլիոնավոր միգրանտների:

ԱՄԿ-ն ստեղծվել է 1919 թ.՝ «Վերսալյան հաշտության պայմանագրի» համաձայն: Նրա գործունեության բնագավառը աշխատուժի սոցիալ-տնտեսական խնդիրներն են:

ԱՄԿ-ի խնդիրներն են.

- աշխատաժամանակի կարգավորումը,
- աշխատուժի հավաքագրման կարգավորումը,
- գործազրկության դեմ պայքարը,
- կյանքի նորմալ պայմաններ ապահովող աշխատավարձի երաշխավորումը,

- աշխատողների պաշտպանությունը արտադրությունում հնարավոր դժբախտ պատահարներից,
- կանանց, երեխաների և դեռահասների պաշտպանությունը,
- սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության հարցերի կարգավորումը,
- մասնագիտական կրթության կազմակերպումը:

Միգրացիայի հիմնախնդիրները մշտապես գտնվում են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ուշադրության կենտրոնում: ՄԱԿ-ի՝ ազգաբնակչության հարցերով զբաղվող հանձնաժողովը համապատասխան դրամական միջոցներ ունի, որոնց մի մասը օգտագործվում է բնակչության միգրացիայի բնագավառում ազգային ծրագրերի սուբսիդավորման համար: ՄԱԿ-ի՝ կրթության, գիտության և մշակույթի հարցերով զբաղվող կազմակերպության կոնվենցիաներում ներառված են դրույթներ, որոնք ուղղված են միգրանտների և նրանց ընտանիքի անդամների կրթական մակարդակի բարելավմանը: ՄԱԿ-ի հովանու ներքո գործող մի շարք կազմակերպություններ զբաղվում են միջազգային միգրացիայի մասշտաբների, միտումների և ազգային քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման և տարածման աշխատանքներով, մյուս մարմինները զբաղվում են մարդու իրավունքների, երկրների տարածքում մարդկանց տեղաշարժի, ընտանիքների վերամիավորման, անօրինական միգրացիայի, փախստականների, միգրանտների դրամական փոխանցումների և այլ հարցերով:

Աշխատուժի միգրացիային առնչվող հիմնական կոնվենցիաներն են.

ԱՄԿ-ի «Աշխատանքային միգրանտների մասին» 1949թ.-ի թիվ 97 կոնվենցիան, որի հիմնական գաղափարներից մեկն այդ փաստաթուղթը վավերացրած կառավարությունների կողմից միգրանտների նկատմամբ հավասարության սկզբունքի կիրառումն է՝ անկախ նրանց ազգությունից, ռասայական պատկանելությունից, կրոնից, սեռից և այլն: Կոնվենցիան պարունակում է հոդվածներ, որոնք ուղղված են այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց դեպքում միգրանտները ռեցիպիենտ երկրի քաղաքացիների հետ Կոնվենցիայով որոշված հարցերում կունենան հավասար իրավունքներ: Կոնվենցիայի երկու հավելվածները վերաբերում են միգրանտների

աշխատանքային պայմաններին և աշխատանքի տեղավորմանը⁸⁷:

ԱՄԿ-ի «Սոցիալական ապահովության բնագավառում երկրի քաղաքացիների, օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավահավասարության մասին» 1962թ.-ի թիվ 118 կոնվենցիան⁸⁸: Ընդունած երկրները պարտավորվում են այլ երկրների քաղաքացիների նկատմամբ (անկախ նրանց՝ երկրում գտնվելու ժամանակահատվածից) կիրառել իրավահավասարության սկզբունք՝ կապված սոցիալական ապահովության հետ: Ըստ այս կոնվենցիայի՝ աշխատանքային միգրանտներն ունեն ոչ պակաս բարենպաստ վերաբերմունքի իրավունք, քան համապատասխան երկրի քաղաքացիներն այնպիսի հարցերի առնչությամբ, ինչպիսիք են բուժսպասարկումը, աշխատունակությունը կորցնելու դեպքում հաշմանդամության նպաստը, ժամանակավոր անաշխատության նպաստը, ծերության, մահվան, գործազրկության նպաստները և այլն:

ԱՄԿ-ի՝ «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատանքային միգրանտներին հնարավորությունների և դիմելու հավասարության ապահովման մասին» 1975թ.-ի թիվ 143 կոնվենցիայի համաձայն՝ կառավարությունները պետք է հայտնաբերեն իրենց տարածքներում անօրինական միգրացիան և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն այն նվազեցնելու համար: Կոնվենցիան ներառում է կառավարություններին ներկայացվող պահանջներ երկրի տարածքում օրինականորեն գտնվող միգրանտների կամ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ կիրառել իրավահավասարության սկզբունք կրթության, զբաղվածության, սոցիալական ապահովության, արհմիություններում մասնակցության և քաղաքացիական իրավունքի և սոցիալական երաշխավորության այլ հարցերում: Այս կոնվենցիայի համաձայն՝ աշխատանքային միգրանտները չպետք է ենթարկվեն որևէ խտրականության աշխատատեղերի կրճատման պատճառով:

«Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ-ի 1990թ.-ի կոնվենցիան ուժի մեջ մտավ

⁸⁷ Տե՛ս В.Е.Рыбалки, «Международные экономические отношения», Москва 1998, стр.153

⁸⁸ Տե՛ս International Convention on the Protection of the Rights of Migrant Workers and Members of their Families, <http://www.ilo.org/public/english/employment/skills/hrdr/instr/un.htm>

2003թ. հուլիսի 1-ին⁸⁹: Կոնվենցիայի նպատակն է կանխել և վերացնել միգրանտ աշխատողների շահագործումը միգրացիայի ողջ ընթացքում ինչպես փաստաթղթով, այնպես էլ առանց փաստաթղթի միգրանտների իրավունքների, բարօրության և վերաբերմունքի, ինչպես նաև դոնոր և ռեցիպիենտ երկրների պարտավորությունների և պարտականությունների վերաբերյալ մի շարք միջազգային նորմերի ապահովմամբ: Այն նպատակ ունի վերջ դնելու միգրանտ աշխատողների ապօրինի կամ գաղտնի աշխատանքի տեղավորմանը և թրաֆիքինգին, ինչպես նաև կանխել թերի փաստաթղթերով կամ առանց փաստաթղթերի միգրանտ աշխատողների շահագործումը:

Գոյություն ունեն նաև միգրացիային առնչվող մի շարք հրամանագրեր, որոնցից հիմնականն է ԱՄԿ-ի «Աշխատանքային միգրանտների մասին» թիվ 86 հրամանագիրը, որի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի մինչև հայրենիքից հեռանալը տեղեկանալ աշխատանքի համար նախընտրած երկրում առկա աշխատանքային և կյանքի ընդհանուր պայմաններին ու այնտեղ գոյություն ունեցող աշխատանքի հնարավորությունների մասին:

Միջազգային իրավունքով նախատեսված է նաև միգրանտների հնարավորությունը ռեցիպիենտ երկրում ստանալ կրթություն կամ բարձրացնել իրենց որակավորման աստիճանը: ԱՄԿ-ի հրահանգներում նշված է, որ միգրանտները ռեցիպիենտ երկրի քաղաքացիների հետ կրթություն ստանալու հավասար իրավունքներ ունեն:

Միջազգային կազմակերպությունների համապատասխան փաստաթղթերը կիրառվում են ազգային օրենսդրություններում, քանի որ աշխատուժի միգրացիայի բնագավառում ազգային քաղաքականություն մշակելիս պետք է հաշվի առնվեն նաև միջազգային կոնվենցիաների պահանջները:

Անօրինական (անլեգալ) միգրացիայի կարգավորումը.

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ օրեցօր աճում է անօրինական միգրանտների թիվը: Այդ պատճառով անօրինական միգրացիոն հոսքերն այսօր մեծ ուշադրության են արժանացել տարբեր երկրների կառավարությունների կողմից: Սակայն զարգացած երկրներին ձեռնտու է ներմուծել օտարերկրյա աշխատուժ ավելի ցածր

⁸⁹ Տե՛ս Լ.Դեմարե,ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրո (ACRTAV), Աշխատանքի միջազգային գրասենյակ, «Արժանապատիվ աշխատանք որոնելիս, աշխատանքային միգրանտների իրավունքները», Երևան 2010թ., էջ 61

գներով, քան այն կլինեի օրինական ճանապարհով ներմուծելու դեպքում:

Ցանկացած երևույթի դեմ պայքարի կազմակերպումը նախնառաջ պահանջում է հայտնաբերել այդ երևույթի դրդապատճառները: Իհարկե, պատճառների շարքը կարելի է երկար շարունակել, սակայն նշենք դրանցից հիմնականները: Անօրինական միգրացիայի հիմնական պատճառներն են.

- իմիգրացիայի զսպող քաղաքականությունը, որի արդյունքում մեծանում է անօրինական միգրանտների թիվը,
- օրինական իմիգրանտների կողմից իրենց պարտականությունների չկատարումը: Այսինքն՝ երբ իմիգրանտը, որին թույլատրվում է մուտք գործել տվյալ երկիր, բայց չի թույլատրվում աշխատել այդ երկրում, սկսում է աշխատել,
- հարևան երկրներում սահմանների բարձիթողի իրավիճակը և այլն:

Ինչ վերաբերում է անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներին, ապա դրանք տարբեր են և ժամանակի ընթացքում փոփոխվում են: Այդուհանդերձ նշենք դրանցից մի քանիսը:

- Տեղեկատվություն: Այսինքն անօրինական միգրացիայի վերաբերյալ ընդունվող օրենքների մասին հայտարարում շահագրգիռ շրջանակներում: Օրինակ 1995՝ թվականին ԱՄՆ նախագահը Լատինամերիկյան մի շարք երկրներում հայտարարեց, որ անօրինական միգրանտի կարգավիճակ ունեցող ցանկացած անձ հայտնաբերվելուն պես կձերբակալվի:
- Համապատասխան պահանջների ներկայացում տրանսպորտային ընկերություններին: Տրանսպորտային ընկերություններից պահանջվում է, որ պատշաճ կերպով ստուգվեն ուղևորների համապատասխան փաստաթղթերի առկայությունը: «Քաղաքացիական ավիացիայի ստանդարտների» կոնվենցիայում, որն ընդունվել է 1994 թվականին ICAO շրջանակներում, նախատեսվում է համապատասխան պատժամիջոցների կիրառում անպարտաճանաչ ավիաընկերությունների նկատմամբ:
- Սահմանների վերահսկում:
- Միգրանտների մուտքի ժամանակ փաստաթղթերի ստուգման բարեխիղճ իրականացում:

- Ապաստան տրամադրելու գործընթացի ստանդարտացում և վերահսկում: Քանի որ որոշ դեպքերում մարդիկ տեղափոխվում են մի երկրից մյուսը, որպես փախստական, սակայն իրականում հանդիսանում են տնտեսական միգրանտ:
- Երկրի ներսում օրինական իմիգրանտի գործունեության վերահսկում: Քանի որ գործնականում լինում են դեպքեր, երբ օրինական իմիգրանտները այս կամ այն պատճառով վերածվում են անօրինականի, սակայն քիչ չեն նաև այնպիսի դեպքեր, երբ անօրինական իմիգրանտները փորձում են վերածվել օրինականի կեղծ ամուսնության միջոցով: Այդ կապակցությամբ անհրաժեշտ են այնպիսի միջոցառումներ, որոնք կբացառեն նման դեպքերը:
- Վերահսկողության սահմանում տեղի գործարարների նկատմամբ: Քանի որ վերջիններս, հրապուրվելով անօրինական աշխատողների էժան լինելու հանգամանքով, վարձում են նրանց:
- Անօրինական միգրանտների նկատմամբ պատժամիջոցների սահմանում, դրանք կարող են լինել բանտարկություն, արտաքսում և այլն:
- Համաներման շնորհում:

Այսպիսով, կարծում ենք, ինչպիսին էլ լինի պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների վերաբերմունքը աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնախնդիրների նկատմամբ, միևնույն է, համաշխարհային տնտեսության զարգացման տեսանկյունից աշխատուժի շարժունակության աստիճանի բարձրացումն այնպիսի գործընթաց է, որը և առանձին երկրի, և ամբողջ աշխարհի մակարդակով կարող է նպաստել ժողովուրդների սոցիալ-տնտեսական շահերի իրականացմանը: Արդի ժամանակաշրջանում չի կարելի պատնեշներ դնել աշխատուժի միջազգային հոսքերի դեմ, քանի որ դրա ազատ տեղաշարժերի սահմանափակումը հակասում է գլոբալացման գաղափարներին⁹⁰:

⁹⁰ Տե՛ս Վ. Ղալումյան, Գլոբալ հիմնախնդիրների դրսևորումները ՀՀ-ում, «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ուսանողի աչքերով», Երևան 2010, էջ 139-142:

ԳԼՈՒԽ 3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

3.1 ՀՀ միգրացիոն իրավիճակի ընդհանուր բնութագիրը

Շուկայական հարաբերությունների անցման արդյունքում նախկին ԽՍՀՄ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում բնակչության արտագաղթը վերջին երեք տասնամյակներում ձեռք բերեց անընդհատ աճի միտում: Այն իր կնիքն է դրել երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման վրա, որն իր հերթին ունի տարաբնույթ պատճառներ:

Մի շարք փոխկապակցված արտակարգ գործոնների արդյունքում Հայաստանը հայտնվել էր աննախադեպ ինտենսիվ միգրացիոն հոսքերի հորձանուտում: Սպիտակի երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմը, շրջափակումը, տնտեսական խորը ճգնաժամը, տնտեսության կազմալուծումը, գործազրկությունը, աղքատությունը, սոցիալական լարվածությունը և սոցիալական անպաշտպան խավերի ավելացումն ու դրա հետևանքով բնակչության բևեռացումը ստիպեցին արտագաղթելու մեծաթիվ մարդկանց: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ այդ ժամանակաշրջանում ՀՀ-ից արտագաղթողների մեջ մեծ տեսակարար կշիռ էին կազմում նաև Ադրբեջանից ներգաղթած փախստականները, որոնց վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են և թույր կարծիք է ստեղծվում, թե 1990-ական թթ. սկզբին ՀՀ-ից արտագաղթացիները միայն ՀՀ քաղաքացիներ են եղել:

Հարկ է նշել, որ ըստ ՄԱԿ-ի ազգաբնակչության բաժնի՝ վերջին 30 տարիների ընթացքում Հայաստանից համախառն զուտ միգրացիան (իմիգրանտների թվից հանած էմիգրանտների թիվը) կազմել է ավելի քան 1 մլն. մարդ⁹¹:

1988թ. Ադրբեջանում իրականացված հայկական ջարդերից հետո մեր երկիրը ընդունեց շուրջ 420 հազար փախստականների⁹²: Եթե 1988–1992թթ. միջպետական միգրացիոն քառսի տարիներին արտագաղթի հիմնական մասը բաժին էր ընկնում

⁹¹ Տե՛ս World Population Prospects, The 2 Revision, Number of migrants", I E I .Population Division, Department of Economic and Social affairs <http://esaun.Org/unpd/wpp/E eel- ata/migration.html>

⁹² Տե՛ս Վ.Ե.Խոջաբեկյան «Հայաստանի բնակչության վերարտադրություն XIX-XX դարերում և XXI դարի շեմին», Երևան 2004 էջ 308

փախստականներին և աղետի գոտու բնակիչներին, ապա այնուհետև փոխվեցին արտագաղթի դրդապատճառները: Դրանք հիմանական կրեցին տնտեսական և սոցիալական բնույթ: Արտագաղթի այդ ալիքը ընգրկում էր Հայաստանի մշտական բնակչությանը: ՀՀ-ի համար էմիգրացիոն ակտիվության գագաթնակետերն էին 1992-1994թթ: Հետագա 1995-2001 թթ. երկրի իրավիճակը որոշակիորեն կայունացավ և էմիգրացիոն բարձր ակտիվությամբ պայմանավորված մեկնումների միջին տարեկան թիվը նվազեց, սակայն 1999թ. հոկտեմբերի 27-ի դեպքերից հետո տեղի ունեցավ էմիգրացիայի նոր ալիք, որը մեծապես պայմանավորված էր բարոյահոգեբանական գործոնով: Այսպիսով, 1988-2001թթ արտաքին միգրացիոն շարժի արդյունքում տարբեր գնահատականներով արտագաղթել են մոտ 1.1 մլն ՀՀ քաղաքացիներ⁹³: Սակայն հարկ է նաև նշել, որ նշյալ ժամանակահատվածում արտագաղթի վերաբերյալ ճշգրիտ տվյալները բացակայում են կամ ոչ լիարժեք են: Կան տարբեր կարծիքներ. օրինակ՝ կառավարության աղբյուրներ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների համաձայն՝ 1992-2002թթ. օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թիվը 671 հզ.-ով գերազանցել է ժամանողների թվին⁹⁴: Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկներով 1991-2000թթ. ՀՀ բնակչության միջպետական տեղաշարժերի բացասական մնացորդը կազմել է 1 300 000 մարդ⁹⁵, իսկ ԱՎԾ պաշտոնական տվյալները բոլորովին այլ են, ըստ որի՝ 1991-2010թթ.. ՀՀ էմիգրանտների թիվը կազմել է 870,2 հազար մարդ, սակայն մեր կարծիքով այս տվյալները լիարժեք չեն⁹⁶: Ակնհայտ է, որ նման զանգվածային երևույթն էական ազդեցություն է ունեցել և կշարունակի ունենալ մեր երկրի բոլոր ոլորտների վրա:

Մեր օրերում ևս բնակչության արտագաղթի խնդիրն առկա է և նույնիսկ չափանշանցեցրած չենք լինի, եթե ասենք, որ այն դարձել է ազգային անվտանգության

⁹³ Տե՛ս Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա, Ս. Դալլաքյան, «ՀՀ միգրացիոն քաղաքականության գերխնդիրները», հուլիս 2011, էջ 38

⁹⁴ Տե՛ս ՀՀ կառավարության աղբյուրներ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից ՀՀ կառավարությանն աղբյուրներ «Միգրացիայի և փախստականների վարչությանը տրամադրած տվյալները 1992-2002թթ»

⁹⁵ Տե՛ս Վ.Ե.Խոջաբեկյան «Հայաստանի բնակչության վերարտադրություն XIX-XX դարերում և XXI դարի շեմին», Երևան 2004 էջ 308

⁹⁶ Տե՛ս Migration and Remittances actboo 2 , 2nd edition, he International an for Reconstruction and envelopment/ he World an, 2011

սպառնալիք: Չնայած այն հանգամանքին, որ 1990-ական թվականներից մինչ այժմ զգալի բարեփոխումներ են կատարվել տնտեսական ոլորտում, և իրավիճակը համեմատաբար բարելավվել է, այնուհանդերձ արտագաղթը շարունակվում է: Այս դեպքում ևս արտագաղթի պատճառները հիմնականում սոցիալ-տնտեսական բնույթի են.

- սոցիալական ոլորտի և հասարակական հարաբերությունների խիստ անհամամասնություն,
- ՀՀ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների սահմանափակում կամ արգելում, ազատ ձեռներեցության և մրցակցության խոչընդոտում, աշխատողների սոցիալական իրավունքների և պաշտպանվածության ոտնահարում,
- մենաշնորհային տնտեսության ստեղծում,
- ապագայի նկատմամբ հավատի բացակայություն,
- բարոյական արժեհամակարգի խեղում և վերացում,
- գործազրկության բարձր մակարդակ,
- եկամուտների խիստ անհավասար բաշխում և հասարակության ահռելի բևեռացում,
- աշխատուժի շուկայի ցածր արդյունավետություն,
- կյանքի ցածր կենսամակարդակ և այլն:

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է 2002-2016թթ. միջազգային ուղևորափոխադրումների ծավալները: Մինչ 2011թ.-ը ուղևորաշրջանառության ծավալի և ուղևորափոխադրումների հաշվեկշռի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից՝ ՀՀ սահմանային անցակետերով իրականացվող արտաքին ուղևորաշրջանառության վերաբերյալ տվյալները: Սակայն 2010 – 2011թթ. ամբողջությամբ անցում է կատարվել սահմանային հատումների գրանցումների առավել լիարժեք՝ քաղաքացիության, մուտքի և ելքի երկրի վերաբերյալ տեղեկություններ ապահովող ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգին:

Միջազգային ուղևորափոխադրումների ծավալները 2002-2016թթ.⁹⁷ (հազար մարդ)

	Ժամանել են	Մեկնել են	Հաշվեկշիռ	Ուղևորահոսքերի ընդհանուր ծավալը
2002	590.7	593.4	-2.7	1184.0
2003	618.3	628.5	-10.2	1246.9
2004	739.9	737.8	2.1	1477.7
2005	845.8	833.3	12.5	1679.2
2006	983.7	962.0	21.8	1945.7
2007	1296.6	1296.8	-3.2	2590.3
2008	1397.2	1420.2	-23.1	2817.4
2009	1432.0	1457.0	-25.0	2889.0
2010	1754.2	1800.9	-46.7	3555.1
2011	1945.1	1988.9	-43.8	3534.1
2012	2191.8	2234.6	-42.8	4426.4
2013	2476.3	2507.5	-31.2	4983.8
2014	2734.6	2776.3	-41.8	5510.9
2015	2709.3	2752.7	-43.4	5462.0
2016	2867.1	2915.2	-48.2	5782.3

Ըստ սահմանային անցակետերով իրականացվող ուսումնասիրությունների՝ արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը 2016թ. կազմել է 5782.3 հազ. մարդ, 2015թ.՝ 5462.0 հազարի համեմատ: Ուղևորափոխադրումների հաշվեկշիռը 2016թ. կազմել է -48.2 հազ. մարդ, 2015թ. արձանագրված՝ -43.4 հազարի փոխարեն: Ընդ որում, ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից ստացված տվյալների համաձայն՝ ժամանումների և մեկնումների

⁹⁷ Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ինտերնետային կայք՝ www.smsmta.am

քանակակազմերում 2015թ. գերակշռել են ՀՀ քաղաքացիները, որոշակի մասնաբաժին են ունեցել նաև Իրանի քաղաքացիները: Ինչպես ժամանումների, այնպես էլ մեկնումների քանակակազմերում տղամարդիկ կազմել են 66%, կանայք՝ 34%⁹⁸:

Աղյուսակ 3.2

ՀՀ սահմանահատումներն ըստ օտարերկրյա քաղաքացիների քաղաքացիության երկրի 2014 և 2015թթ.⁹⁹

Քաղաքացիության երկիրը	2014թ.			2015թ.		
	Մուտք	Ելք	Հաշվեկշիռ	Մուտք	Ելք	Հաշվեկշիռ
Ընդամենը	2734596	2776268	-41672	2709284	2752711	-43427
Ռուսաստան	468511	468711	-200	445078	445355	-277
Վրաստան	343384	342016	1368	310948	308949	1999
Իրան	116227	115339	888	144551	143837	714
ԱՄՆ	24595	24567	28	33719	34025	-306
Ուկրաինա	26883	26195	688	27636	27764	-128
Այլ	1754996	1799440	-44444	1747352	1792781	-45429

Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միգրացիոն գործընթացներին՝ որպես դոնոր երկիր: Էմիգրանտների նախընտրած հիմնական երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ-ը, Ուկրաինան, Իսրայելը, Գերմանիան, Ֆրանսիան, Իսպանիան, Հունաստանը:

«ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն» հետազոտության շրջանակներում կատարած սոցիալոգիական համաձայն, վերջին տարիներին Հայաստանից մեկնելու հիմնական պատճառներն են.

- Հայաստանում աշխատատեղերի բացակայությունը՝ հարցվածների 22,6%,
- բարձր վարձատրվող աշխատանքի բացակայությունը՝ 24,1%,
- այլ պետությունում գտնվող ընտանիքի անդամին միանալը 20,5%

⁹⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016

⁹⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016

- մասնագիտական աշխատանքի բացակայությունը՝ 2,3%:

ԵԱՀԿ-ի պատվերով «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում ստացված տվյալների համաձայն՝ հարցվածների 93,5%-ի կողմից որպես մեկնելու դրդապատճառ են նշվել Հայաստանում զբաղվածության հետ կապված խնդիրները, որոնցից 46,5%-ը նշել է, որ Հայաստանում աշխատանք չկա, 43,0%-ը՝ նշել ցածր աշխատավարձը և այլն¹⁰⁰ (հավելված/գծապատկեր 7):


Ներգաղթողների և արտագաղթողների մոտ կեսը պատկանում է 21-49 տարիքային խմբին: Թե՛ ներգաղթողների և թե՛ արտագաղթողների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն տղամարդիկ: 2015թ. 20-49 տարիքային խմբի ներգաղթողների մեջ տղամարդիկ կազմել են 51.9 %, իսկ կանայք՝ ներգաղթողների 48.1 %-ը: Արտագաղթողների մեջ տղամարդիկ կազմել են 47.8 %, իսկ կանայք՝ 52.2 %:

Ուսումնասիրելով 2012-2015 թթ. տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների ներգրավվածությունը արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում, պարզվում է, որ նշված ժամանակահատվածում տնային տնտեսությունների անդամների 11.9%-ը ներգրավված են եղել տարբեր տեղաշարժերում: Այդ տեղաշարժերի 24.9%-ը եղել են ներքին, իսկ 75.1%-ը արտաքին միգրացիա: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսությունների անդամների 71.6%-ը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում, իսկ 28.4%-ը՝ այլ երկրներում: Ընդ որում, արտերկրում գտնվողների 11.6%-ի՝ ՀՀ-ից բացակայելու տևողությունը կազմել է երեք ամիս և պակաս, 56.4%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 43.6%-ինը՝ մեկ տարի և ավել: Հարկ է նշել, մինչև 3 ամիս բացակայածները միգրանտ չեն համարվում:¹⁰¹ Միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ տվյալները ներկայացված են գծապատկեր 3.1-ում, որտեղ արտացոլված են թե՛ ներքին, թե՛ արտաքին տեղաշարժերը¹⁰²:

¹⁰⁰ Տե՛ս ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություններ: Գիտահետազոտական աշխատանք.- Երևան 2010թ.


¹⁰¹ Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015

¹⁰² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016



Գծապատկեր 3.1 Աշխատանքային միգրանտները՝ ըստ գտնվելու վայրի 2015թ.

Դիտարկենք նաև աշխատուժի հոսքի դինամիկան ըստ մարզերի: Պատկերը խիստ մտահոգիչ է:



Գծապատկեր 3.2 Աշխատանքային միգրանտների թվի բաշխվածությունն ըստ մարզերի 2012-2015թթ.

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 3.2-ում 2012-2015թ.թ ընկած ժամանակահատվածում ամենամեծ թվով անվերադարձ մեկնած միգրանտները Շիրակի մարզից են (18.5%), ապա հաջորդում են Լոռվա մարզը՝ 16.2%, Երևանը՝ 16.1% և այլն:

Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական

ծառայության սահմանահատածների հաշվառման տվյալների՝ ՀՀ ժամանումների և մեկնումների թիվը 2016թ. ըստ տրանսպորտային միջոցների տեսակների ներկայացված է աղյուսակ 3.4-ում, որը հնարավորություն է տալիս գնահատելու ընթացիկ միգրացիոն իրավիճակը:

Քաղաքացիների գերակշռող մասը նախընտրում է ավտոմոբիլային ձևը, ինչը հիմնականում պայմանավորված է համեմատաբար մատչելի գներով, ի տարբերություն օդային և երկաթուղային տարբերակների:

Աղյուսակ 3.4

2016թ. ՀՀ ժամանումների և մեկնումների թիվը՝ ըստ տրանսպորտային միջոցների տեսակների¹⁰³

	Ընդամենը	Այդ թվում՝ ըստ տրանսպորտային միջոցների		
		օդային	երկաթուղային	ավտոմոբիլային
Ժամանումներ	2867008	1075966	33731	1757311
Մեկնումներ	2915178	1066808	33193	1815177
Սալդո	-48170	9158	538	-57866

Այսպիսով, չնայած որոշ մեղմացումների՝ Հայաստանի ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ մնում է շատ մտահոգիչ:

3.2 Աշխատուժի միգրացիայի դրական և բացասական կողմերը ՀՀ-ում

ՀՀ աշխատուժի միգրացիայի ազդեցությունը գնահատելու համար հարկ է անդրադառնալ այդ երևույթի սոցիալ-տնտեսական հետևանքներին: Այդ հետևանքները միանշանակ չեն: Խնդիրն այն է, թե արդյոք Հայաստանից միգրացիան նպաստում է աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական աճին, թե բացասաբար է անդրադառ-

¹⁰³ Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ինտերնետային կայք՝ www.smsmta.am

նում երկրի տնտեսական զարգացման վրա: Հայաստանի աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատասխանելու վերոհիշյալ հարցերին:

Հայաստանում գործազրկության բարձր մակարդակի մասին տվյալները (տե՛ս հավելված/գծապատկեր 4, 5) հաստատում են, որ այն միգրանտները, ովքեր Հայաստանում գործազուրկ էին, Հայաստանի տնտեսության համար զուտ կորուստ չեն, չնայած որ ժամանակի ընթացքում դա կարող է փոխվել: Օրինակ՝ Հայաստանում որոշ ոլորտների զարգացման դեպքում կարող է առաջանալ արտերկրի մեկնած մասնագետների պակաս: Հետազոտությունները վկայում են, որ մասնագիտական խմբերից շատերի պարագայում առկա է անհամապատասխանություն աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև: Հայաստանի աշխատաշուկան հաճախ պարզապես չի կարող կլանել ամբողջությամբ առկա աշխատուժը: Երբեմն թվում է, թե այս կամ այն խմբի մասնագետները չափազանց շատ են: Հաճախ էլ խորհրդային ուսումնական հաստատությունների շրջանավարտների որակավորումն այլևս պահանջարկ չունի գործատուների կողմից, իսկ Հայաստանի միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները չունեն պահանջվող հմտությունները¹⁰⁴: ՀՀ-ից արտագաղթողների ճնշող մեծամասնությունը եղել են աշխատանքային ակտիվ տարիքում գտնվող գործազուրկները: Չնայած արտագաղթը ինչ-որ չափով բարելավել է ՀՀ աշխատուժի շուկան, այնուամենայնիվ գործազրկության մակարդակը Հայաստանում դեռևս խիստ մտահոգիչ է: Գործազրկության մակարդակը ցանկացած երկրի, այդ թվում՝ ՀՀ-ի, տնտեսության վիճակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշներից է: ՀՀ-ում գործազրկության մակարդակը նվազեցնելու համար պետք է ստեղծել նոր աշխատատեղեր, իսկ դրա համար անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումային հսկայական միջոցներ, որոնք կապված են մեծ բարդությունների հետ: Պետք է կատարվեն արմատական փոփոխություններ երկրի տնտեսական քաղաքականության մեջ և մշակվեն հանրապետության բոլոր ոլորտների զարգացման իրատեսական համալիր ծրագրեր:

Աշխատուժի միգրացիայի շնորհիվ միգրանտների կողմից տարբեր ուղիներով


¹⁰⁴ St'u Migration and development: Armenia Country, Yerevan 2009 p. 42

փոխանցված ֆինանսական միջոցները կարևոր նշանակություն ունեն դոնոր երկրների տնտեսությունների, այդ թվում նաև մեր երկրի համար: Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո սկիզբ առած Արևելք-Արևմուտք միգրացիան ուղղված է թուլացնելու եկամտի և զբաղվածության կրճատմամբ պայմանավորված տնտեսական լարվածությունն ու ապահովելու լրացուցիչ ֆինանսական ներհոսք դեպի դոնոր երկրներ: Հարկ է նշել, որ երկիր փոխանցվող էմիգրանտների դրամական միջոցները, մեղմելով բնակչության անվճարունակության խնդիրը, նպաստել են 1990-ական թվականների խորը ճգնաժամի հաղթահարմանը: Դրա շնորհիվ կանխարգելվել է սոցիալական լուրջ ցնցումների վտանգը, ինչը և հանդիսացել է պետականության ամրապնդման կարևոր գործոններից մեկը:

Աշխատանքային միգրացիայի ուղղակի հետևանք հանդիսացող դրամական հոսքերը այլ երկրներից դեպի Հայաստան էականորեն նպաստում են աղքատության կրճատմանը, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք կրճատվել են բնակչության դրամական եկամուտների կառուցվածքում:

ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով արտերկրներից ստացվող դրամական փոխանցումների դինամիկան 2005-2015թթ. ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների ներկայացված է Գծապատկեր 3.3-ում: Ընդհանուր առմամբ, մինչև 2009թ. դրամական փոխանցումները աճել են, սակայն կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետ՝ կտրուկ անկում է գրանցվել: Այնուամենայնիվ, սկսած 2010 թվականի տարեսկզբից՝ արդեն իսկ գրանցվել է դրամական փոխանցումների ծավալների ավելացում 2009թ. համեմատ, 2010թ. սկսած՝ դրանք ունեցել են աճի միտում, սակայն 2014թ. վերջին համաշխարհային նավթի գների կտրուկ անկման, որի արտահանումը Ռուսաստանի պետական բյուջեի առաջատար ճյուղերից մեկն է, և այդ երկրի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցների պատճառով ՌԴ-ում սկսվեց ռուբլու տարերային արժեզրկումը, որը հանգեցրեց այդ երկրի տնտեսական զարգացման մակարդակի անկման: Ինչն իր ուղղակի ազդեցությունն է թողել այդ երկրում ապրող և աշխատող մեր հայրենակիցների բարեկեցության վրա: Դա խիստ բացասական ազդեց ՀՀ արժույթային շուկայի վրա, տրանսֆերտները ՌԴ-ից կտրուկ

նվազեցին, ինչը իր հերթին հանգեցրեց լուրջ հիմնախնդիրների մեր երկրի տնտեսության համար: Արժույթի զգալի արժեզրկումը հանգեցրեց նաև տրանսֆերտների ստացողների գնողունակության անկմանը: Հարկ է նշել, որ 2014թ.-ին գրանցվել է դրամական փոխանցումների ծավալի անկում, ինչը շարունակվել է 2015թ.-ին: Այսպես, 2014թ.-ին Ռեսաստանի Դաշնությունից ոչ առևտրային նպատակով Հայաստան է փոխանցվել մոտ 1,5 մլրդ ԱՄՆ դոլար, որը կազմում է տվյալ տարվա ընդհանուր փոփանցումների շուրջ 89%-ը, իսկ 2015թ.-ին ընդամենը 917 միլիոն ԱՄՆ դոլար, այսինքն՝ ընդհանուր փոխանցումների 76%-ը:¹⁰⁵ Կարելի է նշել նաև, որ ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2015թ. խիստ կրճատվել է, ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, որն էլ իր հերթին բերել է ներքին ապրանքաշրջանառության կրճատմանը:




Գծապարկեր 3.3 2005-2015 թթ. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով մուտք եղած տարեկան փոխանցումների դինամիկան ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների (հազ. ԱՄՆ դոլար)¹⁰⁶:

¹⁰⁵ Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am

¹⁰⁶ Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ինտերնետային կայք՝ www.smsmta.am

Սակայն հարկ է նշել, որ վերոհիշյալ ցուցանիշները չեն կարող ճշգրիտ արտացոլել իրական պատկերը: Դրամական փոխանցումների ծավալը իրականում ավելի մեծ է, քանի որ փոխանցումների մի մասն իրականացվում է ոչ ֆորմալ ուղիներով կամ անօրինական էմիգրանտների կողմից, որոնք չեն կարող արտացոլվել պաշտոնական վիճակագրության մեջ: 2005-2015թ.թ. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով կատարված դրամական փոխանցումների հիմնական աղբյուր հանդիսացող երկրների տեսակարար կշիռը ըստ ՀՀ կենտրոնական բանկի տվյալների, ներկայացված է գծապատկեր 3.4-ում: Ընդ որում՝ 2015թ. դրամական փոխանցումների ծավալը կազմել է 1,208,470 հազ. ԱՄՆ դոլար, որից 75.8%-ը՝ ՌԴ-ից, 9.9%-ը՝ ԱՄՆ-ից, 1.5%-ը՝ Ղազախստանից և այլն:



Գծապատկեր 3.4 2005-2015թ. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով ոչ առևտրային նպատակով կատարված դրամական փոխանցումների հիմնական աղբյուր հանդիսացող երկրների տեսակարար կշիռը՝ ըստ ՀՀ կենտրոնական բանկի¹⁰⁷:

Մի կողմից արտաքին միգրացիան հանգեցնում է դրամական փոխանցումների

¹⁰⁷ Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am

ծագման երկրից տնտեսության կախվածության ավելացմանը, այսպես կոչված, «տրանսֆերտային ասեղ»-ի էֆեկտին, իսկ մյուս կողմից, համարվում է աշխատուժ արտահանող երկրներում աղքատության թեթևացման գլխավոր գործոններից մեկը և տնտեսական զարգացման աղբյուր: Չնայած դրամական փոխանցումների դրական ու բացասական ազդեցությունների վերաբերյալ չլուծված բանավեճին՝ ակնհայտ է, որ արտագաղթողների կողմից իրականացվող այդ փոխանցումների քանակը բավականին մեծ է և զարգացող երկրներից շատերի համար հանդիսանում է արտարժույթի ներհոսքի կարևոր աղբյուր:

Ստացվող դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՆԱ-ի մակարդակի վրա և դրանց միջև կապը ներկայացված է կորելացիոն աղյուսակի միջոցով (աղյուսակ 3.5):

Աղյուսակ 3.5

Դրամական փոխանցումների ազդեցությունը ՀՆԱ-ի մակարդակի և զուտ ընթացիկ տրանսֆերտների վրա¹⁰⁸

	ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	Զուտ ընթացիկ տրանսֆերտնե ր (ընթացիկ ԱՄՆ դոլար)
ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	1		
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	0.99997682 8	1	
Զուտ ընթացիկ տրանսֆերտներ (ընթացիկ ԱՄՆ դոլար)	0.91788534 4	0.91581423 5	1

$$Correl(X,Y) = \frac{\sum(x - \bar{x})(y - \bar{y})}{\sqrt{\sum(x - \bar{x})^2 \sum(y - \bar{y})^2}}$$


Գործակիցը հաշվարկվում է երեք փոփոխականներից յուրաքանչյուր զույգի համար՝ ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար), մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) և զուտ ընթացիկ տրանսֆերտներ (ընթացիկ ԱՄՆ դոլար), ինչպես նաև ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) և զուտ ընթացիկ

¹⁰⁸ Տվյալները վերցված են՝ <http://data.worldbank.org/indicator>

տրանսֆերտներ (ընթացիկ ԱՄՆ դոլար): Առաջին զույգի դեպքում կորելացիայի գործակիցը կազմում է 0.999976828, երկրորդի՝ 0.915814235, երրորդի դեպքում՝ 0.917885344: Վերը ներկայացված բանաձևում X , Y նշված փոփոխականների զույգերն են, իսկ $\bar{x}$, $\bar{y}$ այդ նույն փոփոխականների միջին թվաբանական մեծությունները: Երեք գործակիցներից յուրաքանչյուրը հաշվարկվում է Հավելված բաժնի աղյուսակ 1-ում բերված թվային տվյալների հիման վրա: Առաջին գործակցի դեպքում թվային շարքերն են ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ընթացիկ ԱՄՆ դոլար) ցուցանիշների տվյալները, որոնք ներկայացված են բերված աղյուսակի առաջին երկու սյունակներում: Հաշվարկը կատարվում է հետևյալ տրամաբանությամբ նախ հաշվվում են երկու մեծությունների թվաբանական միջինը 1993-2015 թթ. համար, այնուհետ գտնում յուրաքանչյուր տարեթվի համար երկու փոփոխականներից յուրաքանչյուրի՝ միջինից շեղման մեծությունների արտադրյալների գումարը: Սա կազմում է ներկայացված բանաձևի համարիչի մեծությունը: Հայտարարը հաշվարկվում է հետևյալ կերպ. դարձյալ յուրաքանչյուր տարեթվի համար հաշվվում է երկու փոփոխականներից յուրաքանչյուրի՝ միջինից շեղման մեծությունների քառակուսի աստիճանը, ապա դրանց գումարների արտադրյալի քառակուսի արմատը: Ստացված համարիչի և հայտարարի արդյունքները հարաբերում են, որի արդյունքում ստացվում է ներկայացված գործակիցը: Նույն տրամաբանությամբ են հաշվարկված նաև մյուս երկու գործակիցները¹⁰⁹: Ենթադրվում է, որ որքան բարձր է կորելացիայի գործակիցը, այնքան ավելի հավաստի են կապը և կախվածությունը ուսումնասիրվող փոփոխականների միջև: Տվյալ դեպքում երեք գործակիցներն էլ արտահայտում են նշված փոփոխականների միջև կորելացվածության բարձր աստիճան: Ինչպես երևում է կորելացիոն աղյուսակից, զուտ ընթացիկ տրանսֆերտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև (ինչպես նաև ՀՆԱ-ի) կորելացվածության գործակիցը շատ բարձր է, այսինքն՝ տրանսֆերտների ծավալների ավելացմանը զուգընթաց ավելանում է ինչպես ՀՆԱ-ի բացարձակ մեծությունը, այնպես էլ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը: Երեք գործակիցների դեպքում էլ կորելացման աստիճանը ոչ միայն բարձր է, այլ նաև դրական, ինչը ենթադրում է, որ նշված տնտեսական ցուցանիշներից յուրաքանչյուր


¹⁰⁹ Տե՛ս Վ. Դ. Ղալումյան ՀՀ աշխատուժի միգրացիայի տնտեսական ազդեցությունների գնահատումը», ԱՅԼԸՆՏՐԱՆՔ Գիտական հանդես, Հուլիս-հոկտեմբեր, Երևան 2017:

երկուսի միջև կախվածությունը պատկերող կորագծերը պետք է ունենան դրական թեքություն, ինչն էլ պատկերում են ներքոհիշյալ գծապատկերները: Գծապատկերները դարձյալ ստացվել են Հավելված բաժնի աղյուսակ 1-ում բերված թվային տվյալների հիման վրա: Ինչպես զուտ ընթացիկ տրանսֆերտների (ընթացիկ ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի (ընթացիկ ԱՄՆ դոլար) զուգակցումը (ՀՀ, 1993-2015թթ.), այնպես էլ զուտ ընթացիկ տրանսֆերտների (ընթացիկ ԱՄՆ դոլար) և ՀՆԱ-ի (ընթացիկ ԱՄՆ դոլար) զուգակցումը (ՀՀ, 1993-2015թթ.) ներկայացնող կորերն ունեն վերընթաց կորերի տեսք:



Գծապատկեր 3.5 Զուտ ընթացիկ տրանսֆերտների (ընթացիկ ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի (ընթացիկ ԱՄՆ դոլար) զուգակցումը (ՀՀ, 1993-2015թթ.)

Գծապատկեր 3.5-ում ներկայացված է զուտ ընթացիկ տրանսֆերտների (ընթացիկ ԱՄՆ դոլար) և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի (ընթացիկ ԱՄՆ դոլար) զուգակցումների բազմությունները՝ ըստ համապատասխան տարեթվերի: Այսինքն՝ գծապատկերում ներկայացված յուրաքանչյուր կետ իրենից ներկայացնում է համապատասխան տարեթվում արձանագրված ընթացիկ տրանսֆերտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունների կոորդինատային կետի դիրքը: Հաջորդ գծապատկերը կառուցված է նույն տրամաբանությամբ, միայն մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոխարեն դիտարկվում է ՀՆԱ-ի մեծությունը: Ուղիղ գծերը երկու գծապատկերներում էլ ներկայացնում են կետերի տեղաբաշխման ընդհանուր միտումը:



Գծապատկեր 3.6. Ձուտ ընթացիկ տրանսֆերտների (ընթացիկ ԱՄՆ դոլար) և ՀՆԱ-ի (ընթացիկ ԱՄՆ դոլար) զուգակցումը (ՀՀ, 1993-2015թթ.)

Ինչպես երևում է վերը կատարված վերլուծությունից, ՀՆԱ-ի և մեկ շնչի հաշվով տրանսֆերտային փոխանցումների մեծությունների միջև գոյություն ունի դրական կորելացվածության կապ, ինչը նշանակում է՝ տրանսֆերտները նպաստել են տնտեսական աճին: Այս օրինաչափությունը հիմնավորվում է նաև տեսականորեն, որովհետև տրանսֆերտ վճարումները ազդում են բնակչության սպառման մակարդակի վրա, ինչը հետադարձ կապի սկզբունքով խթանում է արտադրությունը և դառնում տնտեսական աճի գործոններից մեկը: Դա առավել ակնառու է ՀՀ տնտեսության համար, որովհետև մեկ շնչի հաշվով տրանսֆերտային վճարումները հարաբերականորեն մեծ թիվ են կազմում: Մեր կողմից կատարված վերլուծության մեջ դիտարկվել են անձնական տրանսֆերտների մեծությունը, այսինքն՝ փոխանցումներ, որոնք կատարվել են ոչ ռեզիդենտ տնային տնտեսություններից ռեզիդենտ տնային տնտեսություններին: Ցանկացած տնտեսության համար նման տրանսֆերտների առկայությունը և մեծությունը կարող է լրացուցիչ ներարկում լինել, որը բարենպաստ ազդեցություն կարող է ունենալ սպառման ծավալների վրա, ինչն էլ դրականորեն կանդրադառնա ՀՆԱ ցուցանիշի վրա: Սակայն մյուս կողմից, անձնական տրանսֆերտների մեծ ծավալները, հատկապես, երբ ՀՆԱ-տրանսֆերտներ հարաբերակցությունը նշանակալի մեծություն է ընդունում, կարող են բացասական բնութագրիչ լինել տվյալ տնտեսության համար, քանի որ նման հարաբերակցությունը

ենթադրում է, որ ներքին արդյունքի զգալի համարժեքն ունեցող արդյունք արտադրվում է ոչ թե տվյալ երկրում, այլ փոխանցվում է արտերկրից: Այսինքն՝ տվյալ երկրի ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարողները (օրինակ՝ որպես աշխատավարձ) եկամուտներ են ստանում ոչ ռեզիդենտ տնտեսվարողներից: Ինչպես երևում է կորելացիոն աղյուսակից, զուտ ընթացիկ տրանսֆերտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև (ինչպես նաև ՀՆԱ-ի) կորելացվածության գործակիցը շատ բարձր է, այսինքն՝ տրանսֆերտների ծավալների ավելացմանը զուգընթաց ավելանում է ինչպես ՀՆԱ-ի բացարձակ մեծությունը, այնպես էլ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը: Այսպիսով, ավելցուկային աշխատուժի միգրացիան օգնել է բազմաթիվ միգրանտների ունենալու ապրուստի միջոց և կատարելու մեծածավալ դրամական փոխանցումներ:

Աշխատուժի միգրացիայի հետևանքով հայ միգրանտները արտասահմանյան երկրներում ձեռք են բերում աշխատանքային փորձ և գիտելիքներ, ծանոթանում են տեխնոլոգիական նորագույն ինովացիաներին և հայրենիք վերադառնում մասնագիտորեն կատարելագործված, ինչպես նաև ավելի բարձր արտադրական մշակույթ և վերջին նորամուծություններով բիզնես կազմակերպելու ունակություններով: Արդյունքում երկիրն անվճար ստանում է բարձր որակավորում ունեցող լրացուցիչ աշխատուժ: Հայաստանի տնտեսության մեջ անհրաժեշտ է կիրառել միջազգային լավագույն փորձը, արտերկրից վերադարձող մասնագետները կարող են մեծապես խթանել տնտեսական զարգացումը և բարելավել մեր երկրում առկա աշխատուժի որակական հատկանիշները:

ՀՀ արդի միգրացիոն գործընթացների հիմնական բացասական հետևանքներն են՝

1. Ժողովրդագրական. մշտական բնակչության թվի աճի դանդաղում և առկա բնակչության թվի նվազում, բնակչության (առավել ընդգծված կերպով գյուղական), ըստ սեռի և տարիքի բաշխման համամասնությունների խաթարման շարունակում՝ վերարտադրողական տարիքի անձանց բացարձակ թվի նվազում, սեռերի հարաբերակցության վատթարացում ու դրանով հանդերձ վերարտադրության գործընթացների բարդացում, բնակչության ծերացում: Արտագաղթի հետևանքով կրճատվել է ոչ միայն ՀՀ-ի բնակչության թվաքանակը, այլև պակասել է երեխաների ծնունդը

(հավված/գծապատկեր 6): 1988թ. համեմատությամբ գրեթե 3 անգամ նվազել է բնական աճը: Լայնածավալ արտագաղթի հետ կապված՝ ՀՀ բնակչության բնական աճի խիստ նվազումը դարձել է ազգային անվտանգության կարևոր խնդիր, քանի որ արտագաղթողները հիմնականում չեն վերադառնում և ձուլվում են այլ ազգերի:

2. 50 տարեկանից բարձր տարիքի քաղաքացիները կազմում են երկրի բնակչության մեկ քառորդը: Նրանց միայն 36,5%-ն է այսօր ապահովված աշխատանքով: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե երկրի բնակչության կազմում 65 և բարձր տարիքի բնակչությունը 7%-ից ավելի է, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացած: 2006-2008 թթ. տարեսկզբի դրությամբ, ՀՀ 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմել է՝ 10.8%, 2009 թ. տարեսկզբին՝ 10.4%, իսկ 2015 թ.՝ 11%: Ընդհանրապես 1997-2016 թթ. ՀՀ բնակչության թիվը նվազել է 21%-ով, Վրաստանինը՝ 19%-ով, իսկ Ադրբեյջանինը ավելացել է 23.1%-ով¹¹⁰:

3. Ըստ 2012-2016 թթ տվյալների Երևան քաղաքի տ/տ 15 և բարձր տարիքի անդամներից 21.3% ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում: Արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 21.5% -ի տեղաշարժերը 2016թ. դրությամբ եղել են ներպետական՝ Երևան քաղաքում, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում, իսկ մնացած 78.5%-ը՝ միջպետական, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ 70.10%-ը Ռուսաստանի Դաշնություն: Ընդ որում հարցվածների մեծամասնությունը, որ մեկնել է ՌԴ և այլ երկրներ, որպես մեկնելու հիմնական պատճառ նշել է աշխատելը, աշխատանք փնտրելը և սեզոնային աշխատանքը¹¹¹:

2012թ.-ից մեկնած և 2016թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած 15 և բարձր տարիքի տ/տ անդամների 71.6%-ը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում, 3%-ը՝ ԱՊՀ այլ երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում կամ օտարերկրյա այլ երկրներում, իսկ 11.6%-ը գտնվել են ք.Երևանում կամ ՀՀ մարզերում: Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում (2012-2016թթ.) արտաքին միգրանտները կազմել են հաշվառման ժամանակ երկրից բացակայած տ/տ անդամների (չվերադարձածների)՝ 87%-ը (մոտ 115 հազ.մարդ), որոնցից կարճաժամկետ

¹¹⁰ Տե՛ս <http://unctadstat.unctad.org/wds/TableViewer/tableView.aspx>

¹¹¹ Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, էջ 105-107:

միգրանտները՝ 4-11 ամիս տևողությամբ երկրից բացակայածները (չեն ներառվել՝ հանգստի, ընկերներին, բարեկամներին այցելության, արձակուրդի, գործնական, առողջական կամ կրոնական ուխտագնացության մեկնածները) կազմել են արտաքին միգրանտների համակցության 2.9%-ը, իսկ երկարաժամկետ միգրանտները՝ մեկ տարի և ավելի ժամկետով բացակայածները՝ 41.6%-ը: Արդյունքում, տվյալները վկայում են, որ 2012թ.-ից մեկնած և 2016թ.-ի դրությամբ դեռևս չվերադարձած 15 և բարձր տարիքի տ/տ անդամ արտաքին միգրանտների միջին տարեկան գնահատականը կազմել է շուրջ 36.500 մարդ:

Աղյուսակ 3.6

2012թ. հունվարի 1-ից միգրացիոն գործընթացներում ներգրավված և 2016թ.

դրությամբ դեռևս չվերադարձած՝ 15 և բարձր տնային տնտեսությունների

անդամները ըստ մեկնելու տարեթվի

Մեկնելու տարեթիվը	Հազար մարդ
2012	55.6
2013	46.3
2014	28.9
2015	36.7

Ինչպես երևում է աղյուսակ 3.6 ից, 2016թ. դրությամբ դեռևս չվերադարձած՝ 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամների թվաքանակն ունի նվազման միտում: Չնայած մշտական բնակչության թվաքանակը աճման միտում ունի 2012թ. (համեմատած 2011թ. հետ), սակայն վերջինս պայմանավորված է միայն բնական աճով, որի մի մասն էլ չեզոքանում է մեխանիկական շարժի բացասական լինելու պատճառով: 2015թ. տարեվերջի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կրճատվել է նախորդ երկու տարիների համապատասխան ցուցանիշի համեմատությամբ՝ կազմելով 2.9 մլն. մարդ:

4. Սոցիալական. աշխատանքային միգրանտների զանգվածի տևական բացակայության պատճառով ընտանիքի կայունության նվազում, ընտանեկան հարաբերությունների խաթարում, սերունդների փոխհարաբերությունների, աճող սերնդի դաստիարա-

կության և ինտեգրման խնդիրների սրում, բնակչության առողջական վիճակին սպառնացող խնդիրներ՝ վարակիչ հիվանդությունների ներկրում և տարածում, արտերկրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ազգային, կրոնական հիմքերով բռնությունների, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու բարձր ռիսկայնություն, Ադրբեջանից և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների և փախստականների սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային ինտեգրացիայի հիմնախնդիրների չլուծվածություն և այլն:

5. Տարաբնակեցման. տվյալ համակարգի համամասնությունների էլ ավելի վատթարացում՝ սահմանամերձ և հեռավոր տարածաշրջանների բնակչության թվաքանակի նվազում, գյուղական և փոքր ու միջին քաղաքային բնակավայրերի տնտեսական և սոցիալական ներուժի նվազում, երկրի բնակչության Երևանում և Երևանամերձ մարզերում կենտրոնացման շարունակ աճ և այլն:

6. Տնտեսական. որակյալ աշխատուժի և կապիտալի անկանոն արտահոսքի պատճառով երկրի տնտեսական ներուժը նվազել է, տնտեսական զարգացման հնարավորությունների և հեռանկարները վատացել են, ներքին աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի միջև անհամապատասխանությունը խորացել է հատկապես մարզային մակարդակներում: Ինչ վերաբերում է որակավորված աշխատուժի արտագաղթի ազդեցությանը Հայաստանի զարգացման վրա, ապա կարելի է եզրակացնել, որ դա եղել և մնում է ամենալուրջ խնդիրը, որը ծանր վնաս է պատճառում երկրի ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտներին: Հայաստանյան ընկերությունների կողմից առաջարկվող աշխատանքային պայմանները և, հատկապես, վարձատրությունը, աշխատուժի միջազգային շուկայում ընդհանրապես մրցունակ չեն: Անկախացման տարիներից ի վեր ՀՀ ամենամեծ կորուստներից մեկը մտավոր ներուժն է, որը ունի երկարաժամկետ դրսևորում, քանի որ որակյալ աշխատուժի պատրաստման վրա կատարվում են երկարաժամկետ ներդրումներ:

Իսկ ովքե՞ր են գնում Հայաստանից և ու՞ր, ինչպե՞ս են վերաբերվում ռեցիպիենտ երկրները մեր բարձրորակ մասնագետներին: Սրանք հարցեր են, որոնք ակնկալում են լուրջ պատասխաններ: Սակայն այստեղ պետք է նշել մի կարևոր հանգամանք, որ այս

բնագավառում կատարված քանակական վերլուծությունները ևս չեն կարող տալ երևույթի ամբողջական պատկերը, քանի որ նույնիսկ երկու խոշոր գիտնականի մեկնումը արտերկիր կարող է կասեցնել գիտության մի ամբողջ ճյուղի հետագա զարգացումը:

Գիտական կադրերի համաշխարհային շուկայում ամենամեծ պահանջարկը ունեն այն ոլորտի մասնագետները, որոնք որոշում են ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները: Դրանց մեջ են մտնում ֆիզիկայի, մաթեմատիկայի, քիմիայի, ծրագրավորման և կենսաբանության մասնագետները: Հենց նման մասնագետներն են հիմնականում հեռանում մեր երկրից: Գրեթե բոլոր զարգացած երկրները վարում են նշված գիտությունների գծով լավագույն գիտնականների ընդունման բարենպաստ քաղաքականություն: Նման քաղաքականության իրականացման գծով առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ը, որին հետևում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Կանադան: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ արտասահմանում գիտնականներին միշտ չէ, որ ընդունում են «գրկաբաց»: Մի կողմից, ընդունող երկրները խթանում են նրանց հոսքը իրենց երկրներ, մյուս կողմից՝ նրանց առջև դրվում են որոշակի սահմանափակումներ: Պատճառն այն է, որ ընդունող երկրի գիտնականների շրջանում մեծանում է դժգոհությունը՝ զարգացող երկրներից ներգաղթած գիտնականների և իրենց միջև առաջացած մրցակցությունից:

Իսկ ովքե՞ր են մնում իրենց հայրենիքում և ինչու՞: Մնացողների մեծ մասը գտնում է, որ իրենք կարող են իրենց գիտական ծրագրերն իրականացնել հայրենիքում և այդ պատճառով պահանջ չունեն մեկնելու արտասահման: Մի մասն էլ գտնում է, որ այս ծանր պայմաններում չի կարելի թողնել հայրենիքը ու հեռանալ: Գիտնականների մի մասն էլ հրաժարվում է էմիգրացիայից ոչ բավարար որակավորվածության, լեզվի չիմացության և ընտանեկան հանգամանքներից ելնելով: Այս պայմաններում մեկնողների մեջ մեծանում է հատկապես երիտասարդ գիտնականների տեսակարար կշիռը:

Գիտնականների արտագաղթը ինտենսիվ է եղել XX դարի 90-ական թվականներին: Ըստ պաշտոնական տվյալների՝ 1992-2002թթ. մեր հանրապետությունից արտագաղթած 691000 բնակչության 29%-ը եղել են բարձրագույն

կրթություն և գիտական աստիճան ունեցող անձինք: Այդ ժամանակահատվածում հանրապետությունը լքել են 3764 գիտության դոկտորներ և թեկնածուներ:

Բավական է նշել, որ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների մեջ ներառված գիտությունների դոկտորների թիվը 2007 թվականին կազմել է 472 մարդ, իսկ 2015 թվականին 457: Գիտությունների թեկնածուների քանակը 2007 թվականին կազմել է 1960 մարդ, իսկ 2015 թվականին 1594 մարդ, այսինքն նվազել է 366-ով: Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը ևս կրճատվել է վերջին հինգ տարիների ընթացքում՝ 89-ից հասնելով 70-ի: Զգալիորեն կրճատվել է նաև ասպիրանտների թվաքանակը: 2007 թվականին այն կազմել է 1414 մարդ, իսկ 2015-ին 1178: Ավելացել են գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը: 2007 թվականին դրանք կազմել են մոտ 6 միլիարդ դրամ, իսկ 2015-ին՝ 11.9 միլիարդ, որից բյուջեի հաշվին կատարված ծախսերը ավելացել են մոտ 1.5 անգամ՝ 6.3 միլիարդից հասնելով 9.3 միլիարդ դրամի¹¹²:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների համար աշխատատեղերը քիչ են, քանի որ դրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնող կազմակերպությունները և գիտահետազոտական ինստիտուտները հիմնականում չեն գործում: Պատահական չէ, որ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը կազմում է 90%-ից ավելին: Գիտնական միգրանտները նախապատվություն են տալիս այն երկրներին, որտեղ կրթություն-եկամուտ կապն առավել տեսանելի է: Այս իմաստով առաջին հերթին պետք է նշել ԱՄՆ-ի օինակը, որտեղ առավել աշխատունակ 25-44 տարիքային խմբի համար 17 տարի և ավելի կրթություն ունեցողների տարեկան եկամուտները շուրջ չորս անգամ գերազանցում են 12 տարուց քիչ կրթություն ունեցողների եկամուտը: Նման օրինաչափություն գոյություն ունի նաև մյուս զարգացած երկրներում:

«Ուղեղների արտահոսքը» այսօր էլ շարունակվում է և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ պետությունը իր ներսում չի ստեղծել անհրաժեշտ պայմաններ

¹¹² Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2016թ. էջ 146-147:

անձի կայացման, նրա մտավոր ներուժի օգտագործման համար:

Չնայած ՀՀ միգրացիայի պետական կարգավորման ոլորտում կատարված դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ միգրացիոն իրավիճակը շարունակում է մնալ խիստ մտահոգիչ: Միգրացիոն հոսքերի ամենաշարժունակ խումբը երիտասարդներն են, ուստի նրանց աշխատանքի տեղավորման հարցը չլուծելու դեպքում այսօր և մոտակա տարիներին նրանք կշարունակեն լքել հանրապետությունը: «Ուղեղների շարունակական արտահոսքը» սպառնում է մեր երկրի միգրացիոն դիրքերի թուլացմանը, ուստի անհրաժեշտ է պետական խիստ վերահսկողություն իրականացնել այն կազմակերպությունների գործունեության նկատմամբ, որոնք զբաղվում են երիտասարդների արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով: Այդ կազմակերպությունների և պետական համապատասխան իրավական մարմինների միջև պետք է ձևավորվեն պայմանագրային պարտավորություններ, որով առաջինները կստանան միգրանտների վերադարձի պատասխանատվությունը: Դա կստիպի նման կազմակերպություններին ավելի մեծ պատասխանատվություն կրել արտագնա աշխատանքի կամ սովորելու մեկնած անձանց նկատմամբ: Բացի այդ, նրանք շահագրգռված կլինեն համագործակցելու ընդունող երկրների միգրացիոն կենտրոնների հետ, կձևավորվի ժամանակավոր միգրանտների մասին տեղեկատվական բազա, որը թույլ կտա նրանց վերադարձն ապահովել պայմանագրային ժամկետներում:

7. Արտագաղթը ՀՀ-ից որոշակի ազդեցություն է ունեցել նաև բնակչության գենոֆոնդի, թվաքանակի, սեռատարիքային կազմի, երեխաների և տարեցների տեսակարար կշիռների, ընտանիքների միջին մեծության, քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի հարաբերակցության, բնակչության շերտավորման և այլնի վրա:

3.3 Միջպետական միգրացիայի կարգավորումը և դրա կատարելագործման հիմնական ուղղությունները ՀՀ-ում

Միգրացիոն իրավիճակի վերլուծությունից երևում է, որ հիմնախնդիրները ենթակա չեն ինքնակարգավորման, և դրանց լուծումը ենթադրում է արդյունավետ միգրացիոն քաղաքականություն: Ավելին, համարժեք և հմուտ պետական միջամտությամբ

յան բացակայությունը ավելի է խորացնում դրանց հետագա սրումը: Այդ իսկ պատճառով էլ ավելի է կարևորվում աշխատուժի միգրացիայի կարգավորումը:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման վրա միգրացիոն գործընթացների բացասական ազդեցությունների կանխարգելումը, ինչպես նաև միգրացիոն տարբեր հոսքերի մեջ ներքաշված խմբերի և անհատների հիմնական իրավունքների իրացումը պայմանավորում են միգրացիոն գործընթացների պետական կարգավորման միասնական ծրագրի մշակման անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացների պետական կարգավորման նպատակներն են երկրի ազգային անվտանգության ու կայուն մարդկային զարգացման պահանջներին համապատասխանող ազգաբնակչության թվաքանակի, ժողովրդագրական իրավիճակի ձևավորման ու զարգացման ապահովումը, ինչպես նաև միգրացիոն գործընթացներում ներառված անձանց իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով միջազգային փաստաթղթերում ամրագրված դրույթների կիրառումը:

ՀՀ միգրացիայի ոլորտի պետական կարգավորման համակարգը 1988-2016թթ.-ի ընթացքում ենթարկվել է էական փոփոխությունների, ինչպես քաղաքական, օրենսդրական և հայեցակարգային, այնպես էլ ինստիտուցիոնալ և օպերատիվ կառավարման մակարդակներում՝ ունենալով որոշակի զարգացումներ: Այնուամենայնիվ, միգրացիոն համակարգի առջև ներկայումս էլ ծառացած են հրատապ և արմատական լուծումներ պահանջող մի շարք հիմնախնդիրներ, որոնց մի մասն անցած քսան տարիների՝ ՀՀ միգրացիոն իրավիճակից բխող հիմնախնդիրներ են, որոնք, պետական կարգավորման նախնական փուլերում լուծումներ չստանալով, փոխանցվել են ներկա փուլ: Հիմնախնդիրների մյուս մասը գլխավորապես առաջացել է վերջին մի քանի տարիներին՝ գլոբալացման և միջազգային ինտեգրացիոն գործընթացների, տնտեսական և աշխարհաքաղաքական նոր իրողությունների ազդեցությամբ, որոնց հրատապությունն ավելի ընդգծվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ:

Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման էությունը այդ գործընթացների զարգացումները վերահսկելի ու նախընտրելի ուղղություններով ապահովելու

համար օրենսդրական բարեփոխումների, նպատակային սոցիալ-տնտեսական ծրագրերի և միջոցառումների իրականացմանն, ինչպես նաև վարչական տարբեր լծակների արդյունավետ կիրառմանն ուղղված իշխանության մարմինների գործողությունների ամբողջությունն է:

Միգրացիոն գործընթացների պետական կարգավորման հիմնարար սկզբունքներն են¹¹³.

- բոլոր միգրանտների իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, այս կամ այն ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,
- Հայաստանում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր անձի՝ երկրի տարածքում ազատ տեղաշարժվելու և սեփական հայեցողությամբ բնակության վայր ընտրելու, երկրից մեկնելու և երկիր վերադառնալու իրավունք,
- միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված օրենքների և օրենսդրական ակտերի, ինչպես նաև հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների իրականացում,
- միգրացիոն հիմնահարցերի լուծման ընթացքում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ջանքերի համատեղում,
- հասարակության ներգրավում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության մշակման ու դրա իրականացման գործընթացներում,
- Հայաստանի հետ բնակչության միգրացիոն հարաբերություններ ունեցող պետությունների հետ իրավահավասար համագործակցության հիման վրա շահերի փոխհամաձայնեցում:
- Հայաստանի Հանրապետության կողմից երկրի սահմաններից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,
- միգրացիոն հոսքերի կարգավորման ընթացքում այլ պետությունների հետ

¹¹³ Տե՛ս «ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ», ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն, Երևան 2010թ.,

փոխշահավետ և իրավահավասար համագործակցություն:

2011թ հունվարի 13-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը: Հայեցակարգով սահմանված են միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության 14 ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է նպատակ, ինչպես նաև նախանշված են այդ նպատակներին հասնելու հիմնորոշ մեխանիզմները և ուղիները: 2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը: Ծրագրով իրականացվելիք 147 կոնկրետ գործողությունները և միջոցառումները միտված են ապահովելու վերոհիշյալ միգրացիոն 14 ուղղություններով հայեցակարգում սահմանված նպատակների իրականացումը¹¹⁴: Այդ հիմնախնդիրներն են՝

1. Միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի և վարչական համակարգի մոտեցում ԵՄ համապատասխան օրենսդրությանը և ԵՄ անդամ երկրների լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքներին՝ հաշվի առնելով ազգային և պետական շահերը:
2. Անձի ինքնությունը հավաստող փաստաթղթերի պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու և ՀՀ քաղաքացիների տեղաշարժվելու իրավունքը հեշտացնելու նպատակով ՀՀ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման խորացում:
3. ՀՀ սահմանային կառավարման համակարգի կատարելագործում՝ պետական սահմանների համալիր կառավարման սկզբունքի ներդրման միջոցով:
4. Միգրացիոն հոսքերի հաշվառման տեղեկատվական համակարգի ձևավորում:
5. Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն:
6. ՀՀ օտարերկրյա քաղաքացիների զբաղվածության պայմանների կանոնակարգում՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքի շուկայի կարիքները և զարգացումները:

¹¹⁴ Տե՛ս «ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգ», ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն, Երևան 2010թ.,

7. ՀՀ-ից սկիզբ առնող անօրինական միգրացիայի կանխարգելում, տվյալ հարցին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործում:
8. Աջակցել օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների վերադարձին, ինչպես նաև հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը:
9. ՀՀ-ում ապաստանի տրամադրման համակարգի կատարելագործում: Օտարերկրյա քաղաքացիներին փախստական ճանաչելու դեպքում նրանց ՀՀ հասարակությանն արդյունավետ ադապտացում:
10. 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության իրականացման շարունակական հետևողականություն:
11. ՀՀ ազգային անվտանգության և երկրի կայուն զարգացման պահանջներին համապատասխանող ներքին միգրացիոն գործընթացների ուղղորդում:
12. Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության հնարավոր զանգվածային տեղաշարժերի կանոնակարգում:
13. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպում և մարդկանց շահագործման զոհերի պաշտպանություն:
14. ՀՀ միգրացիոն իրավիճակի վերլուծության և գնահատման, վարվող միգրացիոն քաղաքականության ընթացքի մոնիտորինգի և արդյունավետության գնահատման հիման վրա վերջինիս օպերատիվ վերանայման ու ճշգրտման համակարգի ներդրում:

Հայաստանի Հանրապետությունում աշխատատեղերի բացակայությամբ պայմանավորված՝ բազմաթիվ քաղաքացիներ մեկնում են օտարերկրյա պետություններ՝ աշխատանք գտնելու նպատակով: Այս հարցի օրենսդրական չկարգավորվածության պատճառով մեկնողների մեծ մասը, շրջանցելով օրենսդրություններով սահմանված երկրների մուտքի ու ելքի կարգը, շատ հաճախ հայտնվում է անօրինական միգրանտի կարգավիճակում խնդիրներ ստեղծելով թե՛ իրենց, թե՛ տեղի իշխանությունների և թե՛ Հայաստանի Հանրապետության համար: Արտագնա աշխատանքներին կազմակերպված բնույթ հաղորդելը և դրանում պետության ակտիվ մասնակցության ապահովումը նպատակ ունեն ոչ միայն կանխել արտագնա աշխատանքի նպատակով քաղաքացի-

իներին խաբելը կամ անօրինական այլ ճանապարհով օտարերկրյա պետություններ փոխադրելը, այլև իրավական հիմքեր ստեղծել արտագնա աշխատանքները կանոնակարգված և ի շահ միգրանտների իրականացնելու համար:

Ինչ խոսք, Հայաստանի քաղաքացիների աշխատանքի իրավունքի իրացման և ներքին աշխատաշուկայում առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության կարգավորման գլխավոր և նախապատվելի ուղին նոր աշխատատեղերի ստեղծումն է:

Միաժամանակ, հաշվի առնելով բավարար քանակությամբ աշխատատեղերի ստեղծման համար պահանջվող խոշոր ներդրումների իրականացման տևական բնույթը, ինչպես նաև առաջիկա տարիներին արտագնա աշխատանքների կարևոր դերը Հայաստանի բազմաթիվ ընտանիքների կենսապահովման գործում, պետական քաղաքականությունը կարճ և միջին ժամկետային հեռանկարում պետք է ուղղված լինի արտագնա աշխատանքներում իր քաղաքացիների ներգրավման նպաստավոր պայմանների ստեղծմանը: Հաշվի առնելով նաև, որ արտագնա աշխատանքներում ՀՀ քաղաքացիների ներգրավումը առաջին հերթին պայմանավորված է օտարերկրյա աշխատաշուկաների պահանջարկով, ուստի առանձնահատուկ կարևորվում է օտարերկրյա պետությունների աշխատաշուկաների ուսումնասիրման հարցը: Հիմնարար սկզբունք է նաև արտագնա աշխատանքի մեկնողների շահերի ու իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների տրամադրումը: Այդ առնչությամբ պետք է արտագնա աշխատանքների կարգավորման հարցերով զբաղվող լիազոր պետական մարմինները՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները ձեռնարկեն իրավական և կազմակերպչական բնույթի միջոցառումներ՝ ուղղված օտարերկրյա պետություններում աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի, օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու պայմանների ուսումնասիրությունների և արտագնա աշխատանքների կարգավորման հարցերով միջկառավարական միջազգային պայմանագրերի կնքմանը: ՀՀ միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգից բխող գործողությունների ծրագրի համաձայն հաստատված է նաև աշխատանքային միգրացիայի կանոնակարգման համար անհրաժեշտ գործողությունները և դրանց իրականացման ժամանակացույցը:

Այսպիսով՝ ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրի համաձայն՝ ոլորտում պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները՝

- աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտի վերլուծություն, բացերի վերհանում, օրենսդրական նախագծերի մշակում, արտագնա աշխատանքի մեկնման գործընթացում ծագող իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորում,
- արտագնա աշխատանքների հետ կապված միջնորդ ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների գործունեության պետական վերահսկողության համակարգի ներդրում, նման կազմակերպությունների և պետական մարմինների միջև գործընկերային հարաբերությունների հաստատում,
- ՀՀ-ի համար աշխատանքային միգրացիայի տեսանկյունից առավել հետաքրքրություն ներկայացնող պետությունների ցանկի ձևավորում, այդ երկրների աշխատաշուկաների ուսումնասիրություն՝ ՀՀ աշխատանքային միգրանտներին արդյունավետ ուղղորդելու նպատակով:
- բնագավառում միջպետական երկկողմ պայմանագրերի կնքման և աշխատանքային միգրանտների շահերին ուղղված գործող միջազգային պայմանագրերին անդամակցելու շուրջ քննարկումների ծավալում՝ նպատակ ունենալով ընդլայնել հանրապետությունից պայմանագրային հիմունքներով արտագնա աշխատանքների մեկնման հնարավորությունները, ինչպես նաև պաշտպանել ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու շահերը,
- ՄԱԿ-ի «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության» մասին կոնվենցիային և ԵԽ-ի «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի» մասին կոնվենցիաներին անդամակցելու ուղղությամբ աշխատանքների իրականացում:
- ՀՀ օրենսդրության ներդաշնակեցում մասնավորապես ԱՄԿ թիվ 143 և 97 կոնվենցիաների պահանջներին,
- ՀՀ-ում աշխատանքային իմիգրացիոն հոսքերի պետական կարգավորման

նպատակահարմար համակարգի, օտարերկրյա քաղաքացիների աշխատանքային թույլտվության համակարգի ընտրություն և ներդրում, առանձին երկրներում առանց թույլտվության գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի հարցերով համաձայնագրերի կնքման շուրջ բանակցությունների վարում,

- ՀՀ-ից սկիզբ առնող անօրինական միգրացիայի կանխարգելման նպատակով դրա հետ կապված վտանգների և հետևանքների վերաբերյալ քաղաքացիների իրազեկում,
- օրինական աշխատանքային միգրացիայի հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ ԵՄ երկրների հետ պարզեցված վիզային ռեժիմի հաստատման համաձայնագրի կնքման ուղղությամբ բանակցությունների վարում ԵՄ «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility and partnership) համատեղ հուշագրի ստորագրում և դրանից բխող միջոցառումների իրականացում:

Միջազգային միգրացիան կարգավորող հայաստանյան օրենսդրությունը մեկ առանձին իրավական ակտում չի ամփոփված: Միգրացիայի տարբեր ոլորտներ կարգավորում են մի շարք օրենքներով և կառավարության որոշումներով:

1993թ. Հայաստանը միացավ Միավորված ազգերի կազմակերպության «Փախստականների կարգավիճակի» մասին 1951թ.-ի կոնվենցիային, սակայն դրան չհետևեց համապատասխան ազգային օրենսդրության մշակումը, ուստիև այս ոլորտի պետական կարգավորման քաղաքականությունը գլխավորապես օպերատիվ կառավարման բնույթ էր կրում: Ինստիտուցիոնալ առումով այս փուլում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Նախ՝ 1990թ. ստեղծվեց փախստականների հարցերով զբաղվող՝ Հայաստանի Հանրապետության առանձին պետական մարմին, որն այնուհետև՝ կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, 1995թ. վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանման: Սակայն, այս երկու կառույցներն էլ չունեին քաղաքականության մշակման և առավել ևս իրականացման գործառույթներ:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ընդունվել են

մի շարք օրենքներ, որոնք, ի թիվս այլ խնդիրների, միտված են կանոնակարգելու նաև միգրացիայի ոլորտին առնչվող խնդիրները: Դրանցից հիմնականներն են՝ «Օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին», «Պետական սահմանի մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին», «ՀՀ քաղաքացիության մասին», ինչպես նաև «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Սկսած 1999 թվականից՝ միգրացիոն հիմնախնդիրներով զբաղվող առանձին պետական մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության (ներկայումս՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն) ստեղծմամբ պայմանավորված, աշխուժացան ոլորտի օրենսդրական կարգավորմանն ուղղված աշխատանքները: 1999 թվականից ի վեր ընդունվեցին բազմաթիվ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտեր: Մասնավորապես, մշակվեց «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը ՀՀ-ում», որը ընդունվեց կառավարության կողմից 2000թ-ի նոյեմբերի 29-ին:

ՀՀ միգրացիայի պետական կարգավորման հաջորդ փուլը սկսվում է 2000թ.-ից: Այս փուլում էականորեն ընդլայնվեց միգրացիայի պետական կարգավորման ոլորտը՝ դուրս գալով միայն փախստականների հիմնախնդիր լուծման շրջանակներից: 2000թ.-ից սկսած դրվեցին միգրացիայի ոլորտում ազգային օրենսդրության հիմքերը: Ընդունվեցին «Փախստականների մասին» (1999թ.)¹¹⁵: «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» (2000թ.)¹¹⁶, «Քաղաքական ապաստանի մասին» (2001թ.), «Պետական սահմանի մասին», «Սահմանապահ զորքերի մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» (2002թ.), «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» (2006թ.), «Օտարերկրացիների մասին» (2006թ.) Հայաստանի Հանրապետության օրենքները, ինչպես նաև միգրացիոն գործընթացների պետական կարգավորման հետ առնչվող մի շարք այլ

¹¹⁵ Տե՛ս Պաշտոնական տեղեկագիրք ՓԲԸ ինտերնետային կայք՝ www.arlis.am

¹¹⁶ Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության ինտերնետային կայք՝ www.smsmta.am

օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հռչակում է, որ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Հայաստանը ստանձնել է տարբեր միջազգային պարտավորություններ, որոնցից ամենանշանակալիները Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Եվրոպայի խորհրդի և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում ստանձնած պարտավորություններն են ¹¹⁷ : Հայաստանի Հանրապետությունը միացավ Միավորված ազգերի կազմակերպության «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ-ի և «Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին» 1957թ-ի, Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ-ի, «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» 1995թ.-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին» 1958թ.-ի, «Զբաղվածության համար միգրացիայի մասին» 1949թ.-ի թիվ 97 /վերանայված/ կոնվենցիաներին և «Աշխատանքային միգրանտների մասին» N86 երաշխավորությանը: Հայաստանը միացել է մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի հիմնական կոնվենցիաներին, որտեղ անդրադարձ կա միգրացիոն խնդիրներին, և որոնք նվազագույն պայմաններ են երաշխավորում ոչ քաղաքացիների և միգրանտների համար: Այդ պայմանագրերն են՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը իր արձանագրությամբ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությանը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիան և «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան»: Այս կոնվենցիաներով սահմանված իրավունքներից են՝ որևէ պետության տարածքում օրինականորեն

¹¹⁷ Տե՛ս Հ.Կաբաելովա,Ա.Մագմանյան,Ա.Երեմյան «Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն օրենսդրության գնահատում», 2007թ., էջ 10

գտնվող յուրաքանչյուր մարդու՝ այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունքը ցանկացած երկրից, այդ թվում՝ սեփականից, մեկնելու իրավունքը, քաղաքացիության իրավունքը, և որևէ այլ պետությանը հանձնված չլինելու իրավունքը, եթե նրան այնտեղ խոշտանգումների վտանգ է սպառնում:

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է դարձել 2001 թ. հունվարի 25-ին և վավերացրել կամ միացել է ԵԽ-ի 50-ից ավելի պայմանագրերի: ԵԽ կողմից միգրացիայի ոլորտում ընդունված «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» կոնվենցիային Հայաստանը առայժմ չի անդամակցել: Հայաստանն անդամակցել է ԵԽ-ի կողմից ընդունված այլ կոնվենցիաների, որոնք այս կամ այն չափով առնչվում են միգրացիային և միգրանտների շահերին: Դրանք են՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիան, «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության» շրջանակային կոնվենցիան: 2005 թ. մայիսի 16-ին Հայաստանը ստորագրել է «Մարդկանց առևտրի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաները պահանջում են, որ պետություններն ակտիվորեն խրախուսեն աշխատանքի ընդունման արդար պրակտիկան և սոցիալական գործընկերների հետ թափանցիկ խորհրդակցությունները, բացառեն խտրականությունը և հավասար վերաբերմունք ցուցաբերեն տվյալ երկրի քաղաքացիների և կանոնավոր աշխատանքային միգրանտների նկատմամբ սոցիալական ապահովությունից օգտվելու, աշխատանքային պայմանների հետ կապված և այլ հարցեր:

ՀՀ-ն առայժմ չի անդամակցել «Աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» և «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատող միգրանտների հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության ապահովման մասին» կոնվենցիաներին: Վերոնշյալ կոնվենցիաներին վավերացումը չափազանց կարևոր է, քանի որ Հայաստանը ակտիվորեն մասնակցում է միգրացիոն գործընթացներին որպես դոնոր երկիր:

Հայաստանում, բացի ՀՀ տարածքային կառավարման նախարարության

Միգրացիոն պետական ծառայությունից, միգրացիայի պետական կարգավորման գործառույթներ են իրականացնում նաև արտաքին գործերի նախարարությունը, ոստիկանությունը, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայությունը:

Ինչպես տեսնում ենք, աշխատուժի միջազգային միգրացիայի ոլորտում պետական օրենսդրական քաղաքականությունը խորապես կատարելագործման կարիք ունի, քանի որ մեր հանրապետության պետական միգրացիոն քաղաքականությունը հիմնականում անտեսում է արտաքին աշխատանքային միգրացիայի խնդիրները, որոնց կանոնակարգումը կասկածի տեղիք չի տալիս, առավել ևս, որ Հայաստանում էմիգրացիոն (առավելապես՝ աշխատանքային) հոսքերը հասել են սպառնալից չափերի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ կատարված հետազոտություններն ու ստացված արդյունքները հիմք են հանդիսացել մի շարք եզրակացությունների և առաջարկությունների համար:

Գլխավ մասշտաբով աշխատուժի միգրացիան ունի տնտեսական հետևյալ դրական հետևանքները՝

- Զբաղվածության աղբյուր: Միգրացիայի նույնիսկ աննշան աճը կարող է դրական ազդեցության ունենալ համաշխարհային տնտեսության վրա՝ նպաստելով մասնավորապես նոր աշխատատեղերի ստեղծմանը: Համաշխարհային բանկի գնահատմամբ 2012-2025 թվականների ընթացքում զարգացած երկրներում գաղթականների թվի ընդամենը 3% աճը կարող է համաշխարհային տնտեսությանը բերել մոտ 350 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտ: «Միգրացիայի աճին զուգընթաց աճում է նաև բնակչության զբաղվածության մակարդակն ու ՀՆԱ-ն» - ասվում է ՏՀԶԿ հաշվետվության մեջ:
- Օտարերկրյա բարձրորակ աշխատուժ: Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգաղթը առաջացնում է տվյալ երկրի տնտեսական արդյունավետության բարձրացում՝ նպաստելով ճյուղային մասնագիտացմանն ու ներդրումների ներհոսքին: Պետք չէ մոռանալ, որ հենց միգրանտներն են հիմնել այնպիսի խոշոր տեխնոլոգիական ընկերություններ, ինչպիսիք են՝ Google, Intel, PayPal, eBay և Yahoo:
- Աշխատանք ոչ տեղացիների համար: Եթե բարձր որակավորում ունեցող միգրանտները նպաստում են տնտեսության դինամիկ զարգացմանը, ապա ցածրորակ օտարերկրյա աշխատուժը զբաղեցնում է աշխատատեղերը, որոնք չեն նախընտրում տեղացիները:

Այս ամենի հետ միասին չի կարելի ուշադրություն չդարձնել այն ծախսերի և ռիսկերի վրա, որոնք առաջանում են մեծամասշտաբ միգրացիայի արդյունքում: Այս պարագայում բարձրանում է նաև գործազրկության մակարդակը, և վերանում է մշակութային ինքնությունը: Նման անցանկալի հետևանքներից խուսափելու համար

կառավարությունները պետք է մշակեն ըստ տարածաշրջանների միգրանտների բաշխման հստակ ծրագիր և միգրացիոն արդյունավետ քաղաքականություն: Միգրացիոն քաղաքականության ընտրությունը կախված է տվյալ երկրի առանձնահատկություններից, միգրացիոն իրավիճակից և միգրացիոն քաղաքականության նպատակներից:

Վերլուծության արդյունքում բացահայտվել են Հայաստանում առկա առավել հրատապ լուծում պահանջող միգրացիոն հիմնախնդիրները, որոնցից առաջինը կարելի է առանձնացնել երկրից սկիզբ առնող ինտենսիվ էմիգրացիոն հոսքերի առկայությունը, որի հետևանքով 1990-ականներից մինչ այժմ, տարբեր փորձագիտական հետազոտությունների համաձայն, Հայաստանից հեռացել և այլ երկրներում բնակություն են հաստատել 700 հազարից մինչև 1.5 մլն մարդ: Այդ խմբի մեջ աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը բավականին մեծ է եղել: ՀՀ-ից արտագաղթած կին միգրանտների 47,8%-ը, իսկ տղամարդ միգրանտների 64,6%-ը եղել են 20-49 տարեկան, այսինքն գտնվել են ծաղկուն աշխատանքային տարիքում¹¹⁸: Խիստ մտահոգիչ է նաև «ուղեղների արտահոսքի» հիմնախնդիրը: Արտագաղթողների մոտ 20 տոկոսը ունեն բարձրագույն կրթություն: Ակնհայտ է, որ աշխատուժի շուկայում գոյություն ունեցող հիմնախնդիրները, մասնավորապես՝ գործազրկության բարձր մակարդակը հանդիսանում են ՀՀ-ից ինտենսիվ միգրացիոն հոսքերի հիմնական պատճառը: Հետևաբար անհրաժեշտ է իրականացնել երկրում ակտիվ զբաղվածության քաղաքականություն: Նոր աշխատատեղերի ստեղծմանը կարող է նպաստել ներդրումների խթանումը, բիզնեսի կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Պետք է մշակել ներքին միգրացիոն տեղաշարժերը՝ որպես երկրից էմիգրացիայի ընդունելի այլընտրանք և բնակչության թվաքանակի ձևավորված անհամամասնությունները մեղմող պետական ծրագրեր, կանխարգելել սահմանամերձ և այլ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների բնակչության շարունակական կրճատումը և խթանել աճը՝ արտոնությունների սահմանման, բնակչության գրավիչ պայմանների ստեղծման, ենթակառուցվածքային և սոցիալական ոլորտների առաջանցիկ զարգացման, վերաբնակեցման ծրագրերի մշակման և իրագործման ճանապարհով:

¹¹⁸ Տե՛ս ՀՀ վերադարձի հոսքերի ուսումնասիրում և գնահատում, Երևան 2010թ.,

Ատենախոսության արդյունքները փաստում են, որ ՀՆԱ-ի և մեկ շնչի հաշվով տրանսֆերտային փոխանցումների մեծությունների միջև գոյություն ունի դրական կորելացվածություն կապ, ինչը նշանակում է՝ տրանսֆերտները նպաստել են տնտեսական աճին: Այս օրինաչափությունը հիմնավորվում է նաև տեսականորեն, որովհետև տրանսֆերտ վճարումները ազդում են բնակչության սպառման մակարդակի վրա, ինչը հետադարձ կապի սկզբունքով խթանում է արտադրությունը և դառնում տնտեսական աճի գործոններից մեկը: Դա առավել ակնառու է ՀՀ տնտեսության համար, որովհետև մեկ շնչի հաշվով տրանսֆերտային վճարումները հարաբերականորեն մեծ թիվ են կազմում: Այսպես, օրինակ, երբ 2014թ. վերջին համաշխարհային նավթի գների կտրուկ անկման, որի արտահանումը Ռուսաստանի պետական բյուջեի առաջատարներից մեկն է, և այդ երկրի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցների պատճառով ՌԴ-ում սկսվեց ռուբլու տարերային արժեզրկումը, որը հանգեցրեց այդ երկրի տնտեսական զարգացման մակարդակի անկման: Ինչն իր ուղղակի ազդեցությունն է թողել այդ երկրում ապրող և աշխատող մեր հայրենակիցների բարեկեցության վրա: Դա խիստ բացասական ազդեց ՀՀ արժույթային շուկայի վրա, տրանսֆերտները ՌԴ-ից կտրուկ նվազեցին, ինչը իր հերթին հանգեցրեց լուրջ հիմնախնդիրների մեր երկրի տնտեսության համար: Արժույթի զգալի արժեզրկումը հանգեցրեց նաև տրանսֆերտներ ստացողների գնողունակության անկմանը:

«Ուղեղների արտահոսքը» կանխելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է գալ այն գիտակցության, որ որակյալ աշխատուժը ամենաթանկ ռեսուրսն է և մեր երկրի զարգացման հեռանկարների հիմնական երաշխիքը: Հետևաբար երկրի կառավարությունը պետք է փորձի առաջին հերթին մշակել և իրականացնել այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը ոչ միայն կմեղմի որակավորված աշխատուժի արտագաղթը, այլև համապատասխան պայմաններ կստեղծի մեր այն քաղաքացիների վերադարձի համար, ովքեր այսօր թե՛ օրինական, թե՛ անօրինական ուղիներով ցրվել են աշխարհի տարբեր երկրներ: Անհրաժեշտ է նաև բարձրացնել կրթության որակը, որպեսզի բուհ ավարտած երիտասարդը իր գիտելիքներով և ունակություններով բավարարի գործատուների պահանջներին: Պետք է մեծացնել գիտական հետազոտությունների և

մշակումների վրա պետական ծախսերի ծավալը՝ հասցնելով նվազագույնը մինչև ՀՆԱ-ի 2.5%-ի, ինչը աշխարհում ընդունված նորմ է: Անհրաժեշտ է բարձրացնել նաև գիտության և գիտական սպասարկման ոլորտում աշխատողների վարձատրության չափը (Հայաստանում այս ցուցանիշը ցածր է անգամ երկրում աշխատավարձի միջին մեծությունից): Աշխատաշուկայում գործատուների կողմից աշխատանքային փորձի առկայության պահանջը խոչընդոտում է երիտասարդ կադրերին ինտեգրվելու աշխատաշուկային: Պետության կողմից կարող են արտոնություններ տրամադրվել այն գործատուներին, որոնք աշխատանքի են ընդունում առանց աշխատանքային փորձի բարձրագույն կրթություն ունցող երիտասարդներին:

Հաշվի առնելով, որ արտագնա աշխատանքներում ՀՀ քաղաքացիների ներգրավումը առաջին հերթին պայմանավորված է օտարերկրյա աշխատաշուկաների պահանջարկով, ուստի առանձնահատուկ կարևորվում է օտարերկրյա պետությունների աշխատաշուկաների ուսումնասիրման հարցը և արտագնա աշխատանքի մեկնողների շահերի ու իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների տրամադրումը: Այդ առնչությամբ պետք է արտագնա աշխատանքների կարգավորման հարցերով զբաղվող լիազոր պետական մարմինները՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, ձեռնարկեն իրավական և կազմակերպչական բնույթի միջոցառումներ՝ ուղղված օտարերկրյա պետություններում աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի, մեր հայրենակիցներին աշխատանքի ընդունելու պայմանների ուսումնասիրությունների և արտագնա աշխատանքների կարգավորման հարցերով միջկառավարական միջազգային պայմանագրերի կնքմանը: Այժմ արտերկրում ՀՀ քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության մեխանիզմները առհասարակ բացակայում են:

Հայաստանից դուրս եկող միգրացիոն հոսքերի ծավալները ճշգրիտ պարզելու տեղեկատվական որևէ համակարգի բացակայությունը, և դրանից բխող տեղեկատվական տարբեր աղբյուրների տվյալների իրարամերժությունը կանխելու համար անհրաժեշտ է կազմակերպել միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմիններում առկա տվյալների բազաների ուսումնասիրություն, ինչպես դրանց ստեղծման և գործունեության կազմակերպման օրենսդրական, այնպես էլ դրանցում

հավաքվող տվյալների ամբողջականության տեսանկյունից միգրացիոն գործառույթներ իրականացնող պետական մարմինների տեղեկատվական համակարգերը ներառել մեկ միասնական համակարգում, մշակել և իրականացնել այդ համակարգի ներսում տեղեկատվության փոխանակման կատարելագործման մեխանիզմներ, մշակել այլընտրանքային աղբյուրներից միգրացիային առնչվող տեղեկատվության ստացում, այդ թվում՝ 2-3 տարի պարբերականությամբ միգրացիոն հոսքերի ընտրանքային հետազոտություններ: ՀՀ քաղաքացիների վերադարձին աջակցող ինտերնետային տեղեկատվական համակարգերի հետագա կատարելագործումը հնարավորություն կընձեռի այդ անձանց անմիջականորեն կապվելու Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմինների մասնագետների հետ և իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստանալ արագ և հավաստի պատասխաններ:

ՀՀ սահմանային կառավարման համակարգի կատարելագործման՝ օրինական մուտքն ու ելքը հեշտացնող և անօրինական մուտքն ու ելքը դժվարացնող համակարգի ճշգրիտ գործունեության համար անհրաժեշտ է ընդլայնել և ամրապնդել սահմանային կառավարման մարմինների ներգերատեսչական և միջգերատեսչական համագործակցությունը, կազմակերպել այդ մարմինների գործունեությունը փոխհամաձայնեցման և փոխլրացման սկզբունքով՝ սահմանահատումների վրա ծախսվող ժամանակը կրճատելու և գործընթացն ավելի պարզ դարձնելու նպատակով, սահմանային հսկողություն իրականացնող բոլոր միջոցառումների ընթացքում պաշտպանել մարդու իրավունքները և ապահովել այդ ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունները:

Ուշադրության է արժանի նաև Էմիգրացիոն հոսքերում անօրինական միգրանտների բավականին մեծ տեսակարար կշիռը և Հայաստանից ծնունդ առնող անօրինական միգրացիայի կանխարգելման հիմնախնդիրը: Այդ առնչությամբ օրենսդրական դաշտի կատարելագործման համար անհրաժեշտ է բարձրացնել դրա վտանգների և հետևանքների մասին բնակչության և նրանց հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների իրազեկության մակարդակը, այս հարցում ուսումնասիրել զանգվածային լրատվամիջոցների դերը, օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներին անկանոն միգրանտի կարգավիճակում հայտնվելու կանխարգելման նպատակով պետք է լուծել նրանց անձը և քաղաքացիությունը

հաստատող փաստաթղթերի հետ կապված խնդիրները: Անհրաժեշտ է օտարերկրացիների՝ ՀՀ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն իրականացնելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգը և պայմանները խախտելու համար պատասխանատվությունը համապատասխանեցնել ԵՄ-ի գործող չափանիշներին:

Երկրում չի գործում միգրացիոն գործընթացների կարգավորման միասնական համակարգ: Տարբեր մարմինների կողմից իրականացվող գործառույթները երբեմն կրկնում են միմյանց, և բացակայում են փոխադարձ հաղորդակցության մեխանիզմները: Միգրանտն առնչվում է տարբեր կառույցների հետ, իսկ միջազգային փորձը և ցույց է տալիս, երբ օտարերկրացիների հետ կապված բոլոր հարցերով զբաղվում է մեկ միասնական կառույց. դա ամենաօպտիմալ կառավարման ձևն է:

Անհրաժեշտ է նաև հստակեցնել միգրացիան կարգավորող օրենսդրական դաշտը: Ընդհանրապես տպավորություն է ստեղծվում, որ մտավախություն կա, թե էմիգրացիայի ոլորտի կարգավորումը կնշանակի արտագաղթի խրախուսում: Սակայն մենք հակառակն ենք կարծում, միգրացիայի կարգավորումը կնպաստի երկրից և դեպի երկիր միգրացիոն հոսքերի կանոնակարգմանը: Անհրաժեշտ է լրացնել օրենսդրական բացերը: Չկա իմիգրացիան կարգավորող հստակ օրենսդրական ակտ, որով կսահմանվեն օտարերկրյա այն քաղաքացիների խմբերը, որոնց իմիգրացիան դեպի մեր երկիր նախընտրելի է: Ներկայումս ՀՀ-ում օտարերկրացիների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին», «Փախստականների մասին» և «Քաղաքական ապաստանի մասին» օրենքներով: Այսպիսով, ՀՀ գործող օրենսդրությամբ կարգավորվում են Հայաստան ժամանակավոր մուտք գործող, այդ թվում՝ ապաստան հայցող օտարերկրացիների մուտքի, կացության և ելքի հետ կապված հարաբերությունները, իսկ մշտական նպատակով ՀՀ ժամանող օտարերկրացիների կամ իմիգրանտների հետ կապված հարաբերությունները օրենսդրորեն սահմանված չեն: Ընդհանրապես աշխատանքային միգրացիան կանոնակարգող օրենսդրական դաշտը անգամ ձևավորված չէ: ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության կողմից մշակվել է «Արտագնա աշխատանքների

կազմակերպման մասին» օրենքի նախագիծը, որը առայժմ ներառված չէ ԱԺ օրակարգում:

Նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումները միտված են ապահովելու միգրացիան կանոնակարգող ՀՀ օրենսդրական դաշտի համապատասխանությունը ԵՄ օրենսդրությանն ու լավագույն ինստիտուցիոնալ կառուցվածքներին, միգրացիոն մոնիթորինգի, իրավիճակի վերլուծության և գնահատման համակարգի ներդրմանը: Ներկայումս խիստ հրատապ է մշակել և ընդունել արտաքին աշխատանքային գործունեությունը կանոնակարգող մի շարք կարևորագույն օրենսդրական ակտեր և օրենքներ, որոնցից առանձնացնենք «ՀՀ քաղաքացիների մուտքի և ելքի մասին», «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» և «Իմիգրացիայի մասին» օրենքները:

- «ՀՀ քաղաքացիների մուտքի և ելքի մասին» օրենքով պետք է հստակեցվեն ՀՀ քաղաքացու՝ երկրից հեռանալու և վերադառնալու օրենսդրական հարցերը, սահմանվեն այն բացառիկ դեպքերը, երբ ՀՀ քաղաքացիների ելքը երկրից կարող է ժամանակավորապես կասեցվել:

- «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» օրենքի նախագծով պետք է կարգավորվեն արտագնա աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները, սահմանվեն արտագնա աշխատանքների կազմակերպման հիմունքները, մեկնելու կարգն ու պայմանները, այդ բնագավառում պետական մարմինների և լիցենզավորված կազմակերպությունների իրավասությունները:

- Խիստ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու օրենք «Իմիգրացիայի մասին», որը պետք է կարգավորի մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանող օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ ծագումով հայ օտարերկրացիների մուտքի, կացության և ելքի հետ կապված իրավահարաբերությունները: «Իմիգրացիայի մասին» օրենքի նախագիծը պետք է ամբողջականացնի այդ հարցին առնչվող օրենսդրական դաշտը: Սակայն օրենքի ընդունումը չպետք է միայն պայմանավորված լինի օտարերկրացիների վերաբերյալ միջազգային պրակտիկայում ընդունված չափանիշներին:

Աշխատուժի միջազգային միգրացիան ռեցիպիենտ և դոնոր երկրների

տնտեսական և սոցիալական զարգացման վրա ունենում է երկակի ազդեցություն: Ընդ որում, ռեցիպիենտ երկրների վրա որպես կանոն այն ունենում է դրական ազդեցություն, իսկ դոնորների վրա՝ ավելի շատ բացասական: Վերլուծելով դոնոր երկրների վրա աշխատուժի միջազգային միգրացիայի ունեցած ազդեցությունը, ինչպես նաև ՀՀ սոցիալ-տնտեսական, ֆինանսական ու քաղաքական իրավիճակը՝ առավել նպատակահարմար ենք համարում պետության կողմից այս երևույթի կարգավորման գործում ակտիվ միջամտությունը: Այսինքն՝ պետք է մշակել միգրացիոն քաղաքականություն, որով հնարավոր կլինի վերահսկել և այնպես կազմակերպել աշխատուժի ժամանակավոր արտահանումը, որ դրանից առավելագույնս շահեն թե՛ պետությունը, թե՛ միգրանտները: Վերջին տարիներին առավել գերիշխող են դառնում սոցիալական լարվածության, հուսալքության, վաղվա օրվա նկատմամբ հավատի կորստի հետ կապված գործոնները: Այդ հիմնախնդրի խորացումը բնավ Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական բնականոն ու ներդաշնակ հեռանկարների մասին չի խոսում: Պետության կողմից բավարար չափով ուսումնասիրված չեն միգրացիոն գործընթացի մասշտաբներն ու խորությունը, չեն գնահատվել դրանց հնարավոր հետևանքները, արդյունքում՝ Հայաստանում աշխատուժի միջազգային միգրացիան ծրագրավորված քաղաքականության օբյեկտ չի հանդիսանում: Սեր կարծիքով միգրացիոն, այդ թվում՝ ժողովրդագրական հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն այդ գործընթացների արդյունավետ կառավարման միջոցով, որի շրջանակներում հիմնական շեշտը պետք է դրվի խոշոր ռեմիգրացիոն հոսքերի ապահովման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, «ՀՀ-ն միջազգային հարաբերությունների համակարգում», Երևան, 2002թ., 432 էջ
2. Աշոտ Մարկոսյան, Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան, «Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ձեռնարկ երկու մասով» Մասն. խմբ.՝ Ատոմ Վարդանյան. - Եր.: ԵՃՇՊՀ, 2012. Մաս 2.- 640 էջ:
3. Գ. Ս. Աղաջանյան, «Արտագաղթի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում», «Բանբեր», ԵՊՀ, թիվ 2, Երևան 2005, էջ 31:
4. Գ. Եգանյան, «ՀՀ բնակչության միգրացիոն իրավիճակը, գերակա խնդիրներն ու դրանց լուծման մեխանիզմները», Երևան, 2004թ.:
5. Գ. Եգանյան, «Միգրացիոն իրավիճակը ՀՀ-ում», Ֆինանսներ և էկոնոմիկա, 2004, N12-13:
6. Դ. Գալոյան, Համաշխարհային տնտեսության ժողովրդագրական հիմնախնդիրը և Հայաստանի Հանրապետությունը // Բանբեր ՀՊՏՀ, Երևան 2013 [4], էջ 38-45:
7. Զ. Թադևոսյան, Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիայի փոխազդեցության հիմնախնդիրները (ՀՀ նյութերով) // Ը.00.06 «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2007, 313 էջ:
8. Զ. Թադևոսյան, «Կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիա», Երևան, «Տնտեսագետ», 2005թ., 263 էջ:
9. Լ. Ասլանյան, «Բնակչության միգրացիա», Երևան, 2011թ.:
10. Լ. Դեմարե, ԱՄԿ Աշխատավորների գործունեության բյուրո (ACRTAV), Աշխատանքի միջազգային գրասենյակ, «Արժանապատիվ աշխատանք որոնելիս, աշխատանքային միգրանտների իրավունքները», Երևան, 2010թ., 132 էջ
11. Կ. Ստեփանյան, “Աշխատանքի շուկան որպես ՀՀ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն գործոն”, Երևան. 2006թ., էջ 69-78:
12. Հ. Կաբելետլա, Ա. Մազմանյան, Ա. Երեմյան, ՀՀ-ում միգրացիոն օրենսդրության

գնահատում, Երևան, 2007թ., 87 էջ:

13. Ռ. Եգանյան, Կ.Կույումջյան, «Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները», Եվրասիա հիմնադրամի «ՀՌԿԿ-ՀԱՅԱՍՏԱՆ» ծրագիր, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Երևան, 2004թ., 63 էջ:
14. Վ. Ե. Խոջաբեկյան, «Հայաստանի բնակչության վերարտադրությունը XI-XX դարերում և XXI դարի շեմին», Երևան, 2003թ., 480 էջ:
15. Վ.Դ. Ղալումյան «Ուղեղների արտահոսքի համընդահանրական բնույթը արդի ժամանակաշրջանում», Բանբեր ՀՊՏՀ 2013(3) Երևան 2013, էջ 133-140:
16. Վ.Դ. Ղալումյան «ՀՀ աշխատուժի միգրացիայի կարգավորման գերակա խնդիրները և դրանց լուծման ուղիները», Բանբեր ՀՊՏՀ 2014 (1) Երևան 2014, էջ 131-138:
17. Վ.Դ. Ղալումյան «Աշխատուժի միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա», Ֆինանսներ և էկոնոմիկա, 1(163) Երևան 2014, էջ 53-56:
18. Վ.Դ. Ղալումյան «ՀՀ մասնակցությունը բնակչության միջպետական գործընթացներին» Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, 2012, էջ 16-24:
19. Վ.Դ. Ղալումյան «Գլոբալ հիմնախնդիրների դրսևորումները ՀՀ-ում» «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ուսանողի աչքերով» Երևան 2010, էջ 139-142:
20. Վ.Դ. Ղալումյան ՀՀ աշխատուժի միգրացիայի տնտեսական ազդեցությունների գնահատումը», ԱՅԼԸՆՏՐԱՆՔ Գիտական հանդես, Հուլիս-հոկտեմբեր, Երևան 2017, էջ 84-91:
21. «ՀՀ բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը» ՀՀ կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչություն, Երևան, 2004թ., 21 էջ:
22. ՀՀ-ում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն, գնահատման առաքելության զեկույց, Երևան, 2008թ-ի մարտ., 118 էջ:
23. ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն: Գիտահետազոտական աշխատանք.- Երևան, 2010թ., 199 էջ:

- 24.«Արտագնա աշխատանքային միգրացիա: Գնահատականներ և մտորումներ»
Ամբերդ հետազոտական կենտրոն, Երևան, 2014թ., 80 էջ:
- 25.Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2106, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017 թ., 552 էջ:
- 26.«Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2016», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017թ. 157 էջ:
- 27.ՀՀ ԿԲ Տեղեկագիր, 2017, ապրիլ 4(224): 88 էջ
- 28.ՀՀ Կառավարության ընդունած 2008-2021թթ. «Կայուն զարգացման ծրագիր», Երևան, 2008թ., 216 էջ
- 29.2002-2008թթ. Հայաստան վերադարձած միգրանտների հետազոտություն, Երևան 2008թ. 139 էջ
30. ՀՀ-ում 2010-2012թթ.ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման հայեցակարգ, Երևան, 2010թ., 109 էջ
- 31.ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման պետական ծրագիր, Երևան, 2010թ.:
- 32.«ՀՀ-ի աշխատանքային միգրացիա» զեկույց, ՀՀ ԱՎԾ 2010թ.:
33. Համաշխարհային զեկույց «Միգրացիայի ապագան» Երևան 2010թ.:
- 34.Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումներ, ԱՄԿ, Երևան, 2009թ., 99 էջ
- 35.А.И. Евдокимов, "Международные экономические отношения", Москва 2014, 656 стр.
- 36.А. Киреев, "Международная макроэкономика", Москва, 2014, 592 стр.
- 37.Алешковский И.А., Иммиграционная политика и экономическое развитие стран принимающих мигрантов, МЭМО.
- 38.Боргулев М., Миграционная политика в "иммиграционных странах": Канада, Австралия,Новая Зеландия, МЭМО.
- 39.Браун Э. Нуждаемся ли мы в массовой иммиграции? (BROWNE A. Do we need mass immigration? The economic, demographic, environmental, social & developmental arguments against large-scale net immigration to Britain. – L.:

- CIVITAS, 2003. – VI, 153 р. Опубликовано в РЖ “Экономика” №1 2005, с. 153-161.) //Демоскоп Weekly. 2006. № 243 – 244.
40. Г. Багратян, Основы геоэкономики (мегаэкономики) // ЕКОномика-приложение, Ереван 2010, 34 стр.
41. Г. Багратян, Мегаэкономика и глобальные экономические проблемы // Учебно-методическое пособие, РАУ, Ереван 2013, 249 стр.
42. Г. Г. Гольдин "Миграция насиления: проблемы политико-правового регулирования", Москва, 2002. 336 стр.
43. Е.С. Аكوпова, О.И. Воронкова, Н.А.Гавриленко, "Мировая экономика и международные экономические отношения", Ростов на Дону, 2000, 400 стр.
44. Е. Ф. Авдокушин, "Международные экономические отношения", Москва "Юрист", 2001, 196 стр.
45. И. П. Фаминский, "Международные экономические отношения", учебник, Экономист, 2004. Фомичев В. И Международная торговля // Учебник, Москва ИНФРА М., 2000, 496 стр.
46. Майбуров И. "Эффективность инвестирования в человеческий капитал в США и России". Журнал МиМО, 2004, N 4, с.34.
47. М. Н. Осьмовой, А.В. Бойченко, "Глобализация мирового хозяйства", Москва, 2006, 376 стр.
48. Михайлушкин А.И., П.Д. Шимко, Международная экономика, Москва, 2002, 336 стр.
49. Молодикова И., Иммиграция в страны Европейского Союза.
50. Н. А. Миклашевская, А.В. Холопов, Международная экономика, Москва, 2004, 191 стр.
51. П. Штомпка, "Социология социальных изменений", Москва, 2004, 416 стр
52. Рыбалкин В.Е., Международные экономические отношения, Москва, 2012 , 647 стр
53. Рофе А.И., Рынок труда, Москва, 2003. 400 стр.

- 54.С.В Рязанцев, М.Ф.Ткаченко"Мировой рынок труда и международная миграция"Москва, 2010, 303 стр.
- 55.Стрельцова Я., Франция и проблема интеграции мигрантов, МЭМО, 2005 N9 69 стр.
- 56.Сапего Г., Иммигранты в Западной Европе, МЭМО, 2006, N9 50-58 стр.
- 57.Цапенко И., Движущие силы международной миграции населения, МЭМО, 2007. N3 3-14 стр.
- 58.Европейская конвенция о правовом положении рабочих-мигрантов СДСЕ №:093, <http://conventions.coe.int/Trcaty/rus/Treaties/Html/093.htm>
- 59.МОСТЫ между торговлей и устойчивым развитием, Выпуск 8, декабрь,2009, Россия на мировом рынке труда и денежных переводов мигрантов "http://tradc.ecoaccord.org/ bridges/0809/0809.pdf
60. Massey D.S. "Social Structure, Household Strategies and the Cumulative Causation of Migration Population" Index 56. No. 1 (Spring, 1990), pp. 3-26
61. Massey D.S., Graeme S.A. and others. "Theories of international Migration: A Review and Appraisal". Population and Development Review. Vol. 19, No 3 September 1993. pp 431-466
- 62.Morawaska E. "The Sociology and Historiography of immigration" in Virginia Yans-McLaughlin (ed.), Immigration Reconsidered: History, Sociology, an Politics, New York: Oxford University Press, 1990. pp 187-240
- 63.Portes A. and Walton J., "Labour, Class and International System. New York: Academic Press, 1981. 92 p
- 64.Ravenstein E. "The Laws of Migration; Journal of the Statistical Society", June 1889. Journal of the statistical society 48: pp 167-227
- 65.Samuelson P. A. and William D. N. "Economics". 19thEdition, McGraw Hill. International Edition 2009. 744 p
66. Sassen S. "The Mobility of Labour and Capital: a Study in Interanational Investment and Labour Flow", Cambridge University Press, Cambridge, 1988. 224p
- 67.Smith A., "Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations", Lomdon,

- Strahan/Candell, 1776 53p
68. Stark O., Taylor J., and Yitzhaki S, "Remittances and Inequality", *The Economic Journal* 96 (383), 1986., 722-740pp
 69. Stark O. and Yitzhaki " Labour migration as a Response to Relative Deprivation", *Journal of Population Economics* 1 (1), 1988. 57-70pp
 70. Stark O. and Taylor J., "Migration Incentives, Migration Types: The Role of Relative Deprivation", *The Economic Journal* 101, 1991.
 71. Stark O., "The migration of Labor". Cambridge, Basil Blackwell. Long does it Last?", *Social Science Quarterly* 65, 1991. 1163-1167 pp
 72. Taylor J. Differential Migration, Networks, Information and Risk", *Research in Human Capital and Development: Migration, Human Capital and Development* 4, 1986.
 73. Wallerstein, I., *The Modern World System, Capitalist Agriculture and the Origins of the European World Economy in the Sixteenth Century*, New York: Academic Press, 1974, 440 p
 74. "Brain Drain" and the global mobility of High skilled talent. World Bank, 2008, 6 p
 75. Department of Economics and Social Affairs, *International Migration Report 2002*, UN, N.Y. 2002, p. 1
 76. *Estimates of the Unauthorized Immigrant Population Residing in the United States: January 2010*, 7p
 77. *Human Development on the move*, Human development report, 2009, p. 2
 78. *International Migration Report 2002*. Geneva, 2002, p. 15.
 79. *Labor Mobility and the Integration of European Labor Markets*, Prof. Dr. Klaus F. Zimmermann, April 2010, 22 p.
 80. "Migrations and Development", *Armenia Country Study*, ILO 2008, 106 p.
 81. *Migration and Remittances Factbook 2016, Advanced Edition*, World Bank, 2017, 275p.
 82. *Migration and Development Brief 27, Recent Development and Outlook*, Migration and Remittances Team, Development Prospects Group, World Bank, 2017 35 p.
 83. Norwegian Refugee Council-Internal Displacement Monitoring Center's Internal

- Displacement: Global Overview of Trends and Developments in 2008 93 p.
84. Population of foreign citizens in the EU27 in 2009, Eurostat Newsrelease, 4 p.
85. P. R. Krugman and M. Obstfeld, International Economics: Theory and Policy (10th Edition) (Pearson Series in Economics), Prentice Hall; 10 edition 2014, 792 p.
86. R. Carbaugh International Economics (Upper Level Economics Titles) 16th Edition, South-Western College Pub; 16 edition, 2016, 554 p.
87. R. Carbaugh International Economics (Upper Level Economics Titles) 16th Edition, South-Western College Pub; 16 edition, 2016, 554 p.
88. "Study of Savings and Remittances Behavior Among Armenian migrants and Their Families", IFAD, 2007 34 p.
89. Sobotka T. The rising importance of migrants for childbearing in Europe //Demographic Research. 2008. Vol. 19. Article 9. pp 225-248
90. T. Pugel, International Economics (McGraw-Hill Series in Economics), McGraw-Hill Education; 16 edition, 2015, 800p.
91. United Nations' Trends in Total Migrant Stock: The 2008 Revision, 13 p.
92. Աշխատանքի միջազգային կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.ilo.org
93. Համաշխարհային բանկի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.worldbank.org
94. ՀՀ Կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am
95. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պաշտոնական ինտերնետային կայք՝ <http://employment.am>
96. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.mss.am
97. ՀՀ ԱՎՕ պաշտոնական ինտերնետային կայք՝ www.armstat.am
98. «People in Need» չեխական ընկերության հայաստանյան մասնաճյուղի ինտերնետային կայք՝ www.migrant.am
99. ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական

ծառայության ինտերնետային կայք՝ www.smsmta.am

100. Միգրացիայի միջազգային կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայք՝ www.iom.int

101. «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ ինտերնետային կայք՝ www.arlis.am

102. «Տունդարձ» ծրագրի ինտերնետային կայք՝ www.backtoarmenia.com/